



ԴՄՈՐՆ

ԸՄՍԵԳԻՐ

Գրականություն
և Արվեստ



ԺԳ. ՏԱՐԻ

ԹԻԻ 11


ՆՈՅԵՄԲԵՐ 1974



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

* * *	Յոքելեան՝ Մ. Իշխանի
Մ. Իշխան	Փոսը
Բ. ՓԱՓԱԶԵԱՆ	Մ. Իշխան՝ հպանցիկ ակնարկով
ԵՒ. ՊՈՅԱԶԵԱՆ	Բանաստեղծը
Մ. Իշխան	Նոր շինուող տունը
Պ. Ս.	Եւ յուշ մը՝ անոր մասին
Ա. ՆՈՒՐԵԱՆ	Պայծառ ճակատով բանաստեղծը
Ս. ՊԱՐԱՔԱԹ	Սպաննեցէ՛ք Բռնաշքան (հայացուց՝ Ս. Կիրակոսեան)
Ա. ՀԱՅԿԱԶ	Ի ճշ կայ անդենականին մէջ
Ա. ԳԱՐԱԼԷՔԵԱՆ	Երգ՝ հաղորդակցութեան անհաղորդ վայրկեանին
»	» Տեղատուութիւն եւ մակընթացութիւն
»	» Բառը
»	» Հրայրֆի պահեր
Յ. ՈՇԱԿԱՆ	Մաքիկ Մելիֆխանեան
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Շրջագարձ
»	» Բեւեռային օր
»	» Լուսնի լոյս
»	» Հրահաւ
»	» Բանաստեղծութիւն՝ երեք շարժումներով
* * *	Անտրէ Սինեալսկի
Լ. ԼԱՊԷՑ	Գրողներու ճակատագիրը յեղափոխութիւններու ընթացքին (հայացուց՝ Ք. Ճինպաշեան)
Ն. ԶԱՐԻՈՒՏԵԱՆ	Ֆրանսական ժամանակակից բանաստեղծութիւնը
Յ. ՆԱԳՈՒԼԵԱՆ	Ռուտլֆ Խաչատրեան
* * *	Անկատար համահաւաք
* * *	Շահնուրի պարամով
* * *	Բաղդատական քարգմանութիւն

Բազմ



ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԺԳ. ՊԵՐԻ. ԻՒՆ 11

ՆՈՅՄԱՐԻ 1974

ՊԵՐՈՒՄ



ՅՈՐԵԼԵԱՆ

Մ. ԻՇԽԱՆԻ

Բնագրի մասին համար ընթերցողին մեծը հասն օրերուն, քաղաքի մեծագույն օրհանգիստին ինկուրյի մէջ, Համազգային Կերպարանի Վարչութեան նախագահութեամբ՝ Համազգային շափով մը պիտի տեսնուի բանաստեղծ Մ. Իշխանի գրական ու մշակութային գործունէութեան 40ամեակը:

Մ. Իշխանի երեսնական թուականներու կենսուն սկսաւ երեւիլ մեր մամուլին մէջ եւ առաջին օրէն շահեցաւ համարումը ընթերցող Հասարակութեան, որ հարապաշտ բանաստեղծին էջերուն մէջ զգաց իր անգարմանիկ կորուստներուն, կիզող կարօտներուն, մորմուռներուն անգործարժէք, մասուցում՝ ցեղային շնորհներու հանգչումով մը, ներքին ջերմութեան, պաշտութեան ու մարդկայնական տեսիլներու ընդհանուր ոլորտի մը մէջ:

Իր ժողովուրդի մայր զգայութիւններէն առաւ Մ. Իշխան իր սնունդը, հաշի, սուս, օճախի, սիրոյ, բարութեան, ստեղծումի, կառուցման ու վերացման ետեւ ընաղղներէն ու նոր Թրքիոնէր, զոյներ, արիւն ու խորհուրդ հաղորդելով անոնց՝ վերադարձուց նոյն ժողովուրդին, որ ահաւասիկ սիրով, խանդով, հոգեկան համընդհանուր կշռոյթով մը կու գայ յայտնելու իր երախտադիտութիւնը իրեն, իր երգիչին, խղճմասանքի իր մայրին:

Բնագրի մէջ կ'ողջունէ Մ. Իշխանի յարկանքը, ընթերցողին յանձնելով յարկաւոր բանաստեղծին անտիպ չերթուած մը (ԷՓՈՍԵՐ) եւ սրտով գրուած քանի մը վկայութիւններ՝ անոր գրականութեան մօտիկ անձներէն:

Մ. Ի Շ Խ Ա Ն

Փ Ո Ս Ը

Փոս մը ահա, ոչ շատ խորունկ, ոչ շատ մեծ,
 Փոս մը բացուած
 Սրտին վրայ մայր հոգին
 Եւ փոսին մէջ՝ ոսկի ճանաչն արեւին...
 Կեանքի բաժակ եւ յորդագեղ կեանքի ալ
 Գիրկն այդ հոգէ, տաք, պայծառ,
 Պիտի դառնայ յանկարծ գուր,
 Մահուան խռոչ անյատակ:
 Գորովալից ո՛չ մէկ աչք
 Պիտի կրնայ տեսնել ծլած գարնան հետ
 Այնտեղ ինկող հունտը բարդ:
 Հունտը խռում, բանիմաց,
 Տաքուկ փոսին մէջ այդ քաց
 Պիտի դառնայ բազմախորհուրդ առեղծուած...
 Գուցէ ճեղքէ փոսին յատակը մթին,
 Գուցէ արմատ արձակէ
 Դէպի երկրին սիրտը գոց,
 Գուցէ հասնի տարտարոս եւ հոն գտնէ հուր ու բոց,
 Բայց ո՛չ մէկ ժամ, ո՛չ մէկ աչքի դէմ կարօտ
 Պիտի դառնայ ծլարձակում յաղթական:
 Երկինքին դէմ լուսավառ
 Եւ ծառերուն քով դալար
 Փոսն այս բացուած, իբրեւ անշարժ վերջակէտ,
 Կը փակէ վէպը կեանքին
 Երգի մը պէս անաւարտ:
 Կեցած ափին, ես կը դիտեմ գայն երկար,
 Փոսն այդ խելօք, ընտանի,
 Զայն կը դիտեմ եկող-անցնող դարերու
 Խմաստութեան աչքերով,
 Բայց կը մնամ նոյն նախամարդը անբան,
 Նոյն մահապարտը շուար...
 Ու ես գիտեմ, գիտե՛ս դուն,
 Որ փոսին մէջ հիւրընկալ
 Պիտի իջնեմք օր մը խոնարհ իբրեւ գառ,
 Գուցէ նախ ես, գուցէ դուն:
 Պիտի իջնեմք՝



Կուրծփին վրայ եւ ասիին մէջ մեր սառած
Ամբողջ աշխարհ մը կիրքերու հրաբորբ —
Ըմբոստանփի խուլ որոտներ խորասոյգ,
Մեծ սէրերու հին կարօտներ մոխրացած,
Այնքա՛ն հարցում, այնքա՛ն հաստատ իմացում...

Ի՞նչ կը գտնենք ես ու դուն

Այդ փոսին մէջ, ուր ճառագայթը գուարբ
Կ'ըլլայ յանկարծ մոխրակոյտ.

Հիւլէական ուժանիւթի այս դարուն

Ի՞նչ կը գտնենք ես ու դուն.

— Ինչ որ գտան ուրիշներ, ոչ աւելի, ոչ պակաս,

Ինչ որ գտան դարէ դար,

Բայց պահեցին անդեմական խորհուրդի

Ծանր քարին տակ մարմար:

Հիւլէական այս դարուն,

Երբ աստղանան անջրպետին մէջ անհուն

Կը նուանէ երկինքն ազատ մաս առ մաս

Եւ կը սուրայ դէպի նոր կեանք եւ նոր լոյս,

Փոսը նոյնն է, ոչ շատ խորունկ, ոչ շատ մեծ,

Սրտին վրայ մայր հողին,

Նոյն աչքն է կոյր, որուն մթին ցանցերին

Կը տարածուի ընդերքներուն մէջ հողին

Եւ կը դառնայ յաւերժութեան գետնուղին:

Ո՛ւր կը տանի, ո՞ր գալիքին անժանօք,

Ուրկէ՞ կ'անցնին կայարաններն իր անդարձ

Եւ ո՞ր հրաշք վախճանին

Կ'ըլլայ նոր այգի խաւարն այս հին փապարին...

Փոսին առջեւ, փոսին շուրջ՝

Աւա՛ղ, ո՛չ մէկ ցուցանակ,

Անդեմական զբօսէն

Վերադարձող ո՛չ մէկ շրջիկ ու ճամբորդ.

Խաչ մը միայն գլխահակ

Իբրեւ պահակ

Անշարժ կնքեալ սպասումի մը անծայր:

Մ. ԻՇԽԱՆ՝ ՀՊԱՆՑԻԿ ԱԿՆԱՐԿՈՎ

1930ի աշնան, երբ մենք ձեմարան կը մտնէինք, դեռ ոչ ճեմարանաւարտ կար, ոչ ալ ճեմարանաւարտներու միութիւն: Իրարու անժամօք, տարիքով ու պատրաստութեամբ անհասար, հոգեկան ու մտային ձգտումներով երբեմն իրարու անհաղորդ, երբեմն անհաղորդ ձեմարանի հիմնադիրներու մտածումներուն ու ձգտումներուն՝ խումբ մը տղաներ ու աղջիկներ էինք միայն, եկած հոն կա՛մ մեր ուսման ծարաւէն, կամ մեր ծնողներուն ծարաւին յագեցում տալու:

Այն օրերուն, մենք՝ փոքրերս, քիչ մը վախժխելով, քիչ մը հիացումով կը նայէինք հասակով եւ անշուշտ մարմնական ուժով ալ մեզմէ ուժեղ ու բարձրահասակ տղոց, որոնք կրնային մեր հսկիչներուն քայլերը ազդել ծովեզերք, եթէ իրենք շուտ տուն դառնալ եւ կամ Նահրի ազուր անտառը երթալ կ'ուզէին, եթէ երազանքի իրենց մուսան եկած ըլլար:

Այն ատեն ինք Մուշեղ էր տակաւին. ոչ ձենտէրէնեան, ոչ ալ Իշխան: Պէտք է ըսել անշուշտ, որ այն ատեն հայ գրականութիւնն ու մշակոյթն ալ քանի մը հատոր բանաստեղծութիւններով նուազ հարստ էին, քան այսօր:

Այն մը որք, գաղթականութեան դառնութիւնը ճաշակած՝ Մ. Իշխան գիշերօթիկ էր, իսկ գիշերօթիկներու քաժինը, նոյնիսկ երբ Շանթի ու Ազալեանի գորգուրանքի առարկան դառնայ, սեփական տուն մը չէ տակաւին, ու Մ. Իշխան նախ *Տուշը* փնտռեց, երդիքը, որուն տակ մարդը ինքզինք մարդոջացած ու ապահով կը գտնէ:

Տուն մը, սակայն, ո՛րքան ալ երդիք մը ունենայ, դեռ պազ է, քանի կրակը չէ վառած հոն ու տաքցուցած պատերուն հետ մասն հոգիները բնակիչներուն. ու Մ. Իշխան *Կրակին* ետեւէն վագեց:

Տարիներու քաւալումին հետ, հասունութեան հասնելով, անհատէն ընկերութեան, ցեղին ու ազգին անցնելով, արիւնակիցներուն տունը փնտռեց, ազգին հոգին ջերմացնող *Հայաստանը* երգեց:

Եթէ համեստ չըլլար ի ծնէ, այսօր արուեստական շռառչ ու ազմուկ պիտի ըլլար իր անուան շուրջ. սակայն *Լոյսի* մարդն էր Մ. Իշխան եւ ոչ *Հայի*: Երբ բանաստեղծը լոյսը կը մոռնայ՝ կը դարձի ըլլալէ *բան* ստեղծող, կը դառնայ խօսքի բանուոր, պատ շարող, եւ չ'ըլլար արուեստագէտ:

Մ. Իշխան շարունակեց ճամբան, երազելով կեանքը, *Կեանքը* վերածելով *Երազի*, ու միշտ միմակ մնաց, բոլոր իրաւ բանաստեղծներուն պէս:

Երբ սարսափահար զգաց, թէ կեանքը կը հոսէր երազներուն հետ, դարձաւ ու իր *Ողորդի* խօսքը տուաւ կեանքին:

Ապա, երեւութապէս հանդարտած, ինքզինք համարեց իր կեանքի աշունին հասած, ու նստաւ հասկաքաղի, իր բերքի ընտիրները ի մի հաւաքելու մէկ կողքի տակ, անոնց տալով հասնող ցորեններու լիութիւնը, ու կոչեց գանձնէ *«Ոսկի աշուն»*:

Այնքան հասունութիւն ու ծանրութիւն կը բերէր իր վերջին, նորագոյն կտորներուն մէջ, որ միշտ պէտք է սպասել իրմէ նորաւոր ստեղծագործութիւններ, դեռ կը սպասենք աշնանային այգեկութիւն, ու ձմեռն հոյակապ հեքիաթներու:

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Այեկոծ արտայայտութիւններէ իր անին ու արուեստը հեռու պահող բանաստեղծ մը ասիկա. խորունկ, հանդարտ, բարի երիտասարդ մը: Հաւասարակշիռ հոգի մը՝ իր ամէնէն խօյական ու խենթ ապրումներուն առիթով իսկ: Քերթողական արուեստի իր խառնուածքը ամբողջն խարսխուած կը մնայ պայծառ զգացումի ու համապատասխան երեւակայութեան մը զոյգ պատուանդաններուն վրայ: Իր կարողութիւններուն եւ արտայայտութեանց շրջագիծը միջին յստակութեան պայմանը անց, վաւերական ամուր տաղանդի մը շրջագիծն է այսօր, իր քերթողական արդիւնքի մեծամասնութեան մէջ: Կը ներկայանայ ան ինծի ներքին բարեխառն կլիմաներէ տեսապէս կենսաթափանց քղած աղուոր քնարահարի մը կենդանագիրով, այդ կենդանագրին վրձնական բացայայտութեամբը:

Մ. Իշխան, իր հոգին բանալէ առաջ արտայայտութեանց լոյսին, կը սիրէ պայն ողորկ, պատկերափայլ, կշռաւոր ու զեղածալ ընել, կը թրշէ իր ապրումները հարուստ զգայնութիւններու եւ կէս խորհուրդի կարծես պսպղագին ծաղկեջուրի մը մէջ: Իր կեցուածքը, ինքնիր հանդէպ դժուարահաճ արուեստագէտի մը կեցուածքը կը թուի յաճախ: չինք աւցելով մեծ կամ պզտիկ որեւէ ներշնչում ան չի վստահիր շուտով ճերմակ թուրքի կանչին. նախ քան ներշնչումը բաղի, պատկերի ու երաժշտութեան վերածելը, բնաւորութիւնն է Մ. Իշխանին անոր հետ ներքին կրոյցի մը նստիլը, խորին մտեղմութիւն ու զրեթէ անքակտելի կապ մը հաստատելը: Կը հաւատայ, իր արուեստի եթէ ոչ կատարեալ ըմբռնումով, առնուապն բնագրի խուլ դրդումով մը, հոգեկան թովսի մաքրապտիչ պօրութեան: Ուրեմն՝

Հոգի մը ասիկա, հեռու նորէն մեծ աղմուկներէ, հեռու ժխոր ու տենդ սփռող զգացումներէ, պայքար ու եռուպեռ շինող երգերէ: Խաղաղութեան, հաշտ ու համերաշխ կենցաղի մը բանաստեղծն է Մ. Իշխան, իր արեան բնոյթին կարծես բոլոր վճիռներով:

ԵՂ. ՊՅՍԱՃԵԱՆ

ՆՈՐ ԺԻՆՈՒՈՂ ՏՈՒՆԸ

Սա՛ չոր հողին մէջ լճաւած, ուր կիսամերկ մանուկներ

Կը խաղային օրն ի բուն՝

Կառուցման տուն է այսօր, աշխատանքի եռուզեռ —

Նորահըրաշ յարաւթիւն...

Զուարթ լոյսին մէջ գարնան, քարերու կոշտ կտրծփին դէմ

Կ'երգեն մարեք մեծագօր,

Կ'երգեն վաստակն ըստեղծող՝ նայնաւ մաքուր ու վըսեմ,

Որքան մանգաղն ու արօր...

Մա՛րդն է անվերջ ու միշտ նոր, որ Աստուծոյ ստեղծած

Այս աշխարհին մէջ շա՛տ եին՝

Կ'ուզէ իր իսկ բազուկով կերտել աշխարհն իր սիրած՝

Ըստ պատկերի իւր սքտին:

Եւ օրէ օր, ժամէ ժամ կը բարձրանայ տենդագին

Կոթողն հսկայ մէկ շէնքի,

Որուն եիմփին, շաղախին, արմերուն մէջ կը դիզուին

Քրտինք, հանճար ու ոսկի:

Հագած մարմին ու հոգի՝ ահա՛ անշունչ քարն ու հող

Կը բարբառին պերճօրէն,

Իբրեւ ժայթք մը քարացած՝ յաւերժութեան սլացող

Մարդուն ամյագ կարօտէն...

Մառերուն պէս, կեանքին պէս, արմատներն իր մխրճած

Տափ սրտին մէջ մայր հողին՝

Կը կանգնի տունն ամբարձիկ՝ բանտելու լոյս ու երագ

Եւ տեսիլքներ երկնային...

Լուսամուտներ՝ ծովի գոյն՝ քանի՛ դէմքեր շարունակ,

Պիտի հալին ձեզմէ դուրս՝

Ըսպասումով, կարօտով, մերթ ցնծութեամբ շողարձակ,

Մերթ սրտաբեկ ու ամոլոյս:

Ազուռ՝, անո՛ւշ սենեակներ, արդէն հոգիս իմ կ'ըզգայ

Տարիներուն ընդմէջէն՝

Բոլոր բառերն ընտանի, խիմզ ու տաղերը վաղուայ,

Որ ձեզմէ մերս կը հնչեն...:

Մ. ԻՇԽԱՆ

ԵՒ ՅՈՒՇ ՄԸ՝ ԱՆՈՐ ՄԱՍԻՆ

Ո՛ր անհուռն համեմատելի առաքականքով, բայց եւ աշկպէ մենք ալ անցնո՛ւ էինք Մ. Իլիւսին ճամբաներէն, երբ հասանք Նրումադէժի Ժառանգաւորաց վարժարանը եւ ինկանք ճենահամբաւ Վլնդդին կառչէն տանջ:

Գաղթականության հետ յայտնուող տիրույթների զբաղեցնելը, տնտեսական առաջը, գաղտնային քաղաքականությունը, միևնույն ժամանակ հարուստների հին մեքենայի կիրառումը, կիրառական, կիրառական ժամանակները եւ հակադրությունը բնական օրենքով տեղեկացում էին տարածական տեղերի ու տեղեր հետ միասին կորուստներուն ուղեր, կարողություն, զգուշացում համարժեքները:

Ծիր Օսանիս յարսեցել շուշին առ յանկարծօրէն արթնցաւ ճէջս ճինն այդ տար-
առն կերպով զզացուած զբախանալիսն սէրը, առաջին հերթին սիրտս կապուեցաւ իմ
զկենսագրութիւնս՝ երգող բանաստեղծներու:

Ներքին այդ մթնոլորտին ևս Օւսկանի հրահրած նոր կերբքին բուռն չքմանին էր, երբ որ մը Հնազա անցաւ Մ. Իլիսանի Վճռակարու երգքը: Հայրենական օճախի, մթնոլորտի, բիւռմանքու, մզումներու մասին խոսող անոր կարօտով, քախիտով ու երակներով բարձր խոն ասղերուն հնա Հատայ Վար շինուող տաւանին առջև ու հոն կանգ առի: Վճռատանքի ետուզանքի մը մէջ կտուցման ասն մը ինչ նկարագրուէր հոն, իր հիմքին, շաղախին, որմե-
րուն մէջ ձգրտինք, հանճար ու ոսկին ընդունելով՝ հնազանդ կը բարձրանար տունը, շինու-
թայք մը հարապած՝ յանքաւորեալ այցալ մարդուն անյառ կարօտէն: Առանձին զգեցե-
կութեան մը հնազդիտ մարդու անհնարաբարեղ ուրախութիւն մը զգացի մէկէն: Չկրցաւ
զգեղել ինքրինքը: Վաղեցի Օւսկանին ժամ: Կարգացի առաջին ութ տունները եւ աշէրու իրեն
ստանով՝ աստ արտասանեց ինքրին երկուքը:

Երանութի՛ւմ է աշտպէս, յմեռած՝ շէմք մը կերտել,

Հայաստեի ու հայաբա,

Յերոնիմը, ինչպես և իր քաղաքացիները, համոզված էր, որ քաղաքը:

— Այս իմ տո'ւնն է հարազատ:

Իսկ ես, իսկ ես ի՞նչ, բրի թագուկներովս այս ուժեղ,

Ո՞ւր է հոգն իմ հայրենի.

Կ'ամսցնիմ օրերս ի գուր, բայց յգարկի մուրճ մը դեռ.

Քառ մը քառին չգրի...

Օչևան հետեւեցաւ բառերուն, փոխւեցաւ բառերուն հետ ու գլուխը վեր առնելով՝
գոչեց.

—Մեր առհաւական ապրումները այս պարզութեամբ ու յուզումով բռնած եթէ հինգ ժնրթուած բերեա ինծի, վաղը ես այս աղան իրաւ բռնաստեղծ կը հռչակեմ...

«Աւհուական ապրո՞ւմ», ժամանցի իւրովի: Այն օրերուն նման հարցերու դեռ չէր
զարհուած ծխաբ: Բառին բառարանային իմաստն իսկ չէի գիտեր: Բանաստեղծութիւնը սի-
րած էի դէս իրկած ապրումներուն մէջէն, իր առաջին պատասխանիւնը անուան ապրած ապու-
մը չանդաչազ մարմնոցներուն զօրութեամբ: Ի՞նչ գիտեայի, որ անկիւս ունի նաեւ Թաւշու-
ն խորհուրդ մը, կը հաղորդէ կառուցելու, նախկինցիկու ժառանգանքին քնդիւր մը երաժշտա-
կանայան նիւր:

Հոս կը զերկանայի Իշխանին առիթով Իշխանաց Իշխանէի մնացած լուսն: Ըսել կ'ուզենք՝
բանաստեղծին գոստակէն Հինգ քերթուած ընտրելով Օսկանին ներկայանալու ճիշդ չըրի
աւի առանձն:

Հիմա՞, Մ. Իշխանի վաստակին մէջէն անցնելով կտրելի չէ հինգ անգամ հինգէն պո-
կաս թիւով քերթումնեբոս առկիւ չկանգնիլ ու չըռել անոցմէ իւրաքանչիւրին առիթով՝

- Այս թմ ասուեն է հարադաս:

9. U.

ՊԱՅԾԱՌ ՃԱԿԱՏՈՎ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Գրող մը, որ յափշտակութեամբ փնտոց տառապանքը, գրականութիւնը եւ երբ գտաւ առաջինը, միւսով՝ վարդագոյն ճառագայթներու տիրապետութիւն մը հաստատեց վրան:

Սեւ տրամադրութեանց ապատ գօտի մը, ուր ապաստան գտած են կախերես մը ու խոնաւ աչքեր. ըսենք՝ հայո՛ւ աչքեր, որպէսզի հասկնալի դառնայ խոնաւը, անշուշտ իր... թրքապատկան իմաստով: Բայց նաեւ՝ ոտկան մը, իր հոգիին հպատակութիւնը ուղղող մութ զգացումներուն վրայ, արեւէն, լուսինէն ու աստղերէն իջնող լոյսի թելերով հիւսուած, որով կարկաչ կը դառնայ ամէն ձայն, եւ աղամանդ՝ ամէն խճաքար: Մ. Իշխանի բանաստեղծութենէն ընթերցողին վազող ճամբուն վրայ, տատակը չ'արիւնէր ոտքը, չես զգար ծարաւ ու երբ վերջացած է ընթերցումը եւ ամբողջութեամբ հոսած է այդ ճամբան հոգիիդ մէջ՝ զինով եւ առդէն ու կ'աճապարես: Ուր երթալու: Ո՛չ այնտեղ, ուր կ'երթան այսօրուան բանաստեղծութիւնները կարդալէ ետք: Կ'ուզես երթալ գեղեցիկ տուն մը դիտելու, խրճիթ մը, վրան մը, սիրոյ կրակին մէջ գալարուող մը փնտռելու, որքի մը արցունքը սրբելու:

Տխրութիւնը, որ շուքի մը պէս կ'ընկերանայ գրեթէ իր բոլոր բանաստեղծութիւններուն՝ նկուն նկարագիրները յուսալքում տանող հոգեկան վիճակ մը չէ, այլ՝ ներշնչումի աղբիւր է եւ ծննդաբերող գրական մթնոլորտ:

Մ. Իշխան, բանաստեղծին քառսային ու խաւար ներաշխարհը պայծառագրելու կոչումով ստեղծագործեց: Իր նիւթերը որսալու համար գործածեց այն տեսակ խայծեր, որ չկրցան անոնք չմօտենալ ու չբռնուիլ: Լէպու, երեսակայութիւն, զգացումի վեհութիւն եւ գեղագիտական այլ նախապայման խայծեր, երբ կը միանան ներշնչումը նուիրագործող բացարձակ անկեղծութեան՝ կրնանք առնել... ոտնաձայնը ճշմարիտ գրականութեան, որուն ներկայացուցիչներէն մէկը՝ ահա, ինք եղաւ:

Մարգարտախոյրը իր տառապանքին, իրագործեց վաստակ մը, որ հայելի մըն է մեր սերունդին յաղթանակը ցոլացնող եւ որուն ամէնէն առաջ պէտք է նային անոնք, որոնցմէ խուսափած է գրական պարկեշտութիւնը եւ խարխալումի մեջ են ճշմարիտ ստեղծագործութեան լուսաւոր ճամբաներուն վրայ:

Մ. Իշխան, հայ ժողովուրդին հարապատութիւնը վայելող բանաստեղծ մըն է, որովհետեւ առաւելաբար անձնական ապրումի ու գաղտնի ճամբաներով ընթերցողը առաջնորդելու շրջագծին մէջ չառաւ ստեղծագործութեան նպատակը: Զուտ արուեստի ատաղձին վրայ աշխատող մը, գրագէտի կոչումին մօտեցած կը կարծէ, երբ կը հեռանայ իրականութենէն եւ միայն իր սեփական աշխարհին մասնակից կը դարձնէ շրջապատը, բան մը, որ անընդունելի չէ իբրեւ ապատութիւն, բայց չէ նաեւ այն միակ պայմանը, որ գրագէտը ապրելու կը սահմանէ:

Մ. Իշխանի համար, աշխարհացրիւ հայութեան ներկան ու ապագան սերտօրէն կապուած կը մնան մտաւորականին, դաստիարակին ու գրագէտին, որոնք ճակատագրական դեր ունին կատարելիք այդ ուղղութեամբ: Մ. Իշխանի այս գետնի վրայ կատարած միջամտութիւնները — յօդուածներով, խմբագրականներով ու բեմով ո՛չ միայն բովանդակութեամբ, այլեւ գեղագիտական տարալներով, գեղեցիկ նմոշներ են խորզագցութեան ու պայծառատեսութեան: Մանաւանդ՝ ճառագայթող պարզութեամբ ոճը եւ իշխանական շքեղութեամբ լեզուն:

Ա. ՆՈՒՐԵԱՆ

ՍՊԱՆՆԵՑԷ՛Ք ՐՈՆԱՇԹԱՆ

(Հատուածներ)

Արարական երիտասարդ բանաստեղծութեան ուղեւորն ինքնուրոյն բանաստեղծներէն մէկը կը համարուի Սալիմ Պարաքաթ, որուն առջին հատորը՝ «Եւրաքանիւր ճեպը մտնող քաղաքացեալներին» վերջին ծափադրումէ զիտ, եւ իւրաքանիւր դուրս ելլալ՝ ճեպը արար մտաւարական շրջանակներուն կողմէ ընդունւեցաւ մեծ խանդավառութեամբ:

Սորին թարգմանարար ներկայացուող բանաստեղծութիւնը՝ «Սպաննեցէ՛ք Րոնաշթան» շարքին մէջ արամազրած է հեղինակը ինքը, Սալիմ Պարաքաթ:

Մեր յաջորդ թիւին մէջ, Սորին Կերակուեան առանձին յօդուածով մը զիտ ներկայացնէ Սալիմ Պարաքաթը եւ ահա բանաստեղծական աշխարհը:

Քննադիր, ով վարդ, քննադիր,

Ինծի պէս իր կեցուածքին մէջ կուր վատնուած դուն ո՛վ վարդ իմ, քննադիր,
Հարիւր հակում, երկու հարիւրը սիրտն է, ապա ցեխ է հարիւրէն ետք այդ երկու,

Ջոր անդադար կը դարձնեն ողակաձեւ կապորձներն ու կը դառնան

Անոր հետ եռատերեւ ջրածաղկին շուրջ հոգայտն,

Իսկ իմ հոգին անօգուտ է, քննադիր...

— Վարագոյր —

Րոնաշթա,

Անքուն հսկող վարդն է այս քու թագուհին ու թագաւորը գետն է, որ հապիւ
հապ կը բանայ վարագոյրներն իր աղբիւրին ճառագայթի մը սիրտն պատմութենէն քիւրտերու, կը ծալէ բեզ,

Դուն կ'արթննաս,

յետոյ դարձեալ կը կրկնէ՝ կը ծալէ բեզ, կ'արթննաս,
ապա դարձեալ կը կրկնէ՝ կը ծալէ բեզ եւ դուն գետին
կը յանձնուիս պատանի,

Ջոր ժամերը կը հիստեն բամպակներու թելերով. կը տեսնեմ բեզ ու կը վազեմ
հասունցած, կը կակուղնամ, մինչ իմ ձայնը կը կորանայ՝ գրկելով իւրաքանիւր դատարկութիւն ու անհուն,

Մարդուն քայլը արգելակող որդէ քար կամ կենդանի գրկելով,
Գրկելով իր բազումկներուն ողջ լիութեամբ առանձնութիւնը վայրագ,

կը ծալէ բեզ եւ կ'արթննաս,

ապա դարձեալ կը կրկնէ՝ կը ծալէ՝ ու կ'արթննաս տենդահար,

Համր՝ նման աշխարհին, եւ օրերով կը նետուիս դուն օրերու հասակն ի վար,

Տարիներով՝ հոգւոյն վրայ եւ միրգերը թուփներուդ կը լոցընեն րատիոմով,
կը թաւալես,

ու կնոջ մը կանչերուն ու երակիս արինատար միջեւ դուն՝

կը թաւալիս,

կը թաւալիս:

Բոնաշթա,

Բոնաշթա,

Բոնաշթա,

Կողմնացոյցով մը ճշդեցի ես քեզի առաջին կողմը մարդուն եւ ձգեցի, որ մարդը ալ մոլորի, կռուէ՝ իր հետ, ա՛ն էզը իր, որպէսզի գայ քեզ հլու,

Ա՛ն զինք, առ է՛զը իր, որպէսզի գայ ժամանակը քեզ հլու,

Ա՛ն զինք, առ է՛զը իր, եւ ժամանակն ալ դո՛ւն առ, որպէսզի գայ թոշունը քեզ գլխահակ,

Ա՛ն զինք, ա՛ն էզը իր, եւ ժամանակն ու մարմինը թոշունին, որպէսզի գայ քեզ Աստուած,

Աստուածն ա՛լ առ եւ ըսէ՝ հարսանիքներն իմ սկսան,

Ու բռնակալ յառաջացիր փերուդ մէջ խորերը քու հոգիին, զոր դուն կ'ընես գոգաւոր՝ այծեամներուն ու ջուրերու դաշտամուկին համար,

Ու հայերուն սիրոյն նաեւ, որոնք Խապուր գետը կ'ընեն արմատախիլ պատփրակութիւն առ պատփրակութիւն ու կը սուպին դէպի քեզ՝ նժոյզներով ու կիներով, որոնք հովին դէմ կը բանաս հակումին 9՝10րդ տեսողութեամբ, ապա վերջին կոտորակին կ'ընես զիրենք յուսախաբ ու կը կտրես լարը սրտին...

— Վարագոյր —

Բոնաշթա,

Բոնաշթա,

Քար կայ լեզուիս տակ

եւ ճնճղովներ սարսափահար՝ աղիքներուն. խաղաղի՛մ, Բոնաշթա ...

Ճշդեցի քեզի ծոցերն ու կայմը իմ, յառաջացի՛ր, որպէսզի մեր իշխանութեան միացնենք կարտինալները չարութեան, որպէսզի մենք միացնենք ցեղախումբերն անապատի այս հովիտին ու միւսին, զի մեր դէմքին կայ հաղորդող գիծն այն մատնիչ թէ մենք կը բռնաբարենք գիշերը եւ հոգիներուն որջերը, կը բռնաբարենք վարդն ու նմանակները վարդին, կը բռնաբարենք մետաղն ու փուտը, թանձրամորթները ջրային եւ ուրուականները ֆիզիքսին ... յառաջացի՛ր, Բոնաշթա ...

Պիտի չթողունք աղբիւր մը, որ չկարօտնայ մեզի,

Պիտի չթողունք խաշնաշ մը, որ չկարօտնայ մեզի,

Եւ պիտի մենք փոխհատուցենք իգութիւնը իւրաքանչիւր արիւնի՝ երկու քարաք քաֆուրախառն սիֆիլով, պիտի պահենք մեքենաները հաշուիչ ու թերթերը ալիւմինիումի պետութեան մեր մարմնին մէջ պատուած սիրոյ փոթասով...

Յառաջացի՛ր, յառաջացի՛ր, Բոնաշթա...

Համաձայնինք թող այս գիշեր, թէ դազաղը աշխարհին արդեօք ինչպէ՛ս պիտի
 արդարենք ժապաւէ՛ններով վարդագոյն, յեղափոխութիւններով ու
 կճղակներով ոշխարներու...

Կարմանալի ես, Բոնաշթա՛,

Համակիրներդ ահա կը քնանան գետին վրայ եւ թագուհիդ անքուն հսկող
 վարդն է այս,

Իմ պատեանիս տակ քարեղէն կայ պատուաստ մը բոցարձակ... Օ՛, Բոնաշ-
 թա,

Եւ կը սպասեմ էզը իմ, որպէսզի ես քեզ ծալեմ ու սկսիմ նոր արշաւ մը տա-
 փաստանիս վրայ մերկ,

Եւ կը սպասեմ իմ քոյրերուն, որոնք հիմա կը մազլցին խաղաղութիւնը մար-
 դուն՝ յայտնաբերելով պատեանն իմ քարեղէն,

Արիւնս ահա մրցավազքի է ելած՝ զօրանոցին իր շուրջ բոլոր,

Անակնկալի կը բերէ կրակը իր զօրանոցին ու կը մեռնի,

Մինչ շարք առ շարք լուծեանը մէջ իրենց անտառները կ'աղօթեն,

Ու լուծեանը մէջ իր նաեւ բազէն կ'աղօթէ, ազգեր մեկնիլ կը սկսին,

Իսկ տուները թիրախի պէս կ'օղակուին...

Ջանգակներ են իմ աչքերը, ես սպասողն եմ,

Եւ անջրպետս իր դիակը կը թուզնէ մահիճիս վրայ,

Եւ երկուքս ալ մեր գաղթին կու տանք շունչը յարութեան ու կը սպաննենք:

Ահաւասիկ կը թակեմ ես դուռները աշխարհին ու վայրագին կը պահանջեմ էզը
 իմ, մինչ իմ էզը խենթութեանըս ետին եկած է ծուկի եւ կը կապէ պա-
 տուհաններն աշխարհին, որոնք կ'իյնան ինծի բաժին, կը վրդովուի, կը
 զրգռուի, կը զրգռուիմ նաեւ ես ու կը բանամ անդամներն իմ սերունդ-
 ներուն աչրերու, որոնք կու գան հարսնիքներուն մէջ խառնածին, ու կը
 պանգեմ.

այստեղ, ո՛վ այրը ջուրին,

այստեղ, ո՛վ այրը մահուան

Եւ ո՛վ այրը խաւարներուն ճանապարհը, այստե՛ղ է,

Ուր կը քաշեմ պատաղիճը դէպի ինձ, կը պահանջեմ էզը իմ, մինչ իմ էզը
 խենթութեանըս ետին եկած ծնրաղի՛ր՝ կը խոստանայ ձիւրուն հարթա-
 վայր մը անսահման, ուր կարելի է վազել մինչեւ որ վազը ձիւրն այդ
 սպաննէ ... կ'ազդարարեմ վայրագին.

մօտեցի՛ր, ո՛վ էզը ջուրին,

մօտեցի՛ր, ո՛վ էզը մահուան,

մօտեցի՛ր, ո՛վ էզը խաւարներուն

Եւ ո՛վ էզ իմ, մօտեցի՛ր,

Որովհետեւ ժամկէտէս ետք խոստացուած են ինձ երկիրներ, որոնք համար կը
 կանաչիս,

Եւ դաշտեր, որոնք կ'արթննան վասն փախուստի ...

Պէյրութի խիճերուն վրայ կը շարտեմ ես կարօտիս ապակին
 ու կը դիտեմ փշուրները ապակիին՝ արգանդնե-
 րու պէս ցրուող,

«գնդաձէ են վիշտերը մանուկին,

գնդաձէ են անոր առուններուն վիշտերը,

զնդաձեւ է Պէյրութը, իսկ իմ սիրտը՝ լար մըն է»:
 Ես կը կտրեմ լարը սրտին ու իմ էզը կը պահանջեմ յոգնութենէն,
 Ո՛վ դուն էզ իմ, ալ ե՛տ դարձիր Սաննինէն եւ այն կողմէն, զոր կ'այրեն
 Թղթագործները թուղթերուն պատարագով.

Ես որսորդ եմ

Արձակեցի լուս սանձերը աշխարհին եւ սկսայ սպանութեան իւրաքանչիւր
 նեղուցի մէջ, որ կը բերէ մարմիններուն ընտանութիւնը իրենց
 Ու մղեցի էզը իմ անջրպետին մէջ թռչկտող փետուրին (ողջո՛յն քեզ, փետուր)
 եւ փետուրին մէջ ձեռքը իմ վերածեցի ես բարձի, որպէսզի ա՛լ քնանամ եւ
 իմ էզը փետուրէն իսկ առաւել փափկութեամբ մը յառաջ մղեմ, գուրգու-
 րալի է փետուրը, կը բարձրանայ վիշտերս ի վեր, եւ կը խօսի էգիս մասին
 (ողջո՛յն քեզ, փետուր) եւ քեզ՝ էզ իմ, ողջոյն, ողջոյն ու ողջոյն քեզ,
 ո՛վ փետուր:

Աւեր կայ փետուրին մէջ,
 հունձք կայ փետուրին մէջ,
 տիկնիկներ ու երկաթներ կան փետուրին մէջ,
 եւ իմ էզը պղտոր է, ու կ'երկարէ փետուրին մէջ ձեռ-
 քերը իր,
 ես կը բռնեմ դաստակը իր,
 կը փառաբանեմ փետուրը
 եւ կ'աղօթեմ՝ Բոնաշթա՛, Բոնաշթա՛,

Փետուր կայ լեզուիս տակ

եւ ճնճղովներ սարսափահար՝ աղիքներուն. կրնա՛մ
 խաղաղիլ, Բոնաշթա...

Ու քիչ մը ետք երկրամասն այս կը գրէ սգերգներն իր.
 Ապա զանոնք կը փակցնէ փոշիիս վրայ,
 Քիչ ետք կը շօշափեմ էզըս, կու լամ եւ օրերն իմ կը կուտակեմ կրակին շուրջ,
 Ու կը պատեմ իմ շունչերով դաւաճանութիւնները բոլոր.
 Եւ իմ շունչերը կը պատուին շանթերով՝
 Առաւել գուրգուրալի սրտին փլատակներէն ու ժանգերէն խորհուրդներու...

Քիչ ետք կը սլանանք, Բոնաշթա,
 Ամբաստանուած երկուքս ալ մեր տոհմերն ու սերունդները սպաննելու յան-
 ցանքով,
 Կը սլանանք ճառագայթին նման այն, որ կը սկսի բաբախել՝ երբ իր էզը կը
 բաբախէ,

կը ծնրադրէ,
 կը կծկուի,
 կը թուլնայ,

Տարիներէն կ'ապատագրէ իր էզը եւ կը տարագրուի ի սփիտս աշխարհի...

միջեւ:

(հայացուց՝ Ս. Կիրակոսեան)

Սալիմ Պարաքար

Ա. Հ Ա Յ Կ Ա Ջ

Ի՞ՆՁ ԿԱՅ

ԱՆԴԵՆԱԿԱՆԻՆ ՄԷՁ

Քանի մը օր առաջ, մէջքս ծռած, մեր տան առջևի մարդը ձեւի դնել կ'աշխատէի, երբ աչքիս պոչով տեսայ, որ անմիջական դրացիիս, Տայկաներու տան անկիւնէն կարմիր մագերով ու բարձեւ մատղաշ կին մը կուգայ: Շտկուեցայ: Ան հասաւ մօտս ու կանգ առաւ: Նկատեցի, որ սիրուն էր, չափ սիրուն:

Իրարու նայեցանք ու ժպտեցանք երկուքս ալ:

Իմ ուզածս ալ այդ էր արդէն:

— Բարի լոյս, — ըսաւ շարունակելով ժպտիլ:

— Բարի լոյս, — ըսի ես ալ իրեն պէս ժպտիլս շարունակելով:

Իրերու այս վիճակէն դժգոհ մնացի: Կար ժամանակ մը, երբ ծանօթ ու անծանօթ կը նայէին աչքերուս մէջ ու յաճախ, պատրուակ մը գտնելով, հետս խօսքի կը բռնուէին: Հիմա առանկ բան չկա՞յ ... Անգամ մը խորշոմած դէմքիս ու օպիտակած մագերուս նային, գլուխներն միւս կողմ կը դարձնեն, կամ խորունկ մտքերու մէջ թաղուած՝ իրենց գործին կ'երթան ...

Կ'երթան՝ եթէ նոյնիսկ բան-գործ չունին երթալու ... Երբ այդ մատղաշ կինը կանգ առաւ քովս, « առ կինը ի՞նչ կ'ուզէ ինձմէ » անցաւ մտքէս: Պատասխանը դեռ մտքիս մէջ որոնելու վրայ էի, երբ իր ձեռքի օպիտակ թուղթը երկարեց ինծի ու ըսաւ, թէ իր հասցէն է.

— Իմ հասցէս է, — ըսաւ թուղթը վեր ու վար շարժելով, — եկայ կարգադրութիւններ ընելու Հիլիպրէնտին հետ — Հիլիպրէնտը մեր Թաղի մեռելաթաղն է, որ երբ մեռնիմ, յուղարկաւորութիւնս իր հաստատութեան մէջ տեղի ունենայ:

Այս տեղեկութիւնը տուած պահուն այնպէ՛ս անուշ կը ժպտէր, որ կարծես դաշտահանդէսի, պալալի կամ նման չափ չաճելի բանի մը մասին է, որ զեկուցում կուտար:

Իր գուարթութենէն վարակուած՝ ես ալ կը ժպտէի:

— Ինչո՞ւ կը խնդաս, — հարցուց:

— Ի՞նչ գիտնամ ... Քու օրինակի՛դ կը հետեւիմ ... Յետոյ քու տարիքդ ունեցող աղջկան մը համար մահուան մասին մտածելը զարմանալի ու զուարճալի կը թուի ինծի ... Ես թեզմէ առնուազն երկու անգամ աւելի տարեց եմ, բայց բնաւ մահուան մասին չեմ մտածեր: Կը սպասեմ, որ արժանութիւն մտնելու պայմանները քիչ մը ես բարեփոխուին:

— Հը՞մ, — խնդաց, — հիւմար ունիս: Ես հիւմոր ունեցող մարդերը կը սիրեմ:

— Ի՞նչ ուրախ եմ ... Երկար տարիներէ ի վեր, մէկը Վեր սիրեմ՝ չէր ըսած ինծի:

— Ահա ե՛ս ըսի:

— Որուն համար անհունապէ՛ս շնորհակալ եմ:

— Գրեմ՞ս ինչ ... Ուրախ եմ, որ հոս կանգ առի հետզ խօսելու համար, — կը խօսէր ինծի այնքան մօտեցած, որ իր շունչէն կ'առնէի շրթնաներկին կլակի բուրումը:

— Հոգեկան այնպիսի վիճակի մը մէջ կը գտնուէի, որ պէտք էր մէկուն հետ խօսէի... Ու այդ մէկը դուն եղար, — ըսաւ:

— Որուն համար ես ալ ուրախ եմ:

— Լա՛ւ, շարունակէ ուրախ ըլլալ, բայց նաեւ մտիկ ընել:

— Կ'ընեմ:

— Զեր փողոցին վարի ծայրէն կ'անցնէի, երբ, Հիլիպրէնտին տեղը տեսայ. ամէ՛ն բան կարգին, մաքու՛ր, լաւ դասաւորուած: Պարտէզը՝ ծաղիկներով լեցուն. ներկայաւելի՛... Բարախնե՛րն ըսե՛ա... Մտքէս ըսի, որ մտնեմ ներս աւ խօսիմ հաստատութեան տիրոջ հետ. կարգադրութիւն ընեմ, որ երբ մեռնիմ, դիակս առ տեղէն վերցնեն: Վերջին արարողութիւնը, վրաս բացողեայ, բարախներու շուքին առկ կառարեն...

Ու թիւը երկարելով ցոյց առաւ իշխրաւուն հոյակապ բարախները, որոնց մէկուն կառարէն տարմահաւ մը կ'աւետէր, թէ դարուն է եկած, իր կիներ բոյնին մէջ ձուերուն վրայ նստած է ու ինք երջանիկ է:

— Կր տեսնեմ, որ դուն ալ ինծի պէս ես, — ըսի:

— Ի՞նչ տեսակէտով:

— Կր տեսնեմ, որ դուն ալ բարախներն ու առհասարակ բնութիւնը կը սիրես:

— Հոգի՛ կու տամ:

— Որ այդպէս է, շատ ալ տարօրինակ չեմ գտներ սրտիդ փափաքը ... Կիներէն ամէն բան կարելի է ակնկալել. նոյնիսկ նախանձելի է, որ այդքան հեռուները կը պնենս ... Բայց, սիրելի օրիորդ, ներէ, որ հարցում մը ընեմ. ուրիշ զբաղում, բան-գործ չունի՞ս, որ նման մանրուքներով, դեռ շատ հեռուները գտնուող բաներու մասին կր մտածես՝ ու կարգադրութիւններ ընել կը փորձես:

— Այդ օրուան հեռու կամ մօտ ըլլալը միայն Աստուած գիտէ. գալով բան-գործիս, զբաղում մը չունիմ ներկայիս, ոչ ալ՝ ապրուստի մտահոգութիւն: Հայրս հարուստ է եւ առատածնոն: Իր մէկ հատիկն եմ: Գրեմ՞ս, թէ այդ ինչ կը նշանակէ:

— Կը նշանակէ, թէ կը չփացնէ քեզ:

— Այո՛: Կամքս օրէնք է իրեն համար:

— Պոյ — օ պո՛յ ...

— Կարծածիդ կամ երեւակայածիդ չափ դէ՛ չեմ... քիչ առաջ ըսիք, թէ շատ հեռուն գտնուող մանրուք բաներով կը զբաղիմ. հապա ի՞նչ պիտի ըսես, երբ պատմութիւնս իր ամբողջութեան մէջ իմանաս:

— Պատրաստ եմ լսելու իր ամբողջութեան մէջ:

— Լա՛ւ, Երբ Հիլիպրէնտին մտայ, մտադրած էի ըսել, թէ կիզարանէն անցնելէ յետոյ մարմինս, պէտք է մոխիրը ցրուեն Գուրնիդ Պուլովարի երկայնքին:

— Է՞ ...

— Մոխիրս ցրուեն Գուրնիդ Պուլովարի երկայնքին:

— Բայց ինչո՞ւ, — հարցուցի, այնքա՛ն զարմացած այս տարօրինակ

Թուող փափաքէն, որ մոռցայ անոր վրայ ծիծաղիլ ու, իր պատասխան մը կարենալ ձեռակերպելէն առաջ, շարունակեցի.

— Եթէ առաջդրած ես մահէդ ետք կ'իղուիլ, այդ հասկնալի է: Ես ալ նման միտք մը ունիմ: Չեմ փափաքիր դետնին տակ որդեր սնուցանել եւ անօգտաւործելի քանի մը թիւ հող պարարտացնել: Բայց լաւ չ'ըլլա՞ր, որ մոխիրդ սանկ աւելի հաճելի, խաղաղ, աղուոր տեղ մը թափուի:

— Օրինակ մ'եր:

— Սա զուստն էր արտօնող եղբորդ բարտններէն մէկուն տակ, օրինակի համար, ուր պատկած՝ պատահութիւն պիտի ունենաս Թուրքիոյ տաղմոռ ունկնդրելու... Կան դեռ ջրափեր, ուր խօսքի պիտի բռնուիս տոռններուն հետ... Կայ մշտարթուն ուղիկանոսը՝ իր մրմունջով ու շառաչով ... Գիտեմ, որ քանի մը տարի առաջ մահացած սինակապիւր մը կտակեց, որ իր մօխիր Մանհաթան կղզիին վրայ Թուրքիոյ օդանաւէ մը ցըրւեն մեծ, մշտարթուն քաղաքին վրայ. դեռ ուրիշ մը՝ դաղթական հայ մը կտակեց, որ իր մօխիրը տանին իր ծննդավայրը ու հոն թաղեն. այդ ալ հասկնալի է ինծի համար. բայց սա անխնայ Գուրնդ Պուլուվա՛րը...

— Լմեցուցի՞ր:

— Այո՛, լմեցուցի:

— Գիտե՞ս, թէ ինչո՞ւ համար կ'ուզեմ, որ մօխիրս հոն թափուի, — ըսաւ, շարաճնութիւն մը խորհող աղու մը պէս ուրախ:

— Ձէ՛, ուրկէ՞ պիտի դիտնամ ... Աստուած իսկ յաճախ չի կրնար դուշակել իր ձեռակերտ կիններուն մօքէն անցածը:

— Աղէ՛կ, կը բացատրե՛մ... Աստուած ու Մովսէսը իրար անցընելու պէտք չունին... ուրեմն խօսակիցս Հրէուհի է անցաւ մօքէն. — «առ տեղէն երեք փողոց անդին կ'ապրիմ, ձախ կողմէ բլուրին դռնուող մեծ տան մէջ: Տուն երթալու համար ստիպուած եմ անցնիլ Ծառուղիէն. ամէն անգամ ալ, կտաքերը, վրաս վազելով, զիս ջախջախել կը փորձեն ... Մինչեւ հիմա չյաջողեցա՞ն ...

— Կը յուսամ, որ ասկէ ետքն ալ չեն յաջողիր, — մաղթեցի:

— Ես ալ կը յուսամ, բայց մեծսիրտ եմ, կ'ուզեմ, որ մուրաւանուն հասնի՞ն. ինչ որ չյաջողեցան ընել, ոսկորներս ջրաղէլ ողլուքեանս, Թող ընեն մահէն ետք, Թող վազվազեն մօխիրիս վրայ:

Ու սրտագին ծիծաղեցաւ:

— Պատճառաբանութիւնդ շատ գէշ է, — ըսի. — բայց, յամենայնդէպս, մօխիրդ, ինչպէս դուն կ'ըսես, աւելի հաճելի տեղ մը թափել տալու թելադրութենէն չեմ հրաժարիր:

— Կը խոստանամ նկատի ունենալ, — պատասխանեց ժպտելով, — կը ներէք, ձեր աշխատանքին արգելք եղայ:

— Ներելու բան չկայ: Գործը չի փախիր: Միշտ հոս է: Բիւլ մը կանուխ, քիչ մը ուշ եմ աւարտեմ՝ տարբերութիւն չ'ընե՛ր: Լման օր մը ունիմ: Ուրախ եմ, որ այս առաւօտ ինծի հանդիպելով՝ քովս կանդ առիւր ու հաճելի խօսակցութիւն ունեցանք: Բայց խնդրեմ, ըսէ ինծի, թէ երբ չ'ըլլալդէնտի գրասենեակին մէջ թաղմանդ մանրամասնութիւններուն մասին խօսեցար, ի՞նչ պատասխանեցին:

— Ըսին, թէ իրենք բան մը չեն կրնար ընել: Թելադրեցին նօտարի մը կամ փաստաբանի մը մօտ երթալ եւ օրինական կտակ մը պատրաստել տալ. անոր մէջ գրել տալ ամէն բան, որոշապէս նշանակել, թէ կը փափաքեմ, որ դիակս վերցուի Հիլիպոլէնտի մեռելատունէն. վերջին արարողութիւնն ալ կատարուի բացօդեայ, պարտէզին մէջ:

— Ո՛վ էր հետդ խօսողը, այդ թելադրութիւնը բնողը :
 — Մոխրագոյն աչքերով սիրուն աղջիկ մը :
 — Քիչ մը գիրուկ :
 — Քիչ մը գիրուկ :
 — Շատ մը լեզուանի :
 — Շատ մը լեզուանի :
 — Տարբձին է : Հիշարէնտի աղջիկը : Հորը մեռնելէն ի վեր ինք կը վարէ գործերը :

— Լաւ տպաւորութիւն ձգեց վրաս :

— Այո՛, լաւ աղջիկ է, կերթ : Տարիներ առաջ տղուս դասընկեր է եղած ու այդ առթիւ յաճախ այցելած մեզի. այո՛, շնորհալի աղջիկ է : Դուն գիտե՞ս, թէ այդ քու սիրած պարտէզիդ գոյութիւնը կարմրցուած հաւերու կը պարտին ...

— Ի՞նչ... Կարմրցուած հա՞ւ... Ա՞ռ ուրկէ հանեցիր...

— Կ'աճապարե՞ս, գործ մը ունի՞ս, ժամանակ ունի՞ս որ պատմեմ :

— Լման օրը իմա է, պատմէ՛ :

— Նստի՛նք, — ըսի :

— Նստի՛նք, — համաձայնեցաւ ու տուն առաջնորդող երեք սանդխա՝ մատերէն երկրորդին վրայ, քով քովի, նստեցանք :

— Անուշ կը բուրեմ, — ըսի քեթ՞ս վեր քաշելով :

— Շնորհակալ եմ :

Ապա՝

— Ո՛վ ունիս, ամուրի՞ ես, — հարցուց :

— Ի՞նչ ամուրի... Ամէ՛ն րան ունի՛մ :

— Օ՛ոօօօօօ

— Ի՞նչ պատահեցաւ :

— Հիմա մի նայիր, բայց կարծեմ կինդ պատուհանէն կը նայի :

— Թող նայի, ի նշ կայ, գէշ արարքի մը մէջ չե՞նք ...

— Զի՞ նեղուիր :

— Ինչո՞ւ պիտի նեղուի, փողոցը, ամէն ժարդու աչքին առջեւ, քոյր՝ եղբոր պէս քով քովի նստած՝ կը խօսի՛նք :

— Յետոյ քեզի չի՞ հարցնել, թէ ինչնեի՞ էի, ի՞նչ կը խօսէինք :

— Հաւատաքննութեան դարբ անցած է, — ըսի ժպտելով :

Ինք ալ ժպտեցաւ :

— Ի՞նչ պատմելու վրայ էի, — ըսի՝ խօսքին թելը ձեռք առնելու համար :

— Կ'ըսէիր, թէ այդ ծաղկանոցին գոյութիւնը կարմրած կամ կարմրցուելու վրայ եղող հաւերու կը պարտիմ :

— Օ՛, այո՛, — ըսի ես, — հողը այն պարտէզին, որուն վրայ կը հիանաս, ուր կը փափաքես, որ վերջին արարողութիւնը կատարուի վրադ, հիմա մեռած ձենեւքա անուն իտալացիի մը կը պատկանէր : Զենեւքա կահա՝ դործ էր ու բարեկեցիկ : Ի միջի այլոց, անշարժ կալուածներու առեւտուր ալ կ'ընէր : Երեք սիրուն աղջիկներ ունէր, Նորմա, Էվըլին ու Հելէն : Հելէնը ամէնէն փոքրը՝ ու ամէնէն սիրունն էր : Շատ կը հաւնէի իրեն :

— Այսինքն սիրահարուած էիր...

— Ինչե՛ր կ'ըսես... Եթէ այս պահուս խոստովանիմ, թէ քեզի կը հաւնիմ, սիրահարուած կ'ըլլամ ...

— Այո՛, հապա ի՞նչ...

— Եթէ ամէն բոլոր պիտի միջամտես ու խնթ բաներ ըսես, ել գնա՛ : Տե՛ս, խօսքիս կապը նորէ՛ն կորսնցուցի :

— Ես կը յիշեցնեմ, Հելէնը կը գովէիր, երբ...

— Այո՛, երեքին մէջէն ամենասիրունը Հելէնն էր : Զննեքա տղայ դաւակ չունէր : Երբ Հիլիպրէնտ ուզեց իր մեռելատան կից այդ հողը գնել ձնեհաքայէն, խառլացին, որ այդ հողին համար ինչ եօթը հազար տոլար տուած էր, ասանչորս հազար տոլար ուզեց : Հիլիպրէնտ մերժեց «խառլացիի մը կողմէ կողոպտուիլ» : «Թող քանի մը տարի պահէ, գինը կ'աժառնեցնէ», խորհեցաւ :

Սխալած էր : Խառլացին, իր ուզած գինով, ուրիշի մը ծախեց հողը ու մէջէն ելաւ : Ասկէ մօտ երեք տարի առաջ, երբ Հիլիպրէնտ դեռ չէր մահացած, օր մը, հարթիչ մեքենայ մը, երկրաչափ մը ու քանի մը աշխատատեղեր եկան ու սկսան խնդրոյ առարկայ հողը չափել, չափչփել, ցիցեր ու շաշաններ դնել հոս ու հոն : Հիլիպրէնտ իրար անցաւ ու վազեց դուրս : Իր այն հարցումին, թէ չի նշ կ'ընեն, ի՞նչ դրօժի վրայ են, ի՞նչ կ'առաջադրեն չիենէլ այդ հողին վրայ, ըսին. «Զի՛քքն իմ տը Կլեմէնթ մը պիտի չիենէք» : Հիլիպրէնտի սիրտը, քիչ մնաց յուզումէն կենար, կանգ առնէր :

— Ի՞նչ, — հարցուց ձայնը կոկորդին մէջ խեղդուած :

— Զի՛քքն իմ տը Կլեմէնթ պիտի չիենէք : Այսինքն՝ երկխորական օճախին մէջ պիտի խորովենք վառեակները ու կարմրցուած դեղնախնձորի հետ դնենք ժամաւոր կողովներու մէջ : Ամառը՝ դուրսը, գունաւոր հոփանդներու տակ պիտի ուտեն յաճախորդները, ձմեռը՝ ներսը, մարմարէ սեղաններու վրայ : Հող մի ըներ, շատ ներկայանալի հաստատութիւն մը պիտի ըլլայ մեր կառուցանելիքը : Զերկարեմ : Հիլիպրէնտ 40-000 տոլար տալով ետ գնեց այդ հողը անոնցմէ ու վերածեց քու հաւնած պարտէզին, որ խորովուող վառեակի ծանր հոտը հեռու պահէ մատուռին մէջ յաւիտենական ջուրով ննջողներու քիթէն :

— Զէի գիտեմ, թէ մեռելները հոտ կ'առնեն, — ըսաւ քովին :

— Մի՛ հեղեմ : Մենք ալ գիտենք, թէ մեռելներուն քիթը հոտ չ'առնենք. դեռ տեսնուած չէ, որ անոնցմէ մէկն ու մէկը ելլէ դադաղէն, քիթը կոխէ մօտաւոր ազդակների մը կամ բարեկամի մը կողմէ ուղարկուած ծաղկեպսակին մէջ, շունչ քաշէ ու ըսէ .

— Օ՛ի, ինչ ալ անո՛ւշ կը բուրէ ... Եթէ չեմ սխալիր, դուք ալ, ծաղիկի տեղ, պտուղի կողովներ կ'ուղարկէք ... Զեր մեռելները կ'ըլլեն ինձոք մը կրծելու կամ նարինջի մը կեղուելու համար... Զէ՛, չե՛ն ելլեր... Այդ բոլոր բաները տեղի կ'ունենան պարզապէս շուրջիներուն, շուրջը սպորողներուն համար, իրեւ յարգանքի վերջին արտայայտութիւն : Ինչպէս կը տեսնես, Հիմա այդ հողը վերածուած է պարտէզի. հոն դուրսը են սպիտակ մարմարէ աթոռներ, շուք տուող ծառեր կան : Ամրան տաք օթերուն, ներսէն կոճակ մը սեղեկելով՝ կը կենդանացնեն շատրուանը : Վայրը կը դառնայ Հրապուրիշ, ու անգամ մը զայն տեսնողները, քեղի պէս, կը փափաքին մեռնելէ անտր անկէ տարուիլ դերեզման :

— Այդ բոլորը հետաքրքրական են, բայց խնդրեմ, ըսէ ինձի, թէ դուս այդ բոլոր բաները ինչէ՞ն գիտես :

— Եթէ կը կասկածիս, թէ մտքէս կը հնարեմ, կը ստեղծեմ, կը սխալիս. ես այս գիւղին անպաշտօն քաղաքապետն եմ, աչքս ու ականջս բացած՝ ամէն օր լուր ու բամբասանք կը հաւաքեմ :

— Օ՛ոօօ

— Օ՛օօօօ, — ըսի ես ալ իրեն պէս :

— Կր մեղադրես ք զիս մեռնելէս յետոյ հոս բերուել փափաքելոս համար :

— Աէ՛, չեմ մեղադրեր : Տարիներ առաջ, որբանոցին մէջ, ուր ես քանի մը ամիս ապրած եմ, Հրանդ անունով տղայ մը մեռաւ : Զինքը այնքան գովեցին գերեզմանին վրայ, որ ներկայ որբերուն մեծամասնութիւնը նախանձեցաւ, որ մեռնող ու գովքի արժանացողը ինք չէր... Հիմա՛կ ալ...

— Հասկցայ, տեղը այնքան հրապուրիչ է, որ ...

— Ուղի՛ղ : Իբրեւ բարեկամ, ինձմէ մէկ խրատ, չէ՛, թելադրութիւն քեզի. եթէ պատահի, որ օր. Տարրթչիի թելադրածին պէս կտակ մը պատրաստել տոռ, մոռցիր Գուլիշ Գուլուվարը. մոխիրդ ցանկել տալու համար աւելի հաճելի ահ՛դ մը որոշէ :

— Կր խորհի՛ս, թէ մահէս հաք այս բոլոր բաներէն որեւէ մէկը կարելութիւն կը ներկայացնէ ... Բան մը կը զգա՞մ, բան մը կը տեսնե՞մ, երթալիք տեղիս համար տարբերութիւն մը կ'ընէ՞, ի՞նչ կայ Անդենականին մէջ ...

— Ես ալ քեզի նման տղէտ եմ այդ մարդին մէջ : Բան չեմ գիտեր : Ինչո՞ւ ինծի խորհուրդ կը հարցնես : Ինձմէ աւելի իմաստուն մէկը գտի՛ր հարցապնդելու համար :

Ալ չխօսեցաւ : Ոտքի ելաւ, ժպտելով սեղմեց ձեռքս ու գնաց :

Երկար նայեցայ հասեւէն. յետոյ՝ մտայ սուս. անցայ սեղանիս առջեւ, նոթեր առի պատահածին մօտին՝ ու դրի այս կտորին խորագիրը.

ՎԻՆՉ ԿԱՅ ԱՆԴԵՆԱԿԱՆԻՆ ՄԷՋ

Ա. ՀԱՅԿԱՋ

Ա Ջ Ն Ի Ի Գ Ա Ր Ա Լ Է Ք Ե Ա Ն

Ե Ր Ք՝

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆՀԱՂՈՐԴ ՎԱՅՐԿԵԱՆԻՆ

«Բագինձի մէջ ընծա պայքող բողբոջ, հասնող տառապանք
գրած բողբոջներէն է Ազնիւ Գորակէհան, որ առաջին օրէն իւր
ապագայ խժոճի մը նշանները զգացուց իր առդերունն տակ եւ բա-
ռերը ազրուած վիճակներու ծնունդը ընթացեալ զուրկ չմղեց
րեւաւ:

Հետագայ բանաստեղծութիւնները մաս կը կազմեն «Անգլիքա-
կէտ» ճամբարագութիւնն անսահման Գորակէհանի առաջին հասարակե-
ր, որ մասնաւոր տակ է եւ լոյս կը տեսնէ ի մօտայ:

Բարի ճամբարագութիւնն պիտի մղվէրէնք մենք, «անգլիքա-
կէտ» ճամբարագութիւնն...

Ինչո՞ւ, ինչո՞ւ կը տենչաս յաճախանքը անժամանակ անծանօթին
Եւ ո՛ւր պիտի երթանք, ո՛ւր...

Բանաստեղծներու ժամանակը կուգայ

հաղորդակցութեան անհաղորդ վայրկեանին:

Գերեզմաններուն հողը սովաւար կը խլարի անաւիշ արեանս ճերմակ գետե-
րէն

Եւ յարալէկներու շունչով հրաթոյր իմ հոգւոյն ձեւը կ'առնէ՝

կ'ըլլայ շարականը իմ անսերքէնք օրագրութեանս պատարագին:

Ո՛ւր պիտի երթանք, ո՛ւր...

Անապատի առաւելներուն չափ կախարդաբոյր ծառեր կան հոն երգեցիկ:

Եւ որովհետեւ ծառերուն մէջ անդրշիրմեան օրագրութիւնս կայ,

Եւ որովհետեւ ծառերն այդ միջոցն են իմ եւ իմ միջեւ,

Եւ որովհետեւ իրենց եւ իմ միջեւ ե՛ս կամ,

Կախարդաբոյր ծառերն այդ, ճիշդ ինծի պէս, սիրոյ բառեր կ'արտագրեն կա-
պոյտներէն,

որ չճաթին ձաձնրոյթէ...

Բայց ո՛ւր պիտի երթանք,

Ո՛ւր պիտի,

Ո՛ւր՝

Տօնելու ներգաղթը անապատի ծիածանեալ կրկներելոյթին...

Էութեանդ վիշապաքաղ ու նետաձիգ նայուածքներուն ժամադրուած՝
Միջերկրականեան ափերէն մինչեւ ծագերը Ծայրագոյն,

Յիշողութեան մարգերէն, մոխրաղաշտէն մոռացութեան,
Մարմինէդ ծաւալող ձայներուն ալիքներով ճամբորդեցինք
Ու վառեցինք պատրոյզն ի դուրս թաւշեայ կանաչ ու ծուռ բոցեր...

Հիմա,

Տարերքներու ալակերպման պոռթկումները միջերկրականեան այս ափերուն
Կը բոցկտան անզիր քերթաւորներու հատորին մէջ շնչաւոր...

ՏԵՂԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱԿԸՆԹԱՑՈՒԹԻՒՆ

Մթութեան գոյները գրոհ են խօլութեան
Ու անձաներու յարաճուստ ամլութեան թակարդ,
Ուր կայ խուճապ ստուերներու
Եւ խառնալուր հունչ...

Գիշեր՝

Լոյսին լոյծ արգանդէն սպրդած հո՛ղ արգասաւոր...

Թոքերս ողջ կը քամեմ տեղատուութեան պապական ափերուն,
Ուր դուն կ'ըլլաս
Թթւածինի հիւլէն անհրաժեշտ
ու կը լեցնես ինքնութիւնս տարերքով ըմբոստ:

Մակընթացութեան խելար ու քմայքոտ այս բոպէին
Կը պղտորին
Մեղմահունչ բառերով հիւսուած արեւագալ իղձերս թորեալ
ու սաղմոսներու հեպասահ ջուրերը կ'ալեկոծին՝
աչքերուդ պրիսմակին ուրուացնելով քերթաւորներս արեւաբաղձ...

Առաւօտուն,

Կարօտավառ կրունկները ասֆալթներու ցուրտ աչքերուն
Կը պատարագեն թոքերս
մայքերու քառակերպ սեղանին...

Երեկոյեան,

Այս որջա՜ն մութ արեւներ, որջա՜ն նուազ խառնափնթոր:
Ինչպէ՛ս շնչեմ պիտի, երկի՛ր, տօնածաղիդ նուրբ տրեւներուն յանդիման,
Ուր ցնորքներու անարիւն վարդեղէններ կը շողացնես տարածասփիւռ...

Բ Ա Ռ Ը

Այս երեկոյ,

մեծ քաղաքի լոյս մայթերու անկիւններուն՝
բոցեղ բիբին անցորդներուն սզագրեցի
Իմ իղձերէս բառ մը միայն:

Անցորդները լիաթոք ծիծաղեցան ու անցան:

Ուսանք նոյնիսկ

Լուռ ընթացքի խորհրդանիշ բառն այդ բեղուն

Իմ յոգնատանջ աչքերուն դէմ խաչեցին:

Այս երեկոյ,

ի՞նչ անդունդ կայ իմ հոգիին քսանամեայ:

Օ՛, բառ իմ,

մազաղաթները բիւր՝

քու լոյսերով պիտի պեղեն ներաշխարհային ոլորտներն իմ բիւ-
րականեայ

եւ հրաւիրեն բռնկումները քերթողներու արիւնին:

Ես այն ատեն

պիտի սրբեմ անէծքները ձեր ժամանակակից,

ցրուեմ պիտի ձեր բիբէն խաւարը թանձրացած,

որպէսպի տեսնէք նայուածքները մանուկներու,

խլրտումը սուրբ հողին,

ծաղիկները հապարեւանգ...

Օ՛, բառ իմ,

դուն դօղանշն ես յարալէպներու ռսկեղէն պատարագին...

ՀՐԱՅՐՔԻ ՊԱՆԵՐ

Կրկնապատկուող խուճապէն փախչող

կուգահեռ տենշանք:

Տառապանքն այս

գիշեր է կոպերուս սայրին:

Անկիւններու վրայ կը մաշի

տարփանք մը վայրագ:

Եւ նորայայտ սէր մը կը բողբոջի

համբոյրներու շարականով....

Ա. ԳԱՐԱԼԷՔԱՆ

Յ. Օ Շ Ա Կ Ա Ն

ՄԱԹԻԿ ՄԵԼԻՔԻՄԱՆԵԱՆ

(Վ. Է Պ)

Գ.

Գեղապետին տղան, քիչ մը անհանգիստ սա ելոյթէն, բաժնեկով իմ ալ վախերս, կը զատուի ինձմէ:

Կը քալենք երեքով, գեղացիները մզելով մեծ հոգի մէջ: Աջորամարտը չէր առած իրենց ոպատած գնացքը: Կանխահոգ յանձնարարութիւն մը լսելու, ծածկելու սա հիւրերուն ներկայութիւնը կը նշանակէր անուղղակի գործ ճարել շատախօսներուն, փոփոխութիւն ու արթնցնել անպայման լուշացող հարկահաւաքին ուշադրութիւնը: Գաղտնիքը մեր ժողովուրդին մէջ չունի զգայարանք: Ուշիդ անրաններ ենք, եղանք, էինք դարերով, այդ գետնին վրայ: Ու դիտած եմ, որ զայն, գաղտնիքը չենք կրնար կրել: Ամէնէն շատ պիտի տառապին անկէ անոնք, որ ուրիշ առիթով գծուար կը յօժարին բեռան բանալ:

Մէկ կողմէն կը հեռանամ սրճարանէն, միւս կողմէն՝ կ'ամբողջանեմ մտածումներս: Յստակ է ծրագիրս: Ամէն գնով հարկահաւաքին ժամանումէն առաջ հիւրերը հանել գեղէն դուրս: Նոյն ատեն իրարու հետեւ կը ներկայանան մտքիս հեքիաթներ, այդ մարդերը, անպարար, կօշիկ նորոգող, աւուղի աչկերտներ տխրողսնելու այն պարագային, երբ ինծի անկարելի դառնայ զանոնք լեռ հասցնել մուժը չկոխած: Զարդերէն առաջ թուրքերը կը հանդիպէին տարազէ օտարներու ու կը մնային անտարբեր: Հինգ-վեց տարի հտըք, կառավարական հսկողութիւնը ամբողջական ցանցով մը ծածկեր էր հայաքնակ բոլոր վայրերը: Կը վարձատրուէին օտարներու մասին «մատուցւած» բոլոր լուրերը: Ասիկա մատուցութիւն չէր, որմէ գեղացին խորունկ դարձանք ունի: 1902ին, բիւրեղացումներ տեղի ունեցած էին ո'չ միայն թուրքերու մտքին, այլեւ մեր ներքին ճակատին վրայ: Առեւտրական դասակարգը, հարուստները, հարուստացումները իրենց ազգը սիրելով հանդերձ, չէին ախորժեր տաք-դուխ օտարականներէն, բուն բառով՝ յեղափոխականներէն: Սա գեղին մէջ ալ կրնար գործել անբան հետաքրքրութիւնը: Երկու աջուրի կռիւէն փորձանք կրնար արձակուիլ սա մարդոց զլխուն (աւելի յետոյ դէպքերը արդարացուցին իմ վախերս: Մաթիկ Մելիքիմանեանի անձը ստեղծեց խոշոր տրամա, որ պատմուած է «Մնացորդացի Բ. Հատորին մէջ, «Արեւմտեան»):

Վ'առնեմ փողոցը, որ լեռ կը տանի: Հոնկէ չէ պատահած, որ ոստիկաններ զեղ մտնեն: Մեզ կը դիտեն փոքրերը, բերանաբաց, ուռած—փոր ու աղտոտ, դոյնէ՝ մա'նաւանդ: Պատիկը դժբախտ բան մըն է այս գեղին համար: Շուներ, հալելու իսկ անարաժաղիր, հաղիւ կը պղտորուին, հաւանաբար Մաթիկին ծորութէն, ու ակոյց ցոյց տալով կը գահանան: Անօթութիւնը դարկած է, նոյն չափով, անասուններն ալ: Ահաւոր պատկեր է ծեր, անպատշաճ տեսքերուն վիրահերձ քաժակները, ուր ճանճերը կը թրթոն, կանանչ ու կարմիր: Անոնցմէ անլի թշուառ խրճիթները, իրենց ոսկորներէն քակուած, շաղախէն պարպուած պատերով, որոնց վրայ քանի մը ժամուան կարկուտէ իսկ աւելորդ կը դատուի ձմեռէն առաջ: Դեղին, գորշ բան մը, ո'չ փոշի, ոչ ալ մեղ, թերեւս ճահիճին իսկ արտարուումը մինչեւ հոս, կէս ժամ հեռուները, որ կը թանձրանայ ղոնտաղի ցանցառ սալերուն, սաղուններուն, կը գունաւորէ բակերը, երբեմն յարդի ձեւով տեղաւորուելով կղմինտի հազաւորէ պ ակօսներուն: Զգուսպին հոտեր, աղբի, թրիքի, թաց շորի, խառնիխուռն նետուած փայտերու, կոտրած սալերու կմախքներուն, կը դպին ու կը նեղի, ու անլի տարօրինակ՝ կը թուին չորնալ, ճերմկելու տեղ խարդելով: Կինն էր. — Վկայի՛ պէտք կայ այդ բառով որակելու սա ցնորական ձեւերը, որոնք դեմ—դեղին, սենալու իսկ անկարող, կուրծքի տեղ փոր միայն կը ցուցադրեն, մանուկով կամ փայծաղով յդի կամ երկուքով ալ նոյն ատեն, վառնդի մալբարան սանձարձակ է, ճահիճին մէջ իր անհուն ոստայնը ամբապնդած, տարիներէ առդին: Անասելի ազեղութիւն է մերկութիւնը իրենց ոտքերուն, որոնք որունք իսկ չեն կրնար ըլլալ, քանի որ լուերու ծիրտերուն բիծերը գարշապին բանով մը կը կէտկիտեն անոնց շապկնկներները: Դէմքերը երիթացած, դեղինէն դէպի կանանչը գէշ երանգներով, մասամբ ուռեցուտրած, մասամբ կաշի դարձած: Մարդ դժուար կը հաւատայ գիրքերէն փառաբանուած գիտայոյն քոչուսին, սա դժոխքէն փախած ձեւերուն դիմաց: Կի'ն: Պէտք է հարցնել Տանթէին, թէ ինչու'ն իր գիրքին մէջ տեղ չէ տուած Քալապոյաի կիներուն:

Մեր տրիւրներ շարունակ կը գոցէ, կը ճմռէ ուռեցները ու կը ջնանայ զսպել հազը, հետեւանք՝ գարշահոտութեան կոնմներուն: Նեղուած է մէզին ու քակորին, սատակ կատուներու, հաւերու, շուներու բազմախառնուրդ բազմարուումներէն (Մեծարենց պէտք էր տեսած ըլլար սա պատկերները), ուր իրենց առէջները կը նետեն փողոցներուն վրայ բաղադրող կոյուղիները, շարունակ քլուովով հաւերուն օդին մէջ բարձրացնող իրենց հոտերը: Սատակները օրերով կը պատկին տուններուն առջեւ, բանակ—բանակ ճանճեր բըզդիւնի հանելով պղտիկներու քարկոծումէն: Ոչ ոք կը մտածէ զանոնք թիով մը նետել աղբակոյտ, ու կը հանդուրժէ այդ գարշահոտութիւնը, մինչեւ որ որդերը յաղողին ծակեկեղ մուշտակը, փետուրը, գուրս թափեն փորտովքը, հրաւիրեն ազոտներու խնճոյքը: Մնացածը, — այսինքն՝ չորացումը — պարտքն է արեւին:

— Էս ի'նչ աղտոտութիւն, աղբէր ճան...

— Լուէ՛, — կը ձայնեմ կամաց, — օտարականին թշնամի է ձայնը: Ամէն զնով կիները դիտնալու չեն սա մարդոց օտարութիւնը:

Կը հասնինք գեղին կոնակը:

Բլուր է ալ: Բայց քիչ սովորական, հերքելով բառին զուգորդ զգայութիւնները: Դէպի բացերը կլորցող ամբողջ տարածքը դրաւուած է մայրուերով, որոնք իրենց մէջքերէն քանի մը անգամ կտրտուած ու սառած ալիքներու նման կը շարունակ ետեւէ ետեւ, թելադրող ալեկոծ ծովու երես մը, որ հրաշքով մը ըլլար քար դարձած: Այդ ժայռերուն վրայ ժամանակը աշխա-

տած է կորացման, կլորցնելու, շատ միակերպ աշխատանք մը, մեղմելով բոլոր սրութիւնները, գնդակերպ ձեւերու հզօր միութիւն մը երեւան բերելով: Մարմարն է խոփը այդ քարերուն: Գորշ, ախուր երանդ մը, ըսես մորթը ըլլար այդ քարերուն, չի խանգարուիր ոչ մէկ օտար գոյնէ: Կը պակսի մառուռը, կը պակսի խոտը, թփիկը, ծիլը: Գարնան վախկոտ ծաղկի լեզուները այդ քարերու ճեղքին երբեմն սիրտի պէս առուչ-առուշ, աշնանասկիզբին կը պակսին դարձեալ: Այդ տարօրէն լերկ տեսարանը սիրաւ կը սեղմէ բոլոր աշփոյզներուն: Առաջին օրերուս կուշայի սա սարսափին դիմաց: Կը չի նէի պահերը, որոնք այդ քարերուն կրակէ կեանքը կը հսկէին, անպարագիծ տեւտղութեան մը երեսին, ու կ'ապրէին երկրին կեանքը, անոր գուշակիւի, բայց աներեւակային տառապանքը, վերակազմելով այդ աղէտներուն թափօրը, միխոնուոր տարիներու ընդհատներով... Բնութիւնը այսպէս զարնող ցաւը չէ՞ մեղմացած, որպէսզի մէշտ այդ միլիոնաւոր զարերու թաւալումէն ալ ետքը մարդիկ շարունակեն զգալ իրենցմէ ներս այդ անուն փոթորիկը տարրերուն, խենթեցած պարր սա քարէ կայսակներուն, իրարու վրայ արձակուած անբարեկէի մատներէ ու հիմա փաթթուած իրենց սուզի գորշ շղարչին: Երկաթի պատահական հարուած մը, սակայն, երբ պատահէ այդ վարչամակը, այդ պատանքը, քարը կը զսնէ աստուածային իր պայծառութիւնը, ամէնէն ազնիւ նախնի ալ ասուերի տակ ձգող սպիտակութեամբ: Ու կ'առնէ արեւէն չափիւղայ ու ոսկի, կարկենան ու զմրուխտ, այնքան առատ ու բնական, որ կը խախցնէ աշէրդ, շլացումէն ցաւելու սկսած: ... Հայրը միայն մօտիկը կը մնան սա խորհրդաւոր սպրումներուն: Անոնք են, որ սիրտ պիտի ընէին սա մօայլ, բայց ներսէն ձեւնափառ մերձաւորութիւններու հետ հաշտեցնել իրենց պատմութեան քիչերէ ընդզոացուած սա տառապանքը իրեն, ով դիտէ որ դարուն, բունի հանուեցան իրենց գեղերէն, Հայաստանի յորդ ու պայծառ կանանչատանէն ու ձգուեցան բախտին ալիքներուն, որոնք զիրենք բերին խլեակներու նման թխմելու սա քարեղէն ծովուն շրթներուն: Զըլլար այդ մայրաքուրէի ստորոտին գեղանի, հրաշալի, յորդ ու ազամանդ աղբիւրը, մարդիկ պիտի վախնային սա հակայական գերեզմանէն, որ այդ բլուրն է, երբ մէջը խորանաս: Մարմարը, որ տուած է գեղին անունը, կայծակնահար կողերու վրայ արիւնի հանգոյն կարմիր արատներ ալ կը ցուցադրէ, խորացնելով աղէտի զգայնութիւնները ներսը, կարծես պատմել ջանալով տառապանքը, զոր կրակը դրած է անոր լեարդին: Կան այսպէս գորչամոյն այդ տեսարանին վրայ ջարդուող, արնաշաղախ առանձին միութիւններ, կղզեակներու նման, որոնք դիմացէն արեան մէջ ստուած մարմիններ կը թնայդեն, նոր աւարտած ճակատամարտէ մը ետք:

— Ի՞նչ դաժան է այդ ամէնը, աղբէր ճան:

Կը նայիմ քաղցր ու հաճ հոգիով մը: Բնութեան վրայ աչք ունեցող ամէն մարդու մէջ զժուար չէ զգալ անասունէն անդին, առնուազն արուեստագէտը:

— Կը դա՞ք հոս յաճախ:

Ձեմ պատասխաներ: Բայց կը դառնամ իմ տպաւորութեան մթերքին, մօտիկ անցնալէն: Ըսի, թէ մեծ գերեզմանն էր յատակը այդ սպրումներուն (մաշը, պատանի, ամէնօրեայ ընկեր մըն էր ինծի. քաղաքէն գնուած ու վառքէ մը մէջ հասուեցած): Սուղին ընդարձակ քողը, զոր երբեմն կը զանակեն, բոժոժ-բոժոժ կը հանգուցեն դարնան հեշտ շունչին մէջէն վաղաթառած ծաղիկներ, վայրի մեղուններու կծիկ-կծիկ խորխորները, քարին իսկ մէջէն յորինուած:

Ան ալ այցուած է մահուան զգայութիւններով, քանի որ առանց պատճառի կ'ըսէ .

— Մի ինչ լաւ գերեզման է աս... :

Մտովի կ'ամբողջացնեմ նախադասութեան թելադրանքները : Այդ գեղին մէջ ես մինակ վարժապետ մը չեմ, այլեւ տառապող, ուռմանթիք թափառական մը : Դպրեւանդէն փախուստիս վաստկուած մալարիս մը, Եւրովայի ճահիճներուն մէջէն, կը շարունակէ զիս հարուածել, աշնան սկիզբները ու իմ զրկալից պատանութեան պակաս թողածը կը դարձանէ, զիս ընելով լեարդէն կրծուած (զուր տեղը չէ, որ «Անգղիոյ Կոնցիսիոն տակ»-ը օր մը գրգռուի մը առնուն եղաւ ինծի) յիմար մը : Ձեմ խօսիւր հոս կ'ինքերէն, որոնք պատանութիւննր կ'աւարտեն ամէն տղու մէջ ու կը ձեւեն մարդը : Ուրիշ տեղ մը թրեւս ինծի արուի սիրտը այդ փորձարկութիւնները պատմելու : Ամէն երեսասարդ, հետու հեղաթիւն յօրինած միակտուր արարածը ըլլալէ, բարդոյթ (complexe) մըն է անգղաշակիւի դրութիւններու : Պատմեր եմ մաս մը բան արդէն («Ներք պատմութիւն»):

Մեր առջին, գերեզմանաճարերը, ծալեծալ, համաձայն հողին վէտերուն, կարծիքի, մաթ-կանանչ անհնգիւններով պիտակաւոր : Ամբողջութիւնը տարօրէն ճշող, մահուան մէջ ճարուած կարծրութեամբ մը, յստակ՝ յիշեցընելու չափ գեղին մօտիկ միւս քնարանը, զոր ուռիներ կը հոլմանաւորեն ու մոլեխինգերուն թուփերը կը հարսնեւորեն :

Մաթիկ Մեյիքիսանեան կը կոտրէ ժայռի շերտ մը : Բիւրեղներու հալելաւոր աշուկներ :

— Ի՞նչ գեղեցիկ, — կը բղաւէ անիկա ու կը լռէ :

Ամէն քայլէ տեսարանը կը պարզէ նոր-նոր կերպարանքներ, անձրեւին բարակ անդիններով ճարտարապետութեամբ, ինքնատիպ ու ճաշդոտ, որոնք սկզբնական զանգուածէն կը ձեւեն աս սիւնաւորութեանը, սրտառուի փափկութեամբ, ինչպէս նաեւ փռեկտուրներ՝ մտքերը փուշ-փուշ ընող : Ամէն հասակով : Մաթիկ զանոնք կը նմանցնէ շատ բաներու, — մակաղած հօտի, խառնիխուռն, ո՛րը ոտքի, որն ալ պտուկած, շրջուած զանգակներու, որոնք տառապին իրենց համբուսեմէն : Որոտրդ, վարժապետ, հովիւ կը տպաւորուին աս պատանեաւորէն : Գեղացիին կը արտմի, հաւանաբար հողի պակասէն անգամ մըն ալ այցուած, երբ կը մուրի այդ ալիքներուն ներքը, փնտռելու կորուսած ոչխարը : Օտարականը, գլուխը ճօճելով կը բարձրանայ իմաստութեան, երբեմն ապշեցուցիչ խորութեամբ : Այնքան իրաւ է, որ ամէն ապրող ինքնիրմով պայմանաւոր փորձառութիւն մըն է : Ամէն ապրող դիտէ այնքան, որքան թուղթերու կայսրութեան մը ինքնակալը, որ մոռցած (ապրիլը) ուրիշները վերլուծելու կը ձգտի :

Օրը կը դառնայ դէպի էտինք : Աշնան տապը կոտրած է քիչ մը թէեւ ժայռերուն երեսին գլուը, հեւտու ու դպող, տակաւին կը նեղէ մեր դնացքը : Վարերէն մօտիկնր : Դէմի կանանչ դարաստանին ոչխարները կ'ալքիքի : Հին են հիմա հարսները, իրենց դոյլերով, կենդանիներուն պտուկները հեշտագին շոյելով ու իրարու պատմելով խոր, հոտաւէտ, արտում բաներ... : Բոժոժները կուլան : Ու հովը իր թեւերուն վրայ ճահիճէն զարկած է մօեղաներու փափկիկ ու թրթուռ շղարը : Հարիւրաւոր զգայութիւններ, անկապ մտածումներ իրար կը հալածեն դանկիւ տակ : Սրճարանի իրեն պատկեր կը բռնանայ մտքին : Հարկահաւաքը՝ ուրիշ սարսափ : Գոհ եմ, որ վտանգը առայժմ չի սպառնար աս տղոց :

Մեր արիւրձներ :

Ով պիտէ ինչե՛ր ունի զանկի տակով: Շատ պարտողը շատ գիտէ, ըսած է ժողովուրդը:

Մինակ գիտու՛մ: Ընկեր մաթիկ Մելիքեանեանցը անշուշտ յեղափոխական մըն է ու իբր այդ զինուոր մը ամէն բանէ առաջ, Անելի ուշ պիտի իմանայի իր պատերազմները: Մինչեւ այդ բոլորն, անոր բերին մէջ սա ժայռաստանը մի սփանջիլի գիրք է, Ֆետայիին գլուխն ու մարմինը պաշտպանող, անոր յարձակումները գիտող, մա՛նաւանդ Յաիւմըղ ապահովող: Ընկեր Մաթիկ վկայութեան կը կոչէ նախօրէն կայսրը, որ իր յիշատակներուն մէջ քննադատած է Վաթէրլոյի ճակատամարտին անգլիացի զօրավարը, կոխը ընդունած ըլլալուն, առանց նահանջը ապահովելու: Այդ ժայռաստանը անշուշտ ամբողջական է մի բնական» շղթայ է հոս: Վթանչիխ» սա ցցուածքները կրկինքէն պարզեւում պատնէ՛ններ: Վերանջ» կը յիշեցնեն Սասունը, ուրկէ երգեր, հեթաթ, պատերազմի տէքսաններ իմ երկրորդ մանկութեան հրաշքի աշխարհը կը յօրինեն եւ ուր գիտեմ, թէ ճիշտագործութիւնը կատարեալ է» չարաշուք տարազը թուրքերուն նորէն կը թարմանայ: Ըստ Մաթիկի, յեղափոխականը շինելուն է եւ անտեսագէտ, ազգամոմ, ու պիտի հետաքրքրուի գործունէութեան իր շրջանին բերքովը, հողերու պարտացմամբը, բարեփոխութեամբը: Ու համաձայն այդ տեսութեանց, մօտիկ զապաղարժած սա թշուառական աւանը սահմանուած է ըլլալու մի մեծ ինտուսքրիէլ կենտրոն, քանի կան սա քարերը, որոնց մարմարը ո՛չ միայն կը բաւարարէ ամբողջ Թուրքիոյ քանդակազործական եւ ճարտարապետական կարիքները, այլեւ կը ջախջախէ Յունաստանը, Իտալիան, երբ արտաձուլէ Յեղափոխականը նոյն տանն բնական գիտութիւններու ուսուցիչ ալ է, կրային մարգերու մէջ երկրաբանական յեղաշրջումներու փաստերը արժեւորելու ընդունակ: Ու է հողագէտ: Ու է բժիշկ, վիրաւորներու դարձանումին համար անդական բոյսերու լիակատար օգտագործմամբ մը: Ու ի՛նչ չէ յեղափոխականը, սա մարմարեղէն ամայքներուն մէջ, սա պզտիկ պտոյտին ընթացքին...:

Համառօտած եմ հիմա, իբր այս յուշերը կ'առնեմ գիրք, Մաթիկի մտածումները, տիպիկտիկամ, անշուշտ շատ բան զոհելով անոնց չեւտին ջերմութենէն, հարստութենէն: Խօսքի ջաղացք՝ ան այդ խորհրդածութիւնները կը բանաձեւէ մարդը հայերէնով մը, անշուշտ գիտական քերականութեան զեղծանումով մը, օտար բառերէ, որ արեւելահայ մտաւորականութեան տրտում սխրագործութիւնն էր ութսունական թուականներուն: Յանկարծ կ'անդարդաւանամ, որ անոր ընկերը բառ մը չէ արտասանած: Խո՛ւշ, հա՛մը: Զեմ համարձակիր հարցնել: Ունիմ տպագրութիւնը կուտքի մը, որուն անցուցած ըլլան պախուրց, ու քաշեն:

Հասած ենք վտանգաւոր գօտի մը: 900էն յետոյ Նիկիոյ շրջանի հայ գիւղերուն դարաւոր, բնական ապահովութիւնը խանգարուած էր պետական կարգադրութիւններով: Ատոնցմէ ամէնէն ընդվզեցուցիչը դադթականներու ղեանդումն էր, դարերէ ի վեր հայ գիւղերուն պատկանող արտօրաններուն վրայ: Լեռնէ լեռ, հովիտներու ամէնէն յարմար, ճաղամպիտական» կէտերուն, իբր թէ աւազակներուն վրայ գիտողայայր՝ հաստատուած էին մանրիկ պահակախոցներ, հին տարալիտներուն քիչ մը շատ հեշտագին պայմաններէն զուրկ, բայց իրենց նպատակին մեծ յարմարութեամբ մը: Հոն շրջուն ոստիկանները կը գտնէին զէնքը, ռազմաթիւքը, միերը ու հաղորդակցութեան ուրիշ միջոցներ, մա՛նաւանդ մարգեր, որոնք ո՛չ անտառապահ են, ոչ ալ ժանտարմա, բայց, ծխախոտի մաքսաննդութիւնը հետապնդելու ձե-

Մատուցել կը հրամայեմ լուսթիւնը, վասնզի ճամբան սկսած է փոխալի: Կոպսուտ ու կարծր կածանր, լման երեսը կազմող մարմարէն հանուած, քանի մը օր առաջուան անձրեւներէն լուացուած՝ հեղհեղէն կը լայննայ, կը փափկանայ: Դէպի վարերը փորուածը ո՛չ ձորակ է, ոչ ալ դասական կիրճը: Լայն կըլում է մը, բռնի փրցուած լեռան փէշէն, անցք մը ճարեւու համար դէպի դաշուր: Այս կըլում է, որ ժամանակին հետ վերածուեր է ճամբու, դէպի ցանուցիի գեղերը դաշտավայրին: Էշերու սուր սղոցուկը, իրարու արձագանգող իրենց զաւրափողներէն միջոցը կը լեցնէ ընտանի ու բնական բարեխառնութեամբ մը, որ աշխատուած, մարդացած վայրերը կը դառնէ անհուպ ածայթներուն կարծր, յոգնեցնող ու անիմաստ պատկերէն: Շուներ, որոնց կաղկանձը օդը կը կոծէ՝ աշային տրամուրդներ սահեցնելով հասած այգիներուն ագիովը արդէն ջերմացած սիրտերէ ներս, երբ կեանքը պահ մը կը փոխադրուի այդ բլուրները ու ամէն թուղի ծառին տակ (որ այգիին մէջ անհրաժեշտութիւն մըն է, գուցէ գիտէք պատճառը այդ խորհրդաւոր կործնցումներուն, որթին եւ թուղի ծառին միջեւ, ժողովուրդին կողմէ շատ մը խորհրդապաշտ պատմութիւններ վրայ սեւեռուած, աշայէս որ՝ արբունքի հասնող պատանիները կը զգուշացուին աշնան մուտքերուն անոնց շուքին երկարելէ) օրուան մը մէջ կը ներմկի... Փայտուորներ, բռնաորդներ: Կ'անցնինք փուռերու գիծէն: Մարմար շերտերու փողփողուն կոները, աղբ փուռերու կտուրէն հազարաւոր լոյսի երանդներ կ'ոլորեն, կը ցրուեն: Անոնց առջին ճամբան պղտոր ալիւր է՝ ձառողջովին: Հարկաւոր սակառներ, լեցուն, սպասելով կենդանիներուն:

Թուրքեր, որոնք կէտ հացով կամ երկու ափ թփովով կը փոխանակեն կիրի իրենց բեռը, — միակ բերքը սա գիւղին: Կը բարեւեմ:

Կ'անեն իմ բարեւը, անշուշտ քիչիկ մը զարմացած միւսներուն լուսթեան: Իրենց մազերուն ու թարթիչներուն եղիամին ընդմէջէն նայուածքը կ'ըլլայ քիչիկ մը թթու: Տարազը, մօրուքը (մեր երկուքին) փաստ են օտարութեան: Ու լայն իր երկրին մէջ, Թուրքը օտարը չ'ուզեր ճանչնալ, մինչեւ որ ատոր պէտքը չզգացուի իրեն: Անտրամադիր են բերան բանալու, առանց ստիպողութեան, վասնզի կիրին փոշին կրակի պէս կ'այրէ կոկորդը: Անոնք, մենք չ'անցած՝ կը դառնան իրենց աշխատանքին, կրացած քարերը գետեղեւու պարկերու մէջ:

...Անտա՛ռը:

Անոր էն խորունկ ու սաքէ բլրորովին հեռու մէկ ծմակին:

Գեղէն փախուտի ընթացքին միտք ինկած սա խրճիթը, ուր այդ եղանակին կը պառկի փորձուած ու ծանօթ հովիւ մը: Խրճիթ չէ, այլ ուղղակի վիմափոր քարայր մը, զոր շատ խիտ թաւուտներ կը պատնշեն: Հովիւին նախնական խելքը կաղնիի ոստերէ դռնակ մը յարմարացուած է անոր մուտքին:

Պատահական ընտրութիւն մը չէր, որ կատարած էի այս վայրին վերայ: Կիրին փոշին մինչեւ մէկ քիլոմետր անհաճոյ կ'ընէ այդ շրջանը, մա՛ն նաւանդ ձիերուն քիթին, որոնք կը դժկամին արդէն անհաստատ կածանէն: Ուտիկանները միշտ ձիու վրայ կը խուզարկեն սա լեռները: Յոգնեցուցիչ ու դաժան այս պայմաններուն մէջ հետապնդումը կը դանդաղի, յանգելու համար սուտին, որ հալածող լոկատներուն պատրաստ ապրանքն է միշտ: Յեղափոխական որսալը նոյնը չէ քաղաքներու անգործ օտարականին եւ սա դաշտերու մշտաբազմ ժանտարմաներուն համար: Առաջինը կը շահադործէ պատահութիւնը, աշխատանք մը ճարողի խանդովը: Նրկորդները վախէն զատ ծանձրոյթ ալ ունին, հետեւելու համար շան ոտք ունեցող քոմիթաներուն,

ասպատակներուն ու կր բաւականանան աղուոր շուքի մը՝ քուն մը քաշելով, ուր տասնապետը կր խմբագրէ լեռներու եւ դիրքերու անուններով համեմատած տեղեկագիրքը, — կատարուած թուղթի վրայ, — արշաւներով հարուստ: Անգիւլին, ասպատակներու խումբեր ապրած են սա խորշին մէջ, անհանդիստ չըլլալով հետապնդող ձիաւորներէն, որոնք չեն յօժարիր իջնել ձիերէն: Դէպի ծմակը մամբան անմատոյց է չորքոտանիներուն: Ու տեսակ մը մագլցում է հարկաւոր: Ընտանի անասուններէն միայն այծերու հօտը կը յանդդոյի այդ տեղուանքը ճարակի իջնել:

Անշանամուտին, քանի մը շարթուան համար այս բարբարոս փոսը կը դառնար բնակելի: Հովիւները, ձիւներէն առաջ, աշնան առջի անձրեւէին ընծիւղները թանկ կը նկատեն այծերու սաղմին: Տեղին բացառիկ առատութեամբ ջուրը մինչեւ քանի մը մղոն երկայնքի վրայ, մարմար ազուգանքուն — այնքան լաւ փորուած են ժայռերը, որ արտը կը թուի մարդու ձեռքով մէջտեղ եկած — եղբրքովը կը բուսցնէ բացառիկ առատութեամբ, բայց շատ արդի իրոտ մը: Անկի կարեւորը, այժմարած Ակոն բացառիկ կերպաւ է: Դնդրի ու սուր, ընտել շուք չտեսած տունկի տեսակէն: Պատուական՝ սիրտէն, որ մեր գեղերուն բացատրութեամբը զօսկի է: Ինչո՞ւ: Էրացունին այս վէպին էջերը, պէտք եղած լաշքով, անոր պէսներուն, որոնք ապրեցան առ լեռներուն մէջ ու բրին բարիք, զլիւնուն դնով, բոլոր փախստականներուն, պատապարելով անոնց հալածական երէի անդուր խոր խորշերուն մէջը իրենց զբաղաբն, ու մեռան, այծի սէրէն դուրս ուրիշ նայուածք իսկ չճանչցած: Բայց հովիւր չէ, որ պիտի կարգա՞յ մեր վէպերը:

Անոր վտառուած գաղտնիքը ծովուն տակ ինկած ջաղացքի քարն էր: Ու խօսելու գովամտութիւնը՝ ուրիշ գրաւական: Անիկա մէկ հատիկ մարդն էր, որ կը ճանչնար նաեւ քարայրին յատակէն խորացող ուղին, որ աւանդութեան մը համաձայն կը հասնէր քառորդ մը անդին, անտառին միւս թափին ապահով ծառաստան մը, ուր կրնայիր պահուիլ 10 օր, հացի տեղ կերակրուելով ճուլ-լախտով. քրքրիկով (*): Իրական, այդ ընդերկրեայ անցքը: Կ'ըսէին, թէ եւս տեսած չէի փորձողը: Իմ գիտցածներէս, Ակոն, որ երկու Հայք մերի տեւողութեան կ'իջնար վար, ու կը դառնար, կանչելովս: Ուրիշներ առկէ ալ քիչ կը յանդգնէին: Հնգրթ չէ տակա, որպէսզի սուղուիմ անոնց ետեւէն: Ձանց կ'ընեմ ինծի պատմուած նկարագրութիւնը, գետնի տակով զբաղելու համար չկրնալով լքել ողբերգութիւնը, որ երեսինն է գետին: — Բոլոր անխնամ քարայրներուն սպասող բախտը, այսինքն՝ անցքին խողովը կամարէն փրթած քարերուն միջոցով: Անոր մուտքը պաշտպանուած էր ժայռով մը, որ հարտար յարդարանցով մը կը ծառայէր օճախին իբր կռնակ: Ու մէկը միտքէն պիտի անցնէր այդ մոխրաթաթախ քարին դպիլ:

Հովիւ՛ւր:

— Դառնալու էր անշուշտ իրիկունս դէմ:

Ընտանի առարկաներ փառս էին ատոր:

Ձուարթ, զիւ խօսող, ձիգ-բերան, մարդամօտ, Մանուկենց Ակոն:

Գեղէն հեռու, ժամով:

Քարայրին տպաւորութիւնը եղաւ խիստ զօրաւոր Մաթիկ Մելիքխան-

եանին վրայ: Հեղճ՝ զ: Անոր լեզուն կրնար մրցիլ ջաղցի քարին:

Ամէնէն շատ գիտութիւնը, Գեղրգեան ծնմարանի հանգարանութեան

(*) Զուլպամտ, քրքրիկ: Խտսեր, որոմք կ'ուտուիմ ու ամէն ժամանակ հանգի-պելի եմ:

ու երկրաբանութեան դասերուն լրիւ վերջիշումովը, ուսուցչին դիմախա-
զոյն ու չնչտովը: Բոլոր խաւերը, քարի բեկորներէն ցոլացիկ միջամերը,
էսէջները, սելեֆոնները, ու խել մը աւելի բարբարոս անուններ: Դրութիւն-
ներ՝ բացատրելու համար ջուրերուն գերը կրային զանգուածներու վրայ:
Ահաւոր իր մարգարէութիւնը, որով օրին մէկը անդնդախոյս կործանում կը
պատգամէր մեծ լեռան, քանի որ անոր ընդերքը այսպէս «պնդում», տոր-
ւում» էին բնութեան մեծագոյն զազդակները: Յետոյ անտեսադիտական
պրոպալէտներ: Յիմարութիւնը թուրք վարչութեան, որ երեսի շէր քողիչ իր
երկրի անգին գեղեցկութիւնները: Իր գլխուն վկայութեամբ, յեղափոխա-
կան Մարիկը կը խոստանար «մի քանի տարուց ուղիղ մի դրախտ ամեն» սո-
ւալիերի բնակարան» չըջանը: Երկաթուղիներ, լեռնային տեսակէն «էնպէս»,
ինչպէս «կառուցում էին Շվայցերլանդում»։ այսինքն՝ ամզրընայով, որոնք
կարող էին վեր բարձրանալ «թէկուզ» ձեռքին պէս ցից սարերէ: Ու ասոնց
հետեւորդ գրօսաչրիկները, որոնք փոխանակ ճանապարհ ու ժամանակ կոր-
սնցնելու մինչեւ Զուիցերլանդը, պիտի գային հոս, աւելի տաճն ու վայն-
լէին բնութեան հրաշալիքները: Յեղափոխական Մարիկը կը մասնէր դար-
հուրեւի արագութեամբ, ասոնց անդրադառնալու, որ գրօսաչրիկներու ար-
տածումը Արեւմուտքէն է եւ ոչ թէ Արեւելքէն, որ չառ-չառ ուխտաւորներ
կու տայ մեր ժամանակներուն: Անշուշտ, անգամ մը, որ տալէր ամերիկեան
գրպաններէ հոսէր, գիւղին անտեսութիւնը մէկ հարուածով ինքզինքը կը
զտնէր: Կը ջնջէր այդ ախոռակոյտը, որմէ անցած էին զգուանքով ու անդը
կու դար «մի գեղեցիկ» լեռնային գրօսարան: Հայ ժողովուրդն ալ կուշտ հացը
կ'ուտէր, հետեւ բունապետութեան թաթերէն, զորս վերցնելու անպարան-
քին մէջ չէր ճշդեր հեղինակ կամ ազդակ, ինք, այնքան դիտուն ընկերարան,
մա՛նաւոր քաղ արածարանող:

Մարիկ Միլիքխանեանցը չգոհացաւ սակայն այս ուտիլիտար(*) խոր-
հրդածութիւններով: Ան յիշեց Թումանեանի մէկ քերթումը, ուր «մամն
մի սար է նկարագրում»։ Յետոյ Լեւոնտտովի «Կովկասը ու Արփիանի «Երեւ-
ւանու քերդը»։ Խորունկ հաճոյք էր այս ամէնուն հետեւի իր շրթներէն: Ու
արեւելահայ բանաստեղծութեան դէմ իմ ժխտական վերաբերումս զգալի
կերպով ազդուեցաւ այդ յորդ, նուրբ, երաժշտական ոգումէն: Խօսքը սուտի
չափ դիւրին ու վայել էր անոր շրթներուն:

Մեր վերեւը, սարի մը կոնը բոլիկ-բոլիկ, ուր պորեխները իրար կը խած-
նէին մարդկեղէն գաղանթութեամբ մը:

Ձարշարպին, պտուղաբող, ճաթտուն սա ամբարձումը քարին՝ խոռ-
վիշ էր խորապէս: Անքը կը փակուէր ինքնին, չկրնալով հանդուրժել սա խոռ-
տութիւնը: Միտքը կը տարուէ յուշերէն յառնող սա ժառանգաւոր նմանցնե-
լու սպիտակած վերքի մը, երկրի կեղեւին, քանի որ մզոն մը հետուն փառա-
ւոր ու դասական փաթեմութեամբ անտառը իր հսկայ կաղնիները կը հո-
վանոցէ, ընդարձակ պարոյրով ու կ'իջնէ խաղաղ, մութ, իմաստուն ու խոր-
հրդապահ: Մարը տարուէ տարի կը քայքայուի: Ասիկա կ'ապացուցանեն
նոր փոնկեկտումներ, հողերու անհուն շեղիւրուն վրայ երախ-երախ: Ու տար-
րերու սա մարտնչադին սարսափին մէջ, մարդ երախտագէտ զգացումով կը
լեցուի սա անբոյթ խորշին դէմ, որ քարայրն է աշիդ:

Կը նստինք երեքով ջուրի ափին, մարմարեայ վրան բաց խողովակ.
տեղ-տեղ կարմրած: Ձայնն ու զովութիւնը տեսակ մը ապահովութիւն կը

(*) Ուտիլիտար — utilitaire — օգտապաշտ:

ներշնչեն: Ինքներենս յաճախ եղեր եմ հոռու փնտռած երբորդ կամ շորորդ դարու ճղնողի հետքեր, որոնցմով այնքան հարուստ են գեղին միւս շրջանները:

Բրտինքը Թաւած է մեր վրայէն, ժայռառանհն ինկող շուքը տակաւ կը թանձրանայ, նուազ ընկնով շողին հեւքը ու խղզուկ հոտը, քանի արեւը պակսի վերերէն:

Ըսի, թէ արժակուած էին անոր լեզուին կապերը:

Ու կ'աւելցնեմ.

— Պէտք է փակագիծ նկատել քարայրին նկատմամբ իր դիտունի փաստարկութիւնները. իր երկրաբանական հաստատումները եւ Գէորգեան ճեմարանի փառաւոր ննջարանին այնքան անտեղի, բայց այնքան ալ անհրաժեշտ յեղարարութիւնները, ինչպէս նաեւ կառուցողական երեւակայութեան իր զեղումները շինարարական, արդիւնաւէտ աշխատանքի մասին, որ վիճակաւ է մեր մտածային: Այս բալորը սակայն հարազատ մարմնառութիւններն են անոր իմացական եւ քաղաքագիտական մեծ պատրաստութեան: Իր սկզբունքներուն համեմատ ճառանց իմացական մեծ կալուածքի չի կայ, չի կարող լինել հարազատ յեղափոխական: Կոխը առանց բանականութեան՝ մի սխալ աւանդիրաւ: Հենց՝ բժշկութիւնը չի բուարարում մի խղճածիտ յեղափոխականի պատգեքը հանդէպ իր ժողովուրդին: Այս ամէնը՝ պարզ, վճռական, շատ յստակ տարադներու մէջ, այնքան թեթեւ, որ շինեց ուղեղի տեղ գիտում գղումի կուտ կրողն հասկանալու: Այն առեւ շացուցիչ գեղեցկութիւնը այս առաւուռ ու ժողովի գողտքութիւններուն: Աւելի ետքը, Մամանա-թրութեան հռչակումը պիտի ընդհանրացնէր այս տիպարը, շատ աւելի խոր ու իրական, որքան չէ սեւեռուած Փառնոյնիով: Ինծի պիտի արուէր լայնօրէն չփութիլ սա պրոշիրեան իմաստութեան աւելի թիփէջ-(աղան) ներկայացուցիչներուն հետ, եռանդուն քարոզիչներ առնեք. անկողը՝ առտուն կանուխ շեկեղեցու դրան, ճշգրիտը խօսքը ջաճելու համար ուսումնական օտ հայ երկսեւ երիտասարդութեան, ինչպէս կը յայտարարէր պատին փակցւած կարմիր գրեթեով ազգը: Անշուշտ պէտք է լուռ անցնիլ խաչազոյնութիւն, որոնք գիրք ծախելու պազար կ'ընէին ժամերուն բակը, իրենց սրտառու զօրախտութեան լուսապսակին մէջ փրկելով մեծապատիւ ու նորօրինակ սա մարտեղանութիւնը: Ու քիչ մըն ալ չփութիլ ու անցնիլ այն միւսներուն հետ, երկար փողկապով, հիւժած մազերով պատանիներ, թրթի խմբագիր եւ ուսանող նոյն առեւ, որոնք կերպը գտած էին յեղափոխական սուրբ աւանդութեանց հետ հաշտեցնել եւ գիտական ոգի, եւ մարտական եռանդ, եւ սոցիալիստական, անտեսական, կուտութեան հարցերու հանդէպ լափիլ-զոզ հետաքրքրութիւն:

Յեղափոխական Մաթիկը պրոստաւտիպն էր (ինչպէս գործածեց ինք սա բառը չեմ լաւ յիշեր որ տեսակ յեղափոխականին համար) այս դաւոց դասակարգին:

Առայժմ, գեղին, այսինքն՝ Վասֆիին ահէն դուրս (զօրախտութիւնը մեր յեղափոխութեան, որ այսպէս ոռտիկանի կամ քուրջի կտորի մը մնաց ենթակայ) արիւրեւը, ճառանց կարիքի, շուտով կը դառնայ իր հիմնանիւթին — յեղափոխութեան:

Խոր՝ իմ գարմանքը, վախով չփոթուելու չափ, այն թեթեւութեան մասին, որ այդ ահաւոր բառինն է անոր շրթներուն: Տասը տարուան խստութիւն կայ մեր ետեւը: Ու ջարդերու ամբողջ լեռը: Իմ ակննջին անիկա կը թիւն կայ մեր ետեւը: Ու ջարդերու ամբողջ լեռը: Իմ ակննջին անիկա կը թիւն կայ մեր ետեւը: Բանի մը պարբերութիւն՝ եւ անպատճառ ճնշէ, ինչպէս կապարը թորուող: Բանի մը պարբերութիւն՝ եւ անպատճառ ճնշէ, ինչպէս ակապարը թորուող: Բանի մը պարբերութիւն՝ եւ անպատճառ ճնշէ, ինչպէս ակապարը թորուող: Բանի մը պարբերութիւն՝ եւ անպատճառ ճնշէ, ինչպէս ակապարը թորուող: Բանի մը պարբերութիւն՝ եւ անպատճառ ճնշէ, ինչպէս ակապարը թորուող:

կամուրջները, հանդիստի քարերը: Այս անփութութիւնը, թեթեւութիւնը ի վերջոյ կը տպւում որէ զիս, ա՛յնքան, որ պահ մը կասկած կու գայ վրաս այս ամէնուն, մանաւանդ սա մարդոց լրջութեան:

Տարօրինակը այն է, որ միշտ խօսի, ու խօսի ինքը միայն: Հարցումը նեղութիւն մըն է անոր համար: Նախապաշարումը ունի զայն միջամտութիւն մը նկատելու անպատրաստ մարդոց կողմէ, որոնք կը կազմեն մասսան: Քիչ են յատուկ անունները, յեղափոխական պետերէ, իր խօսածին մէջ (աւելի յետոյ պիտի իմանայի այս կծծիութեան զսպանակը, որ խորունկ նախանձ մըն էր իսկպպէս ժողովրդական գործիչներէ) ու շրջաններէ, որոնք յեղափոխական գործունէութեան թատր կը դառնան նոյնիսկ այդ օրերին, ինչպէս հազար վտանգով ձեռք ձգուած թերթ մը կը պատմէր ամէն ամիս:

Կը խօսի անսպառ եռանդով, տեսակէտներու բազմազան առատութեամբ, ամէն հարցի մասին ընդարձակ ներածումով, իրբեւ բո՛խչկ եւ շտգիւղակ: Զի նայի խօսակիցին, լայն ըլլալու առաջին պայմա՛նը:

Դժուար է զինքը համոզել սա զգուշութեանց անհրաժեշտ պէտքին դո՛ւմայ: Զղջացած է զիս մտիկ ընելուն: Յայտնապէս կը տառապի ան, վասնզի հեռու կը գտնէ ինքզինքը ժողովուրդէն, որուն խօսիլն է, զոր խանդավառուն է իր կոշումը: Ան չընդունիր զեղին բացատրիկ զրութիւնը. այդ առարկաութեան հանդիպած ըլլալուն Ալիս զետէն տագին, բոլոր զեղբերուն ալ մէջը: Վստահ է զեղապետին, տղուն եւ իմ վրայ, քանի որ մեր անունները ծանօթ են իրեն: Մեծ խանդավառութեամբ, զանդադորէն կը դիմէ փոքր տետրակի մը, որ թիւեր միայն կը պարունակէ եւ որոնք կը կարդայ զեղի ու մարդու անուններով: Ունի մտադրութիւն այցելել նաեւ Նիկիոյ շրջանը, ուր ցրուած զեղբերուն բնակչութեան ու բարքերու մասին գիտէ լայն ու լուրջ բաներ: Ուշագրաւ է ա՛րդ իր արտասանութիւնը, որքան տեղադրական ընդարձակ ծանօթութիւնները: Այնքան՝ որ կը վախնամ իր աղբիւրներով հետաքրքրուելէ:

Վիժափոր խրճիթին ապահովութիւնը, թէ աւելի նուրբ, ռոմանթիկ այլուրութիւն մը կը միջամտեն սա պահին, որպէսզի անոր մտածումները, փորձառական դիտողութիւնները ներկայանան իրենք իրենց համար անառարկելի ճշմարտութիւններ: Հասարակ տեղիքին առաքելութիւնը չէ միակ պատահաւոր այս երջանկութեան: Ո՛վ կը կասկածի վճռական այն պահանջէն, զոր հայ մտաւորականութիւնը կազմաւորած ունի, իր ժողովուրդին սօցիալական ու քաղաքական անկախութեան մասին: Անշուշտ պէտք չկայ թուրքին բան հարցնելու: Նորութիւն Քամառ-Քաթիպայէն, Բաֆֆիէն ետքը, Հիմա, Մեւլիթանեանց Մաթիկին հաւաստումովը ո՛վ կը մտածէ տարբեր, թէ այդ երազը ցարդ ապրած է գիրքերու մէջ ջերմացուած ծաղիկին նման: Յեղափոխական սուրբ, անյետմզելի գործ է զայն փոխադրել ու տնկել զանդուածներու ջերմաջերմ սիրտին մէջ:

Ու քարոզ, քարոզ, քարոզ:

Բառական սահեղեղումին դէմ (լսած պէտք է ըլլաք այս ջրվէժը՝ համոզուելու համար սարադին ճշդութեան) իմ անգորութիւնը: Մտիկ ընելը յոգանութիւն մըն է, երբ նիւթը կ'անցնի վրայէդ ու ձայնը ծանր կ'իյնայ շուրջը: Իայց այդ անկարողութիւնը կը դառնայ յուսահատական բարձրահասակ ընկերով վեհափառ այլուրութեան դէմ, վաւերական համրի մը պէս աչքով խօսելով ու մօտ ըլլալով նիւթին ու ունկնդիրին: Թո՛ւի, կեդրոնական Անտառուրի սարահարթեան թխութեամբ մը, սանկ քիչիկ մը հովէն զարնուած ու փայլատ նայուածքով: Անկիւս թէ՛ կազմ, թէ՛ դէմք՝ հակապատկերն է նրբեմի առահայուն: Փայտի կտոր մը ձեռքը, խորունկ լրջութեամբ կը փորփրէ

քարի ճեղք մը, այծի սպտուրները^(*) թոցներով, միամիտ ու մինակ՝ ինչպէս է մանուկ մը իր խաղալիքին հետ: Տրիրունը զայն չի տեսներ, նոյնիսկ կը պատմէ դրուագներ, որոնց մէջ անիկա կը կանչուի վկայութեան, իր վերցուցած բաժինին մասին: Բայց առանց պատասխանի սպասելու՝ Մաթիկը կը սահի նիւթէն՝ ինչպէս հաւատաւորներն:

Ու քարոզ, քարոզ, քարոզ: Պատմութիւն, ցեղեր, քաղաքներ, արկածներ՝ բոլորն ալ կը շահագործուին ապշեցուցիչ ճարտարութեամբ մը: Ուրիշներ իրենց դադափարները կը փոխադրեն ուրիշներու, բառերով: Անիկա բառերը միջոց է բրած իր երազները կեանքին հետ փոխարինելու: Հաւատքը տեղոյն տարազ մըն է անոր հոգեբանութիւնը պատկերող: Անիկա իր դադափարները կ'ապրի: Ու ամէն առիթ, յիշատակ, մտքի փշուր զինքը կը դնեն ալդ այրումին մէջ, որ սեւեռեալ դադափար կը յատկանշէ: Ածխացած, ազամանդ կարած յեղափոխակա՛ն:

Բարեբախտաբար կը հասնի այծարածը:

Փորձ, եփուց խոնհարութեամբ մը Ակօ աղբարը կը հրաւիրէ Հիւրերը քարայր: Ո՛չ գործանք, ոչ վախ: Նոր չէ որ այսպէս զարիւրներ կը յանձնուին իր դադափարին: Կ'աճապարեմ դառնալ գեղ, ուր անհետացումս կրնար տեղի տալ ըթիւրիմացութեան», որ դիւանագիտական բառ մըն է նաեւ խուլ այս գեղին մէջ:

Երկու շաբաթ անոնք մնացին հոն, մինչեւ որ մաշեցաւ անոնց յանկարծական երեւումին եւ Խրիմեանի քիչ մը կասկած հրաւիրող հեքիաթը: Դրժուար, բայց հետադաշ օրերով հոստատուած յեղում մը սրբազրեց վախերը իմ ու գեղապետին տղուն, որուն համար կ'անդիտանար ամէն բան: Լսեր էր առանց վիճարանութենէն, խորոզութենէն, անխուսափելի ձրիմեանէն, բայց յարեր էր ընդհանուր պատմումին, որ զանոնք Նիկիոյ շրջանէն աճապարաներ կը ներկայացնէր, մեկնած նոյն օրն իսկ, ըստ որում նոր օրէնք մը կ'արդիւնէր անոնց գործել գեղերու մէջ. օրէնքը գաւառակի պէյլին, խարուած դէշ կերպով ճարտար առաւ-փախաւէ մը:

Երկու շաբաթ, գեղապետին տղուն հետ, Գեորգ աղա (տասը տարեկանին անիկա կը վայելցնէր այդ տխուրը) ամէն գիշեր եղանք քարայրէ-որսի հրացանը, բացառիկ շնորհ, եղած անոր հօրը՝ գիւղապետին, տղու պէս ուրախ յեղափոխական Մաթիկը կը գործածէր նշանակալից ձախաւերութիւնով մը: Բայց խորունկ էին իր հրահանգները մտնիմին ձեռնումին մասին: Ու մասնագէտ էր ռումբ արձակելու մէջ, անշուշտ կլորակ քարերու ձեւին տակ, հիմա՝ որ ճաշակեալը կը դանուէր շատ հեռու: Մինչեւ յիսուն՝ անիկա չէր յոգներ օխանոց կլոր քարերը նետելու, իբր վարժ գիտուր: Բայց նիւթական, իր բառովը՝ փորձնական այս ընդհանուրը անիկա կը դարձանէր տեսական աւելի ներսօ՝ փաստարկութիւններով, որոնք յեղափոխական աշխարհահայեացքը կը նկրտէին ընդհանրացնել ճատասաներու խուլ խղճմանքներումս: Անգամ մը պատուէր՝ այդ մութը, յեղափոխական սուրբ գործը կարելի էր համարեն փրկուած: Հիմա՝ մատի վրայ, այն ատեն՝ հազարներ պիտի ըլլային դիտակից գիտուրները: Մեր գլուխը ժամերով պատրաստ եղաւ դիմա-նալ այս իրական քարկոծումին, ա՛յնքան, որ դարձաւ իր կարգին ճմի հնոց յեղափոխական սուրբ դադափարի: Անհուն էր անկապակցութիւնը այս յեղումներուն մէջ ու կարելի չէ իր խօսքերը տալ հոս իր ձեւովը: Մնաց որ, մեծ

(*) Սպտուր.— այծիմ քանդակ:

մասը այդ սուրբ գաղափարներուն, այսօր դադարած են իրենց սրբութենէն ու թանգարանցու ապրանք կը հոսին :

Բայց այդ դժբախտութենէն զերծ է, գոնէ իմ մտքին մէջ, իր դէմքը, որ չէ կորսնցուցած սիրուն, աշխոյժ, իմաստուն իր գեղեցկութիւնը, երբ մեծկակ բոցի մը լուսուն՝ կը կարծրէր, կ'աննիւթանար, քարայրի օճախին առջին ու «գաղափարով» լուսապսակ» կը մեծնար իր դիւրարեկ իմաստէն : Ջերբակալումէն յետոյ, տանջանքի տակ իր արիութիւնը, ոչ մէկ անուն թուրքին չյանձնելու իր յամառութիւնը, մահուան մէջ մտնելէն ետքն ալ իր յոյսը անմեռ պահելու իսկապէս յեղափոխական շնորհը, տարիներու խաւէն կ'անջատւին հիմա ու զիս կը մղեն ապուռ տնոր դիմագծութիւնը, կենդանագիրը, իբր հատընտիր նմոյշ սերունդէ մը, որուն բարոյական շէնքը անձանօթ է մնացած տաճկահայերուն, գոնէ անոնց, որ կ'իյնան Ալիսէն առդին :

Անշուշտ, ստիպուած տալու, քիչիկ մըն ալ բան իր գաղափարներէն, նկատելով անհուն կարեւորութիւնը, որ ինք կ'ընծայէր ատոնց :

Առանց այդ «մեծ», «գորաւոր», «կենարար» միտքերիմ, պարզ կեանքի դրուագումը պիտի ըլլար սրբապղծութիւն մը անոր նուիրական յիշատակին, քանի որ անիկա չապրեցաւ իր սուր մօրուքին համար : Անիկա սերմանողն էր գերազանց : Ու նոր արտերու արշաւին մէջ կը հասկնար իր իմաստը :

Այդ կէտէն կը մեկնի անոր զառածումը դէպի սա ապերախտ, դաւաճան դաշտերը, ուր մահը որսաց զինքը :

(Շար. 4)

Յ. ՕՇԱԿԱՆ

Յ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Պ Է Ր Պ Է Ր Ե Ա Ն

ՇՐՋԱԴԱՐՁ

Արեւադարձային բոյսեր,
որոնք կը փշրեն
ծիրանի փողմ առաւօտի

Շեղբերն կանանչ տերեւներում
կը պատռեն եիմ երկինքը,
որ իբրեւ տեֆոր ինկած է ետին,
եւ անձրեւները հասարակացի
կ'իյնան հողերում
եւ ալիքներում ծովու,
որոնք տերեւներ կը գծագրեն

Եւ սեւամորթ բոպիկ ազգնակներ
կը փրցնեն զանոնք
ու կը քայեն անձրեւին տակ
թանձր. կանանչ տերեւներով պաշտպանուած

Տերեւն գիրենք կը պաշտպանէ անձրեւէն,
նառագայթէն արեւի,
բայց շողերը ջրածնային ռումբերու
ալիք-ալիք կուգան գիրենք ռզազելու

Եւ մեծ մօզին կախարդանքը
չարէն պիտի չպաշտպանէ
բոպիկ սեւամորթ ազգնակները,
որոնք կը քայեն անձրեւին տակ

ԲԵԻԵՌԱՅԻՆ ՕՐ

դէմք մը

ֆարացած շրջապատին մէջ:
Սառցակոյտերէն, լուսքենէն ետք,
աչքեր դարեր կը դիտեն
խորուքեամբ մ'ունայն

— Իսկ խաւին տակ սառցակոյտերու
կը շարունակուի
բջիջային առօրեան —

Ու ր սկսաւ այս խաղը .
առանձին էինք՝ փակուած մենք մեր մէջ
Իսկ ռիթմերը իրենց
առանձնութիւնը կը ծածկէին, շարունակ
մոռնալով զիրենք ֆազաֆներու մէջ
... մտածումը կեդրոնախոյս կը փախչէր
կարծես ոչ մէկ տեղ
կարենալով դանդաղիլ :

Սկեսպտիկ ձեւով կեանքը դիտելը
ճախընտրելի է :
Օտարութիւնը մագնիս է հրաշքի
Արիւնն այլեւս կարծես չի կրնար
տանիլ սերմեր հարագատ
— Եւր ծաղիկները միտի կը թառամին
ու արիւնը կը շարնայ —

Մարմինը կ'իյնայ :
Կը կրկնուի շարժումը :
Հիմա՝ երկրորդ օտարութիւն
հետզհետէ կը փայփայուիմ
կողքիդ երկարած ,
մինչ դուն ապշած՝ անտարբեր կը դիտես զիս :

Ո՞վ էր , որ ինքզինք ջնջեց
չկորսնցնելու համար :

ԼՐԻՍՆԻ ԼՈՅՍ

Գիշերները պատուհանները կը պահենք բաց ,
որ թարմանան մարմինները մերկ
եւ լուսնի լերկ լոյսին տակ
մեր քրտինքը կը պաղի :
Իսկ աչքերս ապակի
կը դիտեն մարմինդ

այլափոխուած այդքան՝
անմահաչելի

— կրկնեք եւ յոյսեր ինչպէս
միսերէդ՝ դուրս կը բացուին
այլ մարմիններ կրանիթէ եւ ընդերկրեայ ջուրերէ ,
որոնք կը ծփան
ժամանակի տարածքին —

Եւ երկարած ես հիմա, դեղահատերու ազդեցութեան տակ,
 իսկ ես չեմ կրնար
 — քանի՜ տարի է —
 կռուել փակել
 (Ես չեմ կրնար հաշտուիլ
 մտքի ու մարմնի
 զուգակցութեամբն)
 կը կտրտեմ քու դէմքդ՝ միացնելով ալապէս,
 կը կտրտեմ մաշած պատկերն քաղաքին
 պատուհանէն ներս խուժող

Եւ այս ամէնը, գանձ,
 փլասթիկէ լոյսին տակ,
 թնշուճ իրեր կը դառնան...

Զգացրդիւ քայքայում է.
 քայքայ մեզմէ ոչ ոք
 գայն կրնայ ճշտել:

ՀՐԱՀԱԽ

Վարսէր շողէ
 կը տարածուին
 քափանցելու քաղաքի
 պատերէն ներս
 եւ ծովափին:

Կը կարծէի,
 թէ թռչուններն խեղդուած են
 կամ կը ծփան
 ապակեմած ջուրերուն վրայ:

Բայց դու, որ թեւեր ունիս
 տակաւ ծառայում
 — Հրահաւ մը
 որ առաւօտի կրակ է միայն եւ ոչինչ կ'ըսէ,
 խորհրդաւոր ծպիտը ունի
 Մոնալիզայի —
 կը շարունակես թեւածել
 — առանձին՝
 լուսաստղը ինչպէս —
 մեքենական այս երկնքին մէջ:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ԵՐԵՔ ԵԱՐԺՈՒՄՆԵՐՈՎ

• • •

Երբ միսերը աղջիկներուն
վարդենիի պարտէզներ են ,Միջերկրական ,
եւ սարսուտներ կը հասին
մարթին վրայ , արեան մէջ ,
եւ աշէրուն ինկած է
առաւօտը , ծառերը ,
ինչպէս լուսապատկերի
արունստական խաղ մը :
— Այլակերպաւոր անորոշութիւն
մարմիններու մէջ , որ կը տարածուին...
եւ կաին մէջ կ'արթննայ կինը —

• • •

Գիտես միսերն կիներուն , որոնք գրգիռ են , յետոյ
պատուար անթափանցելի
առանձնութիւնդ , ուր կը գայրթնու .
իսկ անոնք մարդկային ծովուն մէջ ,
նակատագրէն բռնուած ձուկեր ինչպէս ,
յանախանձով չիտեղդուելու ,
իրենց էութեամբ չ'արանալու ,
կը նետուին դուրս ջուրերէն :


• • •

Դուն կը վագէիր շատրուանին շուրջ
օր մը սեւեր կամ սպիտակ հագած :
Մենած մարդու մը միսերուն դիմաց
առանձնութիւնդ
եւ ձանձրացած ֆաղֆենիի շաւարումդ ժայթքեցիր :

Հիմա նստած ես դէմս ու կը խօսիս շարունակ .
մինչ պարզ բառերէ , զգայնութիւններէ , Ժպիտներէ
ամէն վայրկեան կը ծնիմ :
Իսկ այս կէտ-կէտ պարապութիւնը մեր միջեւ ,
պատառ մը ինչպէս մեզ ալ իր մէջ կ'առնէ :
Գունաւոր կէտերէ աշխարհ մը կ'արծես ,
որ հետզհետէ կը գունաթափի :



ԻՎԱԿԱՆ ՇԱՐԺԻՆԿ



Որպեսզի բանտերը յալիսեմապէս անհետանան, մենք մօր բանտեր շինեցինք:

Որպեսզի բոլոր արգելիմները վերանան, մենք Զինական Պարիսպով շրջապատեցինք մենք զմեզ:

Որպեսզի աշխատանքը վերածենք հանգիստի եւ հանգստի, մենք կալանաւոր աշխատելակերպը արգելեցինք:

Որպեսզի այլեւս կտրիլ մը իսկ արիւն չքափի, մենք սպաննեցինք, սպաննեցինք, սպաննեցինք:

ԱՆՏՐԷ ՍԻՆԵԱՎՍԿԻ

Գորոզներու ճակատագիրը յեղափոխութիւններու ընթացքին անուն Լէոփոյտ Լապէցի ուսումնասիրութիւնը, որուն հրատարակութեան սկստնք մեր նախորդ թիւով, իր հետագայ մասերուն մէջ յայտնէին անդրադարձած է Զօհանբերեան Յեղափոխութեան հանգեպ ուսուցողներու որոնգործ կենդանոցին ու ապրած փորձառութիւններուն, որոնցմէ մէկն է խորհրդային դրութեան ահաւոր հակառակութիւնը պատկերացընող Ամարէ Սինեավսկիի վերի սու երգիծանքը:

Ամարէ Սինեավսկիի անձնաւթ անուն մը չէ մեր ընթերցողներուն: Բացինք 1966ի Ապրիլ, Մայիս եւ Յունիսի համարներուն մէջ Թարգմանարար ներկայացուցած էինք Ժամկանունի մը տակ արտասահմանի թերթերուն յանձնած իր զԸԱԿԻՐՎԱՐԱԿԱՆ իրապաշտութիւնն խորագրեալ Ժառանգութիւնը, որ եղաւ իր ձերբակալութեան (1965) գլխաւոր պատճառներէն մէկը:

Լէոփոյտ Լապէց այդ նոյն յօդուածին առած

է վերի ախտահանումը, որուն անմիջապէս կը հետեւին Սինեավսկիի սեւագրած Նոյնեան մօայլ այլ երևոյթներ եւս եւ, վերջապէս ա՛յն, որ՝

Եւրոպեայնայնապէս կը քուլտը, թէ ամբողջապէս յազրամանկելու համար՝ համայնապարտութեան կը պակսէր վերջին ողջակէզ մը, — հրաժարիլ համայնապարտութենէն:

ԵՏԷՐ, ՏԷՐ մերէ մեզի մեր մեղքերը:

Ոչ ոք գիտէ, թէ Տէրը ինչպէս վարտեցաւ Սինեավսկիի պերսանքին հետ, բայց ամբողջ աշխարհը գիտէ, թէ տէրեւր շնորհքին իրեն եւ ստիպեցին, որ եօթը տարուան տատանակիր աշխատանքով մը շուէ համարտութեան համար բերան բացած ըլլալու իր գնդերը:

Ծամբարային իր բաժակը ըմպելէ յետոյ, Սինեավսկիին արտօնուցաւ անցնել Ծրանաս (10 Օգոստոս 1973), ուր, ներկայիս, կրան Փաշէի մէջ, շարաթը երկու անգամ ուսուսական գրականութիւն կ'աւանդէ:

Լ Է Ո Փ Ո Լ Տ Լ Ա Պ Է Ց

ԳՐՈՂՆԵՐՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ

Հայացուց
ԳՆԱՐ ՃԻՆՊԱՇԵԱՆ

Յեղափոխական մեր ներկայ դարա-
շրջանը աւելի խոսուն օրինակներ կրնայ
հայթայթել զբաղանդութիւն-յեղափո-
խութիւն փոխարարութեանց եւ ա-
նոնց միջեւ բռնուող զրոգներու ճակա-
տագրին շուրջ: Ամէնէն ընդհանուր գեա-
նի վրայ գոյութիւն ունի հեղեական
(ironical) հակադրութիւնը նախայե-
ղափոխական արուեստագէտներու եւ
զրոգներու մահկանացու ճակատագրին
միջեւ, երբ անոնք կը մտեն յեղափոխա-
կան կամ ոչ-յեղափոխական վարչակար-
գի մը տակ: Փարատոքս է թէ եւ, բայց
բնական մահ՝ բնական է անոնց եւ միայն
ա՛յն ատեն, երբ տեղի կ'ունենայ ոչ-յե-
ղափոխական վարչակարգի մը տակ: Թե-
րեւս չափազանցութիւն կ'ըլլայ ըսել,
այսուհանդերձ, անուարանալի իրականու-
թիւնը ա՛յն է, որ զբաղանդները ստեղ-
ծագործական աւելի լայն ազատութիւն
վայելած են նախայեղափոխական շըր-
ջաններուն, քան յեղափոխութիւններէ ան-
միջապէս ետք: Նոպէլեան վերջին երկու
պսակաւորներուն՝ Սոլժենիցինի եւ Նե-
բուտայի պարագաները յատկանշական
են այդ ուղղութեամբ եւ կը յստակա-
ցնեն վերոյիշեալ կէտը: Ուրիշ օրինակ
մըն է Պրեխթ, ուրիշ մը՝ Փիքասո, որ
հակառակ 1945ին Ֆրանսայի համայնա-
վար կուսակցութեան միացած ըլլալուն,
իր «ձեւապաշտ» (formaliste) պատասա-
ները մինչեւ օրս չեն ցուցադրեր Խոր-
հրդաշին Միութեան մէջ: Ի հարկէ
դեռ կարելի է նման օրինակներու ամ-
բողջ շարք մը տալ:

Հետեւաբար, զարմանալի չէ, որ
երբ բազմաթիւ զրոգներ, որոնք հա-
տատապէս կը հաւատային, որ դէպի
Մոսկուա իրենց ուխտագնացութեամբ
«կ'երթային տեսնելու ապագան եւ ա-
նոր մուսմուսները», մերժեցին հա-
տատուիլ իրենց երազներու երկրին մէջ,
երբ առիթ ունեցան ընտրութիւն կատա-
րելու:

Երբ Լիոն Ֆէօթթվանկէր 1937ին Մոս-
կուա այցելեց, տեսաւ անոնց «բնական
ազատութիւնը» (եւ զրեց զիրգ մը՝ ար-
դարացնելով Մոսկուայի դատաւարու-
թիւնները), բայց ինք նախընտրեց ապ-
րիլ փախտականի կեանք մը — «ձեւա-
կան» քաղցեհիական ազատութեան մը
տակ նախ՝ Ֆրանսայի մէջ, ապա՝ Ամե-
րիկա: Զիչը նոյն ձեւով վարուեցաւ
Հայրիխ Մանն, որ տարիներ շարունակ
պարեցաւ Միացեալ Նահանգներու մէջ
եւ երբ երկարատեւ տատամուսներէ
ետք որոշեց մեկնիլ Արեւելեան Գերմա-
նիա, «մեռաւ»: Պրեխթ հաստատուեցաւ
հոն, բայց պահեց իր աւստրիական ան-
ցաղիւրը, ինչպէս նաեւ իր հաշիւները
Շուէտի մէկ գրաժամտան մէջ:

Աւելի դիւրին է գրադէտներու հա-
մար իրենց յեղափոխական կապերն ու
հաւատը պահել իւթփիխայի մասին,
երբ դատապարտուած չեն անոր մէջ
պարելու: Զարմանալի չէ, որ մեր դա-
րու յեղափոխական փորձառութիւնը
հանդիպեցաւ հակասական անդրադարձ-
ներու թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին ճա-
կատներու վրայ: Պարզապէս ապշեցու-

ցիւ է թիւն ու որակը ա՛յն գրադէտե-
րուն, որոնք թէ՛ ժամանակաւորապէս
եւ թէ մնայուն կերպով խանդավառուե-
ցան յեղափոխութեամբ եւ նոյնացուցին
զայն խորհրդային դատին: Անոնց մէջ
կարելի է հաշուել շարք մը անուններ,
ինչպէս Անաթոլ Ֆրանս, Ճորճ Պերնար
Շօ, Բոմէն Բոյան, Հանրի Պարպիւս,
Թէոտոր Տրէյվոր, Ալֆրէն Սէնքլէր,
Անտրէ Մալրօ, Ժիւլիէն Պէնտա, Ժան
Կիւհննօ, Փօլ Նիգան, Անտրէ Ժիտ,
Փօլ Էլիար, Լուի Արափոն, Ժան-Փօլ
Սարթր, Սիմոն Ար Պօլուառ, Սին
Օ՛ Բասէ, Փանսիթ Էսթրաթի, Մարթին
Անտրիսըն Նեքսօ, Լուսիլի Բէն, Եռ-
հաննէս Պէշր, Թէոտոր Փիլէվիէր, Հաբ-
տրի Լաքսնէս, Իկնացիօ Սիլուն, Սեզար
Փալէս, Էլիօ Վիթորինի, Վաքսօ Փրա-
թոլինի, Քարլօ Լէվի, Ճոն Տոս Փաստօ,
Էտմընտ Ուիլսոն, Է. Է. Քամինկզ, Բի-
շարտ Բայթ, Ու. Հ. Օտըն, եւ շատ մը
ուրիշներ:

Երէնալ գրողները, բոլո՛րն ալ, կոր-
սնացուցած են իրենց հաւատքը, իսկ ու-
րիշներ կրած են զգալի բարեւշտմէնք:
Անոնցմէ իւրաքանչիւրէ, Է. Կարելի, կը
ներկայացնէ անհատական առանձին պա-
րագայ մը, բայց ժամանակին բոլորն ալ
փարեցան յեղափոխութեան առասպելին
(myth), ունենալով հանդերձ տարբեր
ենթաճող ու անհատականութիւն: Ինչ-
պէս իրենց նախորդները բրին Ֆրանսա-
կան Յեղափոխութեան ատեն, այս գր-
ողները ողջունեցին Ռուսական Յեղա-
փոխութիւնը՝ իբրեւ ազատութեան եւ
արդարութեան լուսատու մը:

Սկիզբէն եւեթ, գէպի իրենց յեղա-
փոխութեան Մեքքան կատարած ուխ-
տագնացութեան ընթացքին՝ անոնք տար-
ւեցան ո՛չ միայն քաղաքական միամտու-
թեամբ, այլեւ ցուցարհերեցին պատրաս-
տակամութիւն՝ արդարացնելու համար
քաղաքական բրտութիւնները: Յարգար-
ժան սկեպտիկը՝ Անաթոլ Ֆրանս, կը յայ-
տարէր, որ շեթ մարդ փափաքի տեսնել
հաստատուած արդարութեամ մը իշխա-
նութիւնը, հարկ է որ ամ անցին անոր
նուազումի իսկզբումներէն՝ անարդա-

րութիւններէ, դաժանաւթիւններէ, ար-
նահեղութիւններէ: Ան դադարաւ իսկ
շունչէր, թէ ինչ կրնար ըլլալ նման երեւ-
ւոյթի մը կշիռը Չորդ դարուն (հակառակ
կուսակցութեան կամքին՝ ան պաշտպա-
նեց ոռւս ընկերավար յեղափոխականները,
որոնք դատապարտուեցան Մոսկուայի
մէջ, 1922ին):

Աւելի ուշ, աստիճանաբար ծնունդ
առաւ տարբեր մտայնութիւն մը, ուր
բարոյական ըմբռնումը կը միացուէր
աւարեկական մենապիտութեան: Սոյն
մտայնութեան աղբիւրը կը հանդիսա-
նար Պրէիսիթ ճճայ Մասնաւորմը
(Die Massnahme) ուր հեղինակը կու-
սակցութիւնը կը դասէր բարոյականէն
գերիվեր: Նոյն առիթով կարելի է յիշել
Օտընը, որ իր «Սպանիա» զերթուածին
մէջ կը դաւանէր «յանցանքին գի-
տակցութեւ ընկալումը անհրաժեշտ՝ ու-
ճերին մէջ»: Իսկ Մերլօ Փոնթի իր
«Մարդկայնութիւն եւ ահաբեկչութիւն»
(Humanisme et Terreur) անուն գործին
մէջ կը ներկայացնէր Ստալինի կեդրո-
նացման ճամբաներու զոյութիւնը ար-
դարացնող մտայնութեան ճիւղ հակա-
ռակ տրամաբանութիւնը:

Ստալինեան շրջանին ապրող մար-
դոց արտայայտութեանց բթամտութիւնը
կ'անցոսնէ ընական հասկացողութիւնը:
Նման արտայայտութիւնները գրի առ-
նուած են ո՛չ միայն յիմար օրագրողնե-
րու կողմէ, ինչպիսին են Հէուլէթ Յոն-
արն, Աննա Լուիզ Սթրոնկ, կամ Ուէպս,
այլեւ մեծահռչակ զրազէտներու կողմ-
է: Բոմէն Բոյան կը կարծէ, որ Ստա-
լին կ'ընծայէ լուսագոյն հաւաստիքը, թէ
պէտք է պաշտպանուի «խմացականու-
թեան իրաւունքը»․ Ճորճ Պերնար Շօ
Ստալինը կը համարէ «չաւ ունիդիք»
մը, Հայնրիխ Մանն կը հաւատարացնէ,
թէ Ստալին պիտի հակառակի մարա-
շխատ յորջորջումին աւելի քան մտաւո-
րականին, իսկ Ֆէօֆիթսկինը կը գրէր,
թէ «տաղտկալի է Ստալինի համար
կուռքի վերածուիլը, բան մը, որ կ'ըլ-
լայ արդէն»:

Մեծ Մաքսագործումներուն ըն-

թացքին, Ախմաթովա իր «Հնգեհան»-
գիտւո. անուն բանաստեղծութեան մէջ
կր դրէր Հետեւեալ տողերը.

Այս կինը հիւանդ է՝ մինչեւ իր ոգ-
նուղեղը.

Այս կինը ամբողջովին միմակ է.

Մեռած ամուսին մը ռնի, հեռացած
գաւակ մը

Բանտին մէջ: Աղօթեցէ՛ք ինծի հա-
մար: Աղօթեցէ՛ք...

Մոսկուայի գաղտնաբերութիւններուն
ընթացքին գաղտնաբերութեան մա-
սին Արակոն կը գրէր. «Այս մարդերը
ամենից նկատելի» կը նշանակէ որդեգրել
Հիթլերեան թեզը՝ իր ամբողջական կե-
տեքում մէջ: Երբ Տէյլիտ Ռուսէ ուղեց
Հանրութեան սեփականութիւնը դարձու-
նել Ստալինի կեդրոնացման ճամբանե-
րուն մէջ տեղ գտած իրականութիւնը,
Ստորթ դէմ կեցաւ անոր, գրելով, որ՝
«Փիլանթրոփ աշխատանքները պէտք
չէ գրելի իրենց յոյսերէն»:

Ո՛ր յանդեցան ռուս գրողներուն
յոյսերը:

Գորկի իր «Մայրը» անուն յեղափո-
խական «գաղտնի» գործին մէջ կը նա-
խատեսէր, որ յեղափոխութենէն ետք
«Ռուսիա պիտի ըլլայ ամէնէն փայլուն
ժողովրդավար պետութիւնը ամբողջ
աշխարհի մէջ»: Իսկ երբ յեղափոխու-
թիւնը տեղի ունեցաւ, այդ Համոզումը
նուազեցաւ անոր մօտ: Խորհրդային
Միութենէն զաղթած գրողներու մէջ էին
Պիւսին, Անտրիյեւ, Բերտեյեւ, Մերեզ-
կովսկի, Ջիլիատա Հիլփիուս, Բէմի-
զով, Պալմոնի և Խոտասեի: Նոյն-
պէս և Ալեքսէյ Թորտոյ, Ճիւթայեւա,
Էրենբուրգ և Փրէնս Միլսկի, որոնք,
ըլլա՛րն ալ, աւելի ուշ վերադարձան
Ռուսիա: Գաղտնիկ թուականները յա-
րաբերաբար կը նկատուին խորհրդային
գրականութեան ոսկեդարը: Դեռ պար-
տադրուած չէր «Հնկերովարական իրա-
պաշտութիւն» անունով ծանօթ լուծը:
Նէփի տիրապետութեան տակ ողբկան

չնչելի ժխտութեամբ կար գրողներու
Համար և գրական Հակամենքու պայ-
քարը որոշ չափով թոյլատրուած էր:
Արուեստագէտներ և յառաջապահ գր-
ողներ տակաւին որոշ պատրանք կը կր
սնուցանէին՝ գտնելու Համար ներդաշ-
նակութիւն մը ընդդէմ գրականութեան և
քաղաքական «գաղտնաբերութիւն»:
Բայց կու-
սակցութիւնը կը դառնար բացարձակ
մենատէր և միայն ժամանակի Հարց էր
նաեւ գրականութեան սահմանը:

Զամաթին, որ իր «Մենք» յէպին
մէջ Ստալինը կը ներկայացնէ Մեծ Բարե-
բարի մը պատկերով, նոյնպէս մեծ ազդե-
ցութիւն կ'ունենայէ նման կաշկանդումէ
մը, երբ կ'ըսէ, թէ այնքան
ստան, որ ռուս գրողներուն չի
թոյլատրուիր գրել առանց իշխանու-
թեան պարտադրանքին, «մեր գրակա-
նացումը պիտի ձևանայ միայն մէկ
ապագայ, — իր մեղեքը»: Եւ այդ էր, որ
պատահեցաւ իրապէս: Մանտելշթամ
այդ միտանդր զգաց աւելի կանուխ,
1923ին, երբ կը գրէր «Տարիքս, գագա-
նը» անուն իր բանաստեղծութիւնը:

1930ին, Բոման Ճէքըպըն գրեց
«Սերունդ մը, որ մխիթ իր Բանաստեղծ-
ները» (The Generation That Squandered
its Poets) յօդուածը, ուր ան կը նկա-
րագրէր ճակատագիրը չորս ռուս բանաս-
տեղծներու, որոնք ընդունած էին յե-
ղափոխութիւնը, և ճակատագիրը ու-
րիշի մը, որ մերժած էր զայն: Ճէքըպ-
սըն կը յիշէր «Կուսիլովի մահապատիժը,
երկարաճողուած հողեկան մղձաւանջները,
փիզիքական անտանելի տանցանքները,
Պլեքի վախճանը, ահաւոր գրկանքները,
Խլեպիկովի մահը, Դսեմիի և Մայա-
կովսկիի կանխամտածումած ամճառապա-
նութիւնները»:

Այս բոլորով Հանդերձ, յօդուածին
եզրակացութեան մէջ կը յտառացուէր,
որ խորագրին մէջ յիշուած սերունդը ըսե-
րունդ մը չէր, «որ մխիթ իր Բանաս-
տեղծներն ալ գրագէտները»:

Խորհրդային Գրողներու Առաջին Հա-
մագումարին, որուն կը մասնակցէին նա-
և արեւմտեան գրականութեան փայլուն
ստեղծերէն ոմանք, ինչպէս, օրինակ, Ժիտ

և *Մալրո*, ժտանով կր գովարանէր խորհրդային դրականութեան մէջ առկայ լաւատեսութիւնը: «Մեր գրականութեան քոյաւորութեան է խանդավառութիւն և հերոսութիւն»: Դարձի եկած Գորկին, որ այն ատեն խորհրդային դրականութեան Պատկառնիկ Մերուկն էր, կ'անդադարանար ընկերօրէնական իրապաշտութեան հրամայական անհրաժեշտութեան: Ան հռետորեցական կը նկարագրէր իբրեւ եղասալիք մը, որ երբեք չկրցաւ ըմբռնել մարդկային օւղեղին գործնակաները, և կ'ը յայտարարէր, որ «իբրաւ գրականութիւն ու հշմարտութիւն կ'ը գտնուին ծագովորդին ծագէն ելած հերոսներուն մօտ, աշխատաւոր դասակարգի աւանդական ու մշտագոյն ա'յն հերոսներուն, ինչպիսիք են Պրոմէթէոս, Սկեպարկոր, Իվան տը Սէմփլը, Փեթրուշեւ և, վերջապէս, Լենինը»: Մալրո կ'ողջունէր Սպիտակ ծովու ջրանցքին բացումը (կառուցուած սարկային աշխատանքով) և կ'ընդունէր ընկերօրէնական իրապաշտութիւնը իբրեւ «արժէքաւոր մեթոտ մը՝ արտայայտելու համար պարզապէս հերոսական առաջադիւն ի նպատակ իր դիրքորոշումը»: «Ըր կարծեմ, որ ինչպէս Նիցշէ ժամանակին առաւ մարդը իր անմշակ կացութեան մէջ և գայն բարձրացուց Ջատաթուսթրայի մակարդակին, Ուոյնպէս և մենք պէտք է անգամ մը ևս, եւ ծիծաղելի բոլոր գգացականութիւններէն առդիմ՝ վերակոչեմք բոլոր արժէքները, որոնք մարդերը կ'ը միացնեն և կ'իմաստաւորեն մարդկային եղբայրութեան արտայայտութիւնը»:

Վերեւ յիշուածը բոլորովին անյարմար նկատողութիւն մըն է այն ժամանակին մէջ, որ կ'ը բանար գերիրապաշտ չրմանը խորհրդային կենսեցին և գրականութեան մէջ:

Երկու տարի անց, Գորկի կ'ը մեռնէր, իբրեւ հետեւանք իր բժշկներուն «ճիգին», որոնք կ'ործանելու համար խորհրդային գրականութիւնն ու յեղափոխութիւնը, կ'ը վաճաղէին անոր առողջութիւնը: Տարի մը ետք, ժիւ, որ 1932ին կ'ը գրէր, որ իր զոարժը ունի կ'ոմանկամ բնոյթ մը և կ'արտայայտէր իր այն հա-

մողումը, որ «խորհրդային Միութիւնը կ'առաջնորդէ ազատագրման ուղիին», կ'ը յայտարարէր. «Մարդ պէտք է տեսնէ երևոյթները այնպէս՝ ինչպէս որ են անոնք և ոչ թէ պէտք է պատկերացնէ գանձնէ այնպէս՝ ինչպէս պիտի ընէր քաղաքի երագի մը մէջ», և կ'եղբարեակէր՝ ըսելով. «խորհրդային Միութիւնը յուսալիքաւ ըրաւ մեզ մեր խորագոյն յոյսերուն մէջ»: Վերջին խօսքը կ'ը դառնար շարժառիթը (leitmotif) Արեւմուտքի ա'յն դրողէտներուն, որոնք խանդավառութեամբ որդեգրած էին Ռուսական Յեղափոխութեան դադափառները, ապա՝ պատրաստաբախ հեղած, այնպէս՝ ինչպէս պատահած էր իրենց նախորդներուն, Ֆրանսական Յեղափոխութեան պարագային: Ի բաց առեալ անկէ, որ որոշ նմանութիւն մը գոյութիւն ունէր երկու յեղափոխութեանց միջև, Ռուսական Յեղափոխութեան հաւատացողներու պարագային այդ նմանութիւնը երեւակայութեան ուժով կ'ը շափազանցուէր և կ'ը դառնար մտային յաճախանք, որ «ըբան ալ պատրախի» շափով մը կ'ը ձեւաւորէր այս վերլիններուն արարքներն ու աշխարհահայեացքը:

Գրողէտներու և բանաստեղծներու մտնումը շարունակուեցաւ, զի մը աւելի լայն ծիրի մը մէջ, Եղևոյսիայի և Պերիովաշինայի իշխանութեանց ներքև: Սորժինիքի լման պատկերը կուգայ առաւ իր «Բաց ցամախ»ին մէջ՝ ուղղուած Խորհրդային Գրողներու Զորքորդ Համագումարին.

«Բազմաբախ գրողներ իրենց կեանքի ընթացքին դատապարտուեցան՝ շահագործուելով բններէն և մանուկէն՝ առանց ունենալու նոյնիսկ փիզիկական կարելիութիւնը պատասխանելու ատոնց: Անելի՛մ. անոնք ենթարկուեցան անհատական հալածմաններու, ինչպէս, օրինակ, Պուլկաշովը, Ալմաբովը, Յվէթայեւան, Փասքերմանը, Ջոշէնցան. Փաշքոնովը, Ալեքսանտր Կրիմը, Վասիլի Գրոսմանը: Գրողներու Միութեան զեկավարութիւնը իրենց յուսահատութեան մէջ լիքն այն գրագէտները, որոնց կեանքը վերջացաւ ախտով, կեղծանցման ցամ-



ՊՈՐԵՍ ՓԱՍԹԵՐՆԱԲ

բարձրում մէջ կամ մահումբ — ինչպէս Փաւլէ Վասիլիւր, Մանտիշքումը, Արտնմ Վասիլին, Փիլիքաբ, Պապէր, Թապիցը, Զապոլսկին, եւ ուրիշներ: Ցանկը վերջ պէտք է գտնէ «եւ ուրիշներ» բառով: Կուսակցութեան 20րդ Համագումարին մեծ վերահասու եղանք այն իրողութեան, որ Միութիւնը պարզօրէն իրենց ճակատագրին ձգած էր աւելի քան 600 գրողներ՝ բանտերու եւ ճամբարներու մէջ: Ցամենայնդէպս, շարքը աւելի երկար է...»:

Ցանկը կը շարունակուի մինչեւ այսօր, հակառակ անոր, որ Ստալինի մահէն ետք գրողներու եւ արուեստագէտներու հետ կը վարուին նուազ բարտութեամբ — այսինքն՝ տարբեր չէ պարագան Գրոտսկիի, Սինեպսկիի, Տանիէլի, Պուլգովսկիի եւ ուրիշներուն: Հարկ չըկայ բնութիւն, որ Սոյժենիցին ամէնէն հանրածանօթ օրինակն է այս ուղղութեամբ:

Ինչ էին Խորհրդային Միութեան մէջ գրականութեան եւ յեղափոխութեան փոխյարաբերութեան շուրջ հանուած եղբակացութիւնները այն գրողներուն, ու-

րոնք ուղեցին զարաշրջանին վկաները հանդիսանալ:

Փասթերնաքի, Սինեպսկիի, Սուլեյմանիցիի եւ Նատեշտա Մանտիշքամի պարագաները բաւական պերճաբան են այդ կապակցութեամբ: Անոնք կը ներկայացրնեն ժամանակակից կրօնական զարթնումը Ռուսիոյ մէջ, բայց անոնց բարոյագիտական փոխադրանքները եւ պատմական անդրադարձները հասարակաց յայտարար կ'ընծայեն շատ ուրիշներու, որոնք պայմանականօրէն չեն բաժնէր անոնց սեփական հաւատքը:

«Տաքոր Ժիվակօ»ի մէջ՝ Փասթերնաք տարտած կեցուածք մը ունի յեղափոխութեան հանդէպ, բայց այդ տարտածութիւնը կը փարատի աւելի ուշ բրած իր յեղափոխական յայտարարութեան մէջ:

«Վերակերտել կեանքը: Մարդիկ, որոնք կ'ըսեն ասիկա, վստահաբար մեծ փորձառութիւններ ապրած են, բայց ոչինչ հասկցած են կեանքի մասին... Անոնք կեանքին կը նային իրրեւ հում եւ կարծր միւլերու դէպք մը, գորպէս է մշակեմ... Բայց կեանքը երբեք առարկայ չեմ միւլ չէ... Կեանքը ինքզինք վերանորոգելու սկզբունքն իսկ է... Ատիկա անհունապէս հեռու է քաւ կամ իմ բութ տեսութիւններէն...»:

«Մարքսիզմը ամորոշ ենթահող մը ունի՝ գիտութիւններու շարքին դաստնելու համար: Գիտութիւնները աւելի հաւատարմութեամբ են եւ աւելի առարկայական: Չեմ համոզուած որեւէ շարժումի, որ աւելի անձնակեդրոն եւ իրականութիւններէ աւելի շեղած ըլլայ, քան Մարքսիզմը: Այդտեղ ամէն մարդ կ'աշխատի ինքզինք իրագործել գործնական տունակներու վրայ՝ իրրեւ ուժի մարդը, անոնք այնքան տարտած են անսխալականութեան առաքելը հաստատելու գործով: Իր իրենց գերագոյնը կ'ընեն անստեղծու համար իրականութիւնը»:

Ուրիշ առիթով մը, Փասթերնաք կ'աւելցնէր հետեւեալ հեղեանական ակնարկութիւնը:

«Ինչ որ անոնք կ'ուզեն՝ իսկապէս շատ չնչին բան է, իրականութեան մէջ

մէկ բան է. ասեղ ինչ որ մէկը կը սիրէ եւ սիրել ինչ որ մէկը կ'անտեսէ: Ու ասիկա ամէն բանէ դժուար է»:

Բնկերվարական իրապաշտութեան մասին դրած իր մէկ յօդուածին մէջ, Մինեանիկի կը յատուկացնէ նման ստիպողականութեան մը (ինչ որ բնկերվարական իրապաշտութիւնը տուեալ մը կը դարձնէ դրականութեան մէջ) եւ յեղափոխութեան իւթոփիք վախճանին միջեւ գոյութիւն ունեցող առնչութիւնը, զոր ինք կը կոչէ «նպատակը»:

«Որպէսզի բանտերի յալտնեացէս անհետանան, մենք նոր բանտեր շինեցինք: Որպէսզի բոլոր արգելքները վերանան, մենք Զինական Պարիսպով մը շրջապատեցինք մենք զմեզ: Որպէսզի աշխատանքը վերածենք հանգիստի եւ հաճոյքի, մենք կալաճաւար աշխատակերպը որդեգրեցինք: Որպէսզի այլեւս կաթիլ մը իսկ արիւն չթափի, մենք սպաննեցինք, սպաննեցինք եւ սպաննեցինք»:

Իր կերթին վէպին՝ «Օգոստոս 1914»-ին (August 1914) մէջ, Մոլէրի խոսքի մը քննադատական մտածումներ կը ձեռակերպէ ուսական արմատական մտաւորականութեան նկատմամբ: Իր ներկայացուցիչը, Սոնիա, երիտասարդ ժողովրդական մը՝ կը քննադատուի հօրը կողմէ, յեղափոխական փորձարարներ որոնց դրած ըլլալուն պատճառով: Գորկիի «Պիլսրվէտքինֆէն մէջբերումներ բեռնով» Մոլէրի խոսքին կը յատկանշէ յեղափոխութեան կոչը իրրեւ ճանապարհաւորութեան: Ան կը փաստարկէ, որ քաղաքական միջին եզրերու հետեւողականութիւնը եւ մասնազտներուն կողմէ ի գործ դրուած հիմնական աշխատեցածքը կրօնական յաղթահարել Ռուսիոյ ճարտարաւեստական յետամնացութիւնը:

«Տրամաբանութեան տէր մարդ մը չի կրնար յեղափոխութեան համաձայն ըլլալ, որովհետեւ յեղափոխութիւնը կ'ենթադրէ երկարաձգուած եւ անմիտ կործանում: Առայժմ հերթին, յեղափոխութիւնը, որեւէ՝ յեղափոխութիւն, չի նորոգեր երկիրը, այլ զայն հիմնայաւոր կը կործանէ երկար ժամանակաշրջանով:



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՈԼՅԵՆԻՑԻՆ

եւ որքան աւելի արնահեղ, որքան աւելի երկարաձգուած ըլլալ անհկա. որքան աւելի ժողովուրդը տուրք տայ անոր, ա՛յնքան աւելի հաւանականութիւններ կան, որ այդ յեղափոխութիւնը ՄԵՄ անուանուի»:

«Յոյս յոյսի դէմ» (Hope against Hope) իր Հատորին մէջ՝ Նատէշտա Մանտելշթամ կը բացատրէ յետ-յեղափոխութեան երկարաձգուած չրճանին տիրող սարսափներուն դէմ դիմադրականութեան պահասը, իրրեւ փաստ բերելով յեղափոխութեան շուրջ Հիւսուած առասպելը, զոր իրենց մտքերուն ունէին արմատական մտաւորականները:

«Մտաւորականութեան նուաճման ուղիչը բաժինը կը խաղցուէր ա՛յ թէ սարսափի եւ բարբարոսութեան միջոցաւ (թէեւ Աստուած գիտէ. թէ որքան շատ տեղ գտած էին այդ երկուքը), այլ մահաւանդ «Յեղափոխութիւն» բառին պատճառով, որմէ ոչ ոք կ'ուզէր հրաժարի: Ասիկա բառ մըն է, որուն դիմաց ամբողջ ազգեր տեղի տուած են, իսկ ասոր գործքիւնը այնքան ուժեղ է, որ մարդ կը զարմանայ տեսնելով, որ մեր ղեկավարները տակաւին պէտք կը տեսնեն բանտե-

րու եւ մահապատիժներու զործադրութեան:

Այստեղ է հարցին էութիւնը, երբ վարչակարգին օրէնսդրութիւնը կը հիմնուի, անգամ հարեւանցիօրէն, յեղափոխութեան ընկալման վրայ իրեւ հարթուղին համայնալար Իւթոփիային: Կուսակցութիւնը ծայրայեղօրէն զգայուն է այս կէտին մէջ (եւ միշտ ալ այդպէս եղած է): Ատիկա, ի հարկէ, հիմնուած է Մարքսիստ, պատմութեան վրայ, որ հաւատարմոր ձեւով մը հաւատքի կառուրեւագործումը կ'ընդունի նախապաժան ճշգրտութեան: Այստեղ է ահաւասիկ զտղտփարարանութեանց հակալուրի մեքենականութեան ներքին օրինաւորութիւնը, ուր կը ներմուծուի նաեւ ընկերավարական իրապաշտութեան վարդապետութիւնը զբաղանութեան մէջ: Ամէն ինչ, որ հարցականի կ'ենթարկէ մարքսեան զպատմութեան օրէնքներն ու արժէքը, միաժամանակ կ'սակածանքի կ'ենթարկէ ո՛չ միայն ընկերավարական իրապաշտութեան զաղափարարանութիւնը, այլեւ յեղափոխութեան առասպելը (անոր զուգընթաց Իւթոփիային հեռա-

նկարը) եւ, նոյնի բանիւ իր մասնակցութիւնը կը բերէ վարչակարգի օրինաւորութեան մաշումին: Բան մը, որ առնելազն երեսնապաշտ ծառայութիւն կը պահանջէ խորհրդային զաղափարարանութեան պատմական կարեւորութեանց եւ հաւասարեցումներուն հանդէպ:

Քրուշչեի զգաղտնի ճառէն առդիւնման հաւատարեցումներէ փոքր հեռացում մը նշմարելի է: Ատիկա ցոյցացած է զբաղանութեան մէջ, ուր համայնալար զաղափարարանութեան ուղին ուղղակիօրէն եւ հանգամանօրէն մարտահրաւէրի կը կանչուէր վերեւ յիշուած չորս գրողներուն կողմէ: Յատկապէս Փասթերնաք եւ Սոլժենիցին ուղղակի նախալարձակները եղան պատմութեան մէջ մարքսեան հայեցակէտին դէմ: Փասթերնաք կ'ակնարկէ առոր ճոճակօճի մէջ իրեւ ճանցեալի ծաղրական գոյատեւումը, զոր պէտք չէ լրջութեամբ նկատի առնել, իսկ Սոլժենիցին ՎՊճոստոս 14-ին մէջ, իր կարգին, իր հերոսներէն մէկուն ըսել կուտայ, որ պատմութիւնը չի զեկավարուիր տրամաբանութեամբ, քովիեւեւ անկա ճանտրամաբանական» է:

(Շար.)

ԼԷՈՓՈԼՓ ԼԱՊԷՑ

Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

ՖՐԱՆՍԱԿԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

ԺԻՒՆ ՍԻՒՓԵՐՎԻԷԼ (1884—1960)

Ժիւն Սիւփերփիէլ, որ Փօլ Ֆորի մահէն ետք ընտրուեցաւ Բանաստեղծներու իշխան, ծնած է 1884ին, Մոնթէվիտէօ, Ուրուկուէյի մայրաքաղաքը։ Իր ծնողքին հետ կը դառնայ Ֆրանսա, ուր կ'աւարտէ երկրորդական իր ուսումը։ Ծնողքին մահէն ետք՝ կը վերադառնայ Մոնթէվիտէօ, իր հօրեղորօր ծօռ։ Երբ կը պայթի Համաշխարհային երկրորդ պատերազմը՝ Սիւփէրփիէլ կը գտնուի Ուրուկուէյ։ Ունէր երկու հպատակութիւն, Ֆրանսական եւ ուրուկուէյական, եւ իր կեանքին տեւողութեան հանդիսացաւ հոգեկան կապ ժր իր երկու հայրենիքներուն միջեւ։

Պատերազմէն ետք հաստատուեցաւ Փարիզ, ուր շարունակեց իր գրական գործունէութիւնը, որ սկսած էր շատ կանուխէն, գոլէժի նստարաններուն վրայ, 16 տարեկան հասակին, երբ կը հրատարակէր բանաստեղծական իր անդրանիկ հււսաքածոն՝ «Անցեալի մշուշներ»։

Ժիւն Սիւփերփիէլ մեռաւ 17 Մայիս 1960ին։

Թէեւ ան արտադրած է զանազան սեւերու պատկանող գրական արժէքաւոր գործեր, ինչպէս Թատերգութիւն եւ վէպ, սակայն իր լուսագոյն ըստեղծագործութիւնները կը համարուին բանաստեղծութիւնները։

Իր գլխաւոր գործերէն յիշենք՝ «Անցեալի մշուշներ» (1900), «Առաքաստմաներու պէս» (1910), «Տխուր հիւմուրով բանաստեղծութիւններ» (1919), «Քարափներ» (1922), «Ձգողական ուժեր» (1925), «Անմեղ քիւպարտը» (1930), «Աշխարհի առասպելը» (1938), «Երկինք եւ երկիր» (1942), «Որփոս» (1946), «Մոռացկոտ յիշողութիւն» (1949), «Ծնունդներ» (1951), «Ողբերգական մարմինը» (1959)։

Վերի հակիրճ կենսագրութենէն երեւան կու գայ, որ Սիւփերփիէլ աշխարհի մեծ որբն է. որբ՝ իր ծնողքէն, եւ որբ՝ իր հայրենիքէն։ Այս վերջին հանգամանքը կրնայ շատ սիրելի դարձնել զայն մեզի՝ հայերու, որ կը գտնուինք հոգեկան նոյն կացութեան մէջ, այսինքն՝ ստրկուած ենք ծառայել երկու հայրենիքներու։

Ուլփերվիլէի տողերուն մէջ զգալի է բացակայութեան քննամ, որ իրեն փնտռել եււ տայ անծանօթ ներկայութիւններ, եւ խորիւխ մը, որուն վրայ կ'ամրացնէ իր թափառական նաւը:

Ս/ւփերվիլէ երբեք չէ ուզած բանաստեղծութիւններ գրել խորհուրդի մասնաշէտներուն համար, ան հաստատարի մնացած է անմիջականութեան եւ պարզութեան, ինչպէս իր գծրախտ հայրենակիցը եւ գրիչդրայրը՝ Ժիւլ Լաֆորէ: Սակայն այդ անմիջականութիւնն ու պարզութիւնը հարուստ են եւ զդացումով, եւ խորհուրդով: Գրական շարժումներէն առած է այն բաները, որոնք կը յարմարէին իր տաղանդին եւ կ'ազատագրէին իր ներշնչումն ու արտայայտութիւնը:

Սիւփերվիլէ կը խուզարկէ անդունդները՝ երեւան հանելու համար չոն թաքնուած խորհրդաւոր գոյութիւնները: Կարգալէ հոգ բանաստեղծին «Ձգողական ուժեր» հատորը, Ռեյնէր Մարիա Ռիլէի, անոր կը գրէր հետեւեալը. «Դո՛ւն» անդունդներուն վրայ կը ստեղծես տեւական ծամբայ մը, որ ոկիւր եւ վերջ չունի: Դո՛ւն՝ կամուրջներ կը նետես անջրպետիմ մէջ, եւ այդ կամուրջիմ կամարները կենդանի են եւ ներդաշնակ»:

Սիւփերվիլէ կը խուզարկէ ժամանակին գաղտնիքները, անկէ ռոտը-ծելու համար տեսիլքներ, երազներ եւ զգացումներ, որոնք կը չնցնեն արեգերական բացակայութեան երեւութական պարապը եւ կը հաղորդուին Մահէն եւ ժամանակէն անդին գտնուող միակ իրականութեան, որուն յաճախ կը արուի Աստուած անունը:

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻԻՆ

Օր մը երկրագունտը պիտի ըլլայ
Թաւալող կոյր միբոց մը,
Որ պիտի նոյնացնէ գիշերն ու ցերեկը:
Անտառներու հսկայ երկինքիմ տակ
Ան պիտի չունենայ լեռներ
Եւ ոչ իսկ ձորակ մը:

Աշխարհի բոլոր տուններէն
Պիտի մնայ պատշգամ մը միայն,
Եւ մարդկային տիեզերքէն՝
Առանց ձեղունի տխրութիւն մը:

Անտառին եղած վայրէն
Պիտի բարձրանայ թռչունի երգ մը,
Որուն տեղը ո՛չ ոք պիտի գիշէ,
Ո՛չ նախընտրէ, ո՛չ ալ սիրէ,
Բացի Աստուծմէ, որ զայն մտիկ ընելով
Պիտի ըսէ. «եկեանիկ մըն է»:

ՄՈՌԱՑԿՈՑ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

Բայց այսֆան մտապահմով՝ ինչպէ՞ս ստեղծել վարդ մը :
Այսֆան մեկնումներով՝ ինչպէ՞ս կազմել վերադարձ մը :
Փախչող հազար թռչուններէն մէկ հաստ իսկ պիտի չբռնի
եւ այսֆան մթաւքին չի կրնար կեդծել ցերեկը :

Լսէ՛. ինծի մօտեցար այդ խեղճ այտդ,
Առանց վախի արձակէ սրտիդ թեւերը
Եւ թռչ որ շուփին մէջ հեծէ մեր յիշողութիւնը,
Մեզի վերադարձներով գործօն գոյներու աշխարհը :

Կազմին կը վերածուի ծառի մը, եւ շուփերը՝ դաշտի .
Եւ ահա այդ լինը մեր բացուած աչքերուն առջեւ,
Թա՛ղ մինչեւ հարիզան երկրագունտը յիշէ,
Պէ՛տ թա՛ղ վերածնի՛. անկէ վտարուածներուն համար :

Յիշողութի՛ւն՝ մօ՛ւթ հոյր, գոր կը տեսնեմ դէմս,
Այնքան՝ որքան կ'արտօնէ անհետացող պատկեր մը :



ԱՆԾԱՆՕԹ ԲԱՐԵԿԱՄԵՐ

Քեզի համար կը ծնի ձուկ մը, որ կը սկսի դառնալ
Ամփոփապէս խորունկ ալիքի մը մթաւքեան մէջ,
Քեզի համար կը ծնի աստղ մը, վերը, գլխաւ վրայ,
Եւ կը փորձէ երգել, բայց չի կրնար ընել աւելին,
Քան գիշերային իր հոյրերը՝ համար աստղերը :

Քեզի համար կը ծնի թռչուն մը հասուն տարիքով,
Թռչելու վրայ, եւ կը պահէ իր անցեալը սրտին մէջ,
Որովհետեւ գայն պատմելու համար ունի իր ճիշդ միայն :
Կը թռչի անտառներուն վրայ, կ'ընտրէ ճիւղ մը
Եւ կը թռնի ամբար վրայ . կարծէ՛ք միւսներուն պէս է :

Քեզի համար կը ծնի քարեկամ մը եւ կը սկսի քեզ փնտռել,
Ան պիտի չճանչնայ հու անունդ եւ ո՛չ ալ աչքերդ,
Բայց պէտք է որ ան յազուի ուրիշներուն պէս
Եւ սրտին մէջ ստեղծէ տարօրինակ բաբախումներ,
Որ պիտի գամ այն օրերէն, գորս չէ ապրած :

Եւ դո՛ւն, ի՞նչ կ'ընես, ա՛վ խռովայոյզ դէմք,
Ազգուած այդ անցորդներէն, անասուններէն, թռչուններէն,
Դո՛ւն՝ որ կը մտաւազուիս, դո՛ւն՝ որ լուրեր կը սպասես :
«Եթէ օր մը հանդիպիմ իմ հեռաւոր քարեկամներէս մէկուն,
Պիտի ճանչնա՞մ զինք՝ պատճառած վիշտիս համար» :

Ներողութի՛ւն ձեզի համար, ներողութի՛ւն անոնց համար,
Լռութեան համար եւ անխռիւ քառերուն համար,
Անծանօթ շրթունքներէն արտասանուած նախադասութիւններուն համար,
Որոնք քեզ կը հարուածեն հեռուէն, կորսուած գնդակներու պէս
Եւ ներողութի՛ւն այն ճակատներուն համար, որոնք մտապկտ կը թռնին :

ՓԻԼԵՌ ՌԷԼԵՆԲՐՏԻ (1849-1960)

Երբ 1924ին լոյս տեսաւ գերիւրապաշտ առաջին մամիփեսքը, Անտրէ Պրլերտին շուրջ խմբուած երիտասարդ բանաստեղծները Փիլէո Ռրվերտին հռչակեցին ապրող մեծագոյն բանաստեղծը, թէեւ ան իր գործօն ժամանակ-ցութիւնը չբերաւ երբեք բանաստեղծական այդ շարժումին:

Փիլէո Ռրվերտի ծնած է հարաւային Ֆրանսա, Նարպոն քաղաքը: Ծու-տով իր մէջ կը զգայ բանաստեղծական կոչումը ու կը մեկնի Փարիզ, ուր կը տիրէր գրական ու գեղարուեստական եռուն կեանք մը:

Մոնմարթի բարձունքներուն վրայ կը հանդիպի գրական ավամ կարտ շրջանակներու, բայց խորքին մէջ Ռրվերտի կը նախընտրէ իր սենեակին առանձնութիւնը: 1927ին, մղուած կրօնական պահանջէ մը՝ կը քաշուի Սուի-ժի հռչակաւոր վանքը, ուր կը մնայ ժամանակ մը:

Անկէ հաջ կեանքը կը նոյնանայ գործին հետ: Կը մեռնի Փարիզ, 1960ին:

Փիլէո Ռրվերտի բանաստեղծական հատորներէն յիշենք՝ «Արձակ բա-նաստեղծութիւններ» (1915), «Ձուածն լուսամուտ» (1916), «Քնացած կի-թառ» (1919), «Նկարուած աստղեր» (1921), «Մեծ բնութիւն» (1926), «Հո-վուն ագրիւրներ» (1929), «Յամբախ» (1945), «Երգ մեռելներու համար» (1948):

Ռրվերտի կ'երգէ մարդ արարածին առանձնութիւնը տիեզերքին մէջ: Բանաստեղծութիւնը իրեն համար միջոց մըն է՝ մաքրագործելու համար իր անձը եւ զինք շրջապատող աշխարհը: Կ'ուզէ ձերբազատուիլ բնագոյնական երկշտուութենէն եւ զրահուիլ մաքրութեամբ եւ առանձնութեամբ:

«Արտեստը — կ'ըսէ, — կը փնտէ մտնետը իրականութիւն մը. եթէ հասնի, կը մոյնամայ անոր, այսինքն՝ ժամանակին, եւ կը դառնայ յաւիտե-նական:

«Բանաստեղծը պէտք է խուսափի ենթակայական իրականութենէն, որ կրնայ վաղուան անիրականութիւնը դառնալ:

«Բանաստեղծին համար կարեւորը յստակօրէն արտայայտելն է իր ներշնչութեան մէջ գտնուող անծանօթը, գաղտնիքը, որ իր միակ սեփական-նութիւնը եւ միակ եարստութիւնն է»:

ԳՈՐՈՎ

Սիրտս կը տրոփէ իր քեւերով միայն,

Եւ եւ քանտա նայն հեռաւորութեան վրայ եմք:

Հորիզոնին ետեւը կարծաւ, ո՛վ բարեկամներս,

Ձեր թափուն կեանքը չէ որ կ'ունկնդրեմ:

Կայ երկնակամարի ծալքերուն տակ փաթթուած ժամանակը,

Եւ կամ անցեալի աննշմար յիշատակները:

Կը բաւէ, որ բարեւելեմ դէպի ձեզ սուրացող հովը,

Որ պիտի շոյէ ձեր դէմքերը:

Գոցել դուր իրիկուամ մրմունջներուն առջեւ,

Եւ քնանայ անձրեւին տակ, որ կը խեղդէ միջոցը,
 Առանց մտածելու մեկնումին,
 Առանց երբեք գիրաբ տեսնելու՝
 Բարեկամներ բանտուած տառոյցին մէջ,
 Միրոյս ցոլերը, որոնք կը սահին քայլերուն տակ,
 Պատածուութիւններ արեւի աչքերուն մէջ, որոնք կը մարին
 Ամպերու աւելի յստակ վարագոյրին խոնքը:
 Ճակատագիրս շագուած վախերով եւ տուներով,
 Այն բոլորը, զորս մռռող ալգաբացի յոյսին մէջ,
 Այն՝ ինչ որ յանձնեցի իմ ճեղքերու խոհեմութեան,
 Հագիւ կառուցուած ու խորտակուած երազներ,
 Անկիրք ծրագիրներու զեղեցկագոյն աւերակները,
 Որոնք կը տասանորդեն մեզ ժամանակի ալիքներուն տակ:
 Սեւ թումբերու երկայնքին ցցուած գլուխներ
 Դիմովցած են բաց հոգերու բոյրերով,
 Զսպուած հովուն եռանդին տակ...
 Զունիմ բաւական լոյս,
 Բաւական մարթ, բաւական արիւն.
 Մահը կը քնէ ճակատս
 Եւ նոյն նիւթը
 Կը ծանրանայ քայքայեալ շուրջ, իրիկուան մօտ,
 Բայց զարթոնքը աւելի պայծառ էր միշտ իր պատրանքներուն
 Բոցին մէջ:

●

ՎԵՐՋԱՅԱՆ ՄԱՐԴ ՄԸ

Դիշերը, մշուշին եւ անձրեւին մէջէն, ան կը պտըտցնէ իր տձեւ ստուեր-
 րը եւ այն բաները, որոնք դառնացուցած են զինք:
 Առաջին համդիպումին կը դողայ — զ՛ր տպատառնիլ յուսահատու-
 քեմէն:

Ամբոխ մը կը սլփտայ հովուն մէջ, որ կը չարչարէ ճիւղերը, եւ եր-
 կիմֆին Տէրը իրեն կը հետեւի սարսափելի նայաւածքով մը:

Անուանատախտակ մը կը ճնշէ՝ — վախը: Դուռ մը կը շարժի եւ վե-
 րի փեղկը կը շաշէ պատին դէմ. կը վազէ, եւ այն քերքը, որոնք կը տա-
 նէին սեւ հրեշտակը, կը լինէ զինք:

Եւ յետոյ, անվերջ փապուղիներու՝ գիշերուան ամայացած դաշտե-
 րու, սեւ սահմաններու մէջ, որոնք կը թախի միտքը, անակնկալ ճայներ
 կ'անցնին միջնորմները, անկայուն գաղափարները կը դանդաղեն, մահուան
 կասկածելի գամգերը կը զօգանջեն:

ՓԱԹՐԻՍ ՏԸ ԼԱ ԹՈՒՐ ՏԻՒ ՓԷՆ

Փաթրիս ար լա Թուր տիւ Փէն ծնած է Փարիզ, 1911ին: Ինչպէս ցոյց կու տայ անունը, ան զաւակն է Հին եւ ազնուական ընտանիքի մը, որուն տնունը կը կորսուի անցեալի մշուշներուն մէջ: Երկրորդական ուսումը Հազիւ աւարտած՝ Փաթրիս կը մեկնի Սոյունիւր Նահանգի պապենական դղեակը եւ կ'ապրի Հոն, բնութեան խաղաղ միջավայրին մէջ:

Հաղուադէպ այցելութիւններ կու տայ իր բարեկամներուն կամ Հրատարակիչներուն՝ գիրքի մը Հրատարակութեան առթիւ: Այս մեկուսացած կեանքը ունեցած է իր անդրադարձները բանաստեղծին գրականութեան եւ ներշնչութիւն վրայ, ա'յն իմաստով, որ ան գրեթէ չէ ազդուած ժամանակակից գեղարուեստական յեղաշրջումներէն եւ շարժումներէն:

Մանկութեան տարիները Հազիւ բոլորած՝ Փաթրիս կը դառնայ Ժանօթ անուն մը շնորհիւ Սիւփէրվիէի, որ չի խնայեր իր քաջալերանքները այս խոստմնալից պատանին: Ան պատերազմը տեսաւ պատերազմական գերիէ մը ճամբարի փշաթելերէն:

Հազիւ վերադարձած ազատ կեանքին, ան դարձեալ կը քաշուի Սոյունիւր Նահանգի իր խաղաղ դղեակը եւ բնութեան ու անհունին դէմ յանդիման կը նուիրուի բանաստեղծութեան: «Գիւտցի'ր որ, — կը գրէր բարեկամի մը, — կը բնակիմ կղզի մը, կղզի մը Թ'նֆան խորհրդաւոր, որ օտարալեզուները կ'անգիտանան անոր գոյութիւնը»:

Փաթրիս ար լա Թուր տիւ Փէն ժլատ է իր բառադրութեան մէջ, թէեւ իր Հատորներուն ծաւալը բաւական պատկառելի եղած է:

Իր գործերէն յիշենք՝ «Սնպտմբերի մանուկները» (1931), «Ուրախութեան որոնումներ» (1933), «Սաղմուններ» (1945), «Մեծախաղ» (1946), «Բանաստեղծութեան գիրքը» (1948), «Երկրորդ խաղը» (1959), «Վերջալոյսի փոքրիկ քաղաք» (1963):

Փաթրիս տիեզերքը կը դիտէ քրիստոնեայի աչքերով: Ան մեզ կը Հրաւիրէ տիեզերական Թատերգութեան մը, որ ոչ մէկ կապ ունի այն աշխարհին հետ, ուր կ'ապրենք:

«Եթէ տիեզերքը պատակասուած է, — կ'ըսէ բանաստեղծը, — այս կացութեան միակ պատասխանատու մարդն է, որ իմ գիմֆը կը գերադասէ միւսներէն եւ կ'ուզէ ըլլալ միակ գերակատարը»:

Բանաստեղծը գիտէ սակայն, որ մարդը պէտք է գերակատար ըլլայ աշխարհին առջեւ իսկ երկրորդ Հանգրուանին՝ իր ձիրքը ցուցադրէ Աստուծոյ առջեւ: Մարդը իր կատարելագործութիւնը կը գտնէ այն ատեն, երբ կարենայ լեզու գտնել ինչ իրեն, աշխարհին եւ Աստուծոյ հետ:

Այդ երեք Հանգրուանով ճամբան կը դառնուի միայն բանաստեղծին կողմէ, որ գիտէ վերլուծել աշխարհի խորհրդանշանները եւ մուտք դործել երևույթներէն անդին՝ մինչեւ անդհնականին զաղտանդները:

Մարդը գերասան մըն է, իսկ փիլսոփ թեման՝ իր փրկութիւնը:

ՆԱՆՏՐԳԱՆՐ

Բոլոր այն երկիրները, որոնք առասպել չունին,
Դատապարտուած են մեռնելու ցուրտէն:

Հոգիներէ հեռու, կը տարածուին ամայեցներ
Ծաւսիրութեան մեռած արեւիմ տակ,

Այգաբացին՝ ճախճախուտներու թմբիրէն
Կը բարձրանան շամանդադի հսկայ գանգուածներ,
Զորս բանաստեղծները կը գործածեն,
Ստեղծելու համար հոգեկան ամորաշուքիւնը եւ վայելը:

Պէտք է շնչել, երբ ամենք բարձրանան
Եւ ըմբռնեն այդ անծանօթ սարսուռը,
Զոր կարելի է զգալ երբեմն երազներու մէջ,
Ընդունարուած դրախտներու մէջ:
Միջակները միայն, ստրկացածները
Պիտի չկարենան հասկնալ անոր դառնութիւնը,
Անոնք՝ կորսուած մշուշին մէջ՝ չեն լսեր
Հալածուած թռչուններուն վայրագ ճիչը...

Պո՛ւն՝ սակայն պիտի գիտնաւ, որ ցուրտը չէ
Ծնունդ տուողը այսպիսի ճիչի մը, որ այս ժամուն
Նուագ ողբալի է, քան քու սարսափդ:
Դուն գիտես ներքին ջերմութիւնները,
Այն ըզգանքները, որոնք կ'այրեն մինչեւ գալարում...
Եւ պիտի լսես, որ ամենքի այս ճիչը
Կանչն է գազանի մը, որ կ'ուզէ բզկտել...



ՀՕՐՍ ՕՐԱՏԵՏՐԻՆ ՎՐԱՅ

Այստեղէն է, որ պէտք էր անցնիլ դուռը, որովհետեւ անկեալ գոցուած էր: Ուզեցինք խորտակել գայն, բայց անիկա պաշտպանուած էր շատ մը արգելքներով: Փորձեցինք անցնիլ անոր վրայէն, ծանրութիւնը յիշեցուց, որ հոգին ազատ չէր:

Մտադրեցինք ականել գայն. հսկայ գետեր կը հոսէին անոր տակէն. բայց այդ գետերուն վրայ կեանքը հակառակ էր լոյսին:

Կարելի չէ յառաջանալ դուրսէն. միայն ներսինը կրնայ ծակել երկաթէ կամ խիտ միսէ դուռը եւ ինքզինքը կը գտնէ միւս կողմը: Ես՝ իմ ներքին անձինս մեղսակիցը, կը ձեւաւորեմ մարմինս եւ ձայնս այս ապրող լուսեան վրայ, զոր կարելի չէ դադրեցնել: Ես՝ որ պիտի չուզէի թռչունները վերածել մտքերու, այլ մտքերը վերածել շահէններու եւ երաշտաշուներու:

Ցերեկի չվերածելու համար գիշերը, մէկ կողմ ձգեմք արեւին տաղտկալի յիշատակը:

Ո՞վ ըսաւ, որ ես կը պատկանիմ ցերեկային ցեղի մը, ո՞վ ըսաւ, որ ես աւելի մօտ եմ ճայերու, քան քուագգիներու:

Մարած եմ այն հրաբուխները, որոնք վարդազոյն կղզիներ կը ձեւացնէին ծովուն վրայ. պէտք է ռիթմեր ստեղծուին աչքերուս ցնցեմիւն վրայ:

Երբ ամենք ծանրաբեռնուին մթաթեամբ, այն ատեն պիտի կատարուին խոստացուած գործողութիւնները:

Լուսինը փոքրանալու վրայ է. երթամք դէպի ձմեռը այնքան քնակա՝ ճաշեամբ՝ որքան դէպի հին գարունները.

Հասնելու համար ծովու բոցավառումին:



Ձիւս մի՛ լքեր, ով մարդկային հայր, միջաստղային անջրպետներու գիշերին,
 'Իսկ գիս հեռու պահեցիր գիրքերու եւ քաղաքներու մթնալուստէն,
 սամալու համար յաւսահատութիւնս,
 եւ հիմա կը հրամայես, որ կառուցանեմ ամբողջ ժամանակովս,
 կարճատեւ աստղեր վառողներու եւ մութ մոլորակներ ծիլալարողներու մէջ,
 Պատասխան մը մարդէն Աստուծոյ՝ քաղաքներոյ հարկւրամեակին համար,
 հաւարին խոստացուած լոյսին առթիւ:



ՍԱՂՄՈՍ ԺԶ.

Տէ՛ր, կան արարածներ, որոնք խաւարի կ'այլափոխեն արարչու-
 քիւնդ, որոնք կը հիւսեն չարին գովքը:

Անոնք երջանկաւթիւն կը զգան՝ կեցկածներ արքեմքնելով եւ փնացնե-
 լով յայտը:— անոնք յաւակնութիւն ունին կարգ մը գեղեցկութիւններու, ո-
 րոնք առեւիյ են:

Անոնք ունին անբերրի բարձրաւանդակներու իմաստութիւնը. մարդ-
 կային ամբողջ սերունդներ սո՛ւն դարձուցին մեծութիւնը:

Անոնք ազնուութիւն կը շփոթեն իշխանական յաւսահատութեամբ հետ,
 եւ ճշմարտութիւնը՝ իրենց փորձիչներուն փորձարկութեան մէջ:

Կարծէ՛ք իմաստութիւնը կայանար շեղումներու ճանաչման մէջ: Կար-
 ծէ՛ք դատելու համար անոնք չափանիշ կը գործածեն ունակութիւնը:

Ես կը դժուարանամ ներում խնդրելու անոնք համար: Անոնք աւելի
 լաւ կը տեսնեն գիշերը, քան ցերեկը, եւ աւելի դիւրաւ կը գտնեն իրենց ճա-
 քան խաւարին մէջ:

Գիշեր գիշերէ ետք, կը հասնին միջնաւ դժոխք, որ խաւարին անշարժ
 մէջ մասն է:

ՓԻԼԻ ԺԱՆ ԺՈՒՎ

«Իժմախոս փրանսայի մեծագոյն բանաստեղծը» *Կ'անուանէ զայն Ժիւլ Սիւփերվիլէլ: Փիլէո Ժան Ժուվի համար այդ գլխախտութիւնը ունի խորունկ իմաստ մը, որ կը կազմէ իր ներշնչումին ենթահողը:*

Փիլէո Ժան Ժուվ ծնած է հիւսիսային Ֆրանսայի Արլաս քաղաքը: Եր-
 կար տարիներ՝ ան ունեցած է վատ առողջութիւն մը եւ իր միխթարութիւնը
 զտած է երաժշտութեան մէջ: 1909ին կը հաստատուի Փարիզ, ուր կը հիմնէ
 զբաղան պարբերաթերթ մը: Կը բարեկամանայ Ռոմէն Ռոլանի հետ եւ կ'ա-
 ցելէ Իտալիա, Աւստրիա եւ Զուիցերիա, ուր կ'ապաստանի Ֆրանսայի դե-
 րաւումէն ետք:

Գրականութեան մէջ մուտք կը գործէ վէպով, բայց համբաւի կը տի-
 բանայ 1933ին միայն, երբ կը հրատարակէ «Արիւն քրտինք» բանաստեղծա-
 կան հատորը: Պատերազմը առիթ կը դառնայ, որ ան աւելի մօտէն զգայ
 մարդկային ողբերգութիւնը:

Փիլէո Ժան Ժուվի բանաստեղծական գլխաւոր երկերն են՝ «Կորսուած
 դրախտը» (1929), «Հարսանիք» (1931), «Արիւն քրտինք» (1933), «Երկնա-

յին ճիւղ» (1937), «Սուրբերու գիշերուամ զաւիթը» (1941), «Փառք» (1942), «Փալիզի կոյսը» (1944), «Էնգու» (1952), «Քնարերգական» (1956), «Մե-լուտրամ» (1957), «Աղջամուղջ» (1965) :

Փիլէո ժան ժուվ առանձնութեան եւ անդիջողութեան բանաստեղծն է եւ անոր ներշնչումն ու տաղանդը ունին Սէն-ձոն Փերսի արուեստին հպարտութիւնն ու վեհութիւնը :

Սկզբնական շրջանին, ժուվ հետեւած է Վերահանի եւ Մեթերլինկի բայելուն : 1924ին, սակայն, կը դիմէ ուրիշ աղբիւրներու եւ կ'որոշէ պեղել «նեյաշխարհը այդ սարսափելի արարածին, որ յամառութեամբ դուրս եկած է սեւ կաւէն եւ արիւնոտ արգանդէն» :

Բանաստեղծին գլխաւոր քեման կը բխի քնազգային ուժերու, սեռա-յին մասնաւոր մղումի եւ հոգեկան պահանջներու յաւիտենական պայքա-րէն : Այս պայքարը պիտի տեւէ ա'յնքան, որքան մարդկութիւնը, եւ ան-դուտ է դարձան մը առաջարկել այդ տարերային բախումներուն : Բանաս-տեղծին առաքելութիւնը պէտք է վկայ ըլլայ եւ մարդարէանայ անխուսա-փելի աղէտը :

Եւ որովհետեւ Փիլէո ժան ժուվի ներշնչումը կը բխի քրիստոնէական աղբիւրներէն, աշխարհի պարսպութիւնը լեցնելու համար՝ ան կը դիմէ աստուածաշնչական պատկերներու եւ իրարու կը հակադրէ Մահը եւ Յարու-թիւնը, Ափոքալիփսի ասպետները, Քրիստոսը եւ Նեոք, Խաւար Գիշերը եւ Գիտակցութիւնը, որուն կու տայ Սէր անունը : Բնութեան մէջ երեւան կը հանէ խորհրդանշաններ, — Մահ, Փոթորիկ, Արիւն եւ Քրտիք :

Ժուվ դիւրամատիկի բանաստեղծ մը չէ, բայց ան եղած է ամբողջ սե-րունդի մը առաջնորդը՝ անծանօթի փապուղիներէն ներս :

ԼԻՍՊԷ

Նամուսութիւններ մեզ մուրեցուցին մանկութեան օրերում,

Արդեօք նոյն արիւնէ՞ն ծնած էինք :

Հրաշքներ պատահեցան եւ մեմք վախցանք անոնցմէ,

Կարմիր արիւնէ եւ արցունքէ վերմակներում մօտ :

Նոյն արիւնէն էինք, երբ հանդիպեցայ խարտաշ մագերուդ,

Նոյն արցունքը լացած էինք վանդակներում մէջ

Եւ գաղտնի սենեակներում մէջ, ի՞նչ դաւադրութիւններ

Մեզ մերկացուցին, ա'յնքան՝ որքան մեր մտքերը :

Ո՛վ մահ, կը լսեմ տարօրինակ ձայներ,

Ո՛վ կենդանի եւ քիչ մը շէկ, ծնած ազդրով,

Կեմդանիի աչքերդ ինծի կ'ըսեն (կարմիր քաւիշ)

Բամ մը, որ նոյնիսկ համեարմնքը չեն կրնար երեւակայել :



ԻՆՉՈՒԻ ԴԱՏԵԼ

Ինչո՞ւ դատել գեղեցկութիւնը՝ մաքուր, անմաքուր,

Երբ ամ ազատ է եւ կը սիրէ սէրը : Ի՞նչ արծէ՛ք ունին

Նոյնացած սեւ բանակներում գրեհները,

Առհաւական խղճահարութեան մը՝ ուրուական, արեան ճապաղիք :

Այնքան տառապած եմ: Թո՛ղ ամբարտաւան երիտասարդութիւնդ,
Եթէ քաղցր է, կը յանձնուի եւ կը պատասխանէ,
Օրինեա՛լ ըլլայ, եւ քո՛ղ անոր քշուառութիւնը կամ առատածեռութիւնը
Հեռացնէ մահը ձեռքով մը, որ գրեթէ կոյս է:

Խորհրդապաշտական եւ մութ բնութիւնդ, քաշումդ,
Որ կ'արեւմարեւէ դէմքիդ վրայ յամեցող վիշտդ,
Անդունդներու այդ բնակիչը, ջանա՛ որ ամ գեղեցիկ ըլլայ
Հակառակ ստրկացումներուն, անխռիւմ կոյս:

Զգէ՛ անոր այն թարմութիւնը, գոր գիտէ կամ կ'անգիտեմայ,
Տիեզերական եռանդը, ուրկէ կը ծնի աղբիւրը,
Մեղքի եւ էութեան արարած, գոր կ'սկեզգօծէ
Լեռան խիզի մութ ցալ մը:

Երիտասարդութիւնդ քարմ բոյրն է գիշերներուն մէջ,
Վայրագ հոտով եւ սակայն տեքոյր:
Քու բոյրդ կրնար բուծել դառնութիւնը իր հոտով՝
Բացումն եւ առանց ամօթածութեան ներկայութենէս դուրս:

Թեքեւ սահմէ՛, որուն վրայ կը ծանրանայ առանձին ձեռք մը,
Կը ստիպէ արեւը, որ բռնաբարէ ճակատագրական վարագոյրը,
Եւ ժամանակը, որ զիս կը պահէ անկամք եւ անվազորդայն
Անդամներուդ վրայ՝ յիշողութիւն է եւ երաժշտութիւն:

Սեւ աչերը մութ լիներ են, գորս կը յուզէ սէրը,
Ծանրանալով կտպերուդ սեւած ու թեքեւ աւագահերուն վրայ,
Յանձնական դէմքի մը կեդրոնը. եւ սիրտը կ'արգահատի,
Որովհետեւ այնքան ծանր նայումով մը կը սահի բնութեանդ վրայ:

Մի՛ կշտամբեր երիտասարդութիւնդ, անբարոյական՝ բրտութիւն,
Եւ հալածումն քաղցրութիւն եւ գլխի՛չ բարութիւն,
Պահէ՛՛ գեղեցկութիւններուդ գանգրահեր գանձը
Բոլորիմ լուսանցներուն դէմ, երկարատես մանկութեան:

Որքան կը սիրես սակայն, խորունկ աչերդ գոցելով,
Ուր կ'ապրի երջանիկ ու մոգական մէջքդ,
Իգական աղբիւր, գորհուրելի եւ խորունկ յատկանքով,
Զգէ որ իմ տարիքիս սիրեմ քու առասպելական անասունդ:

Աչերուն մէկ փայլին մէջ,
Այս չէ՞ արդեօք նոյն ինքն յախտեցականութիւնը:
Այս չէ՞ արդեօք ամբողջութիւնը անսահման,
Յախտեցականութիւնը խելայեղօրէն քանկագին:

ԱՆՀԵՏԱՑԱԾ ԱՐԵՒՆԵՐԸ

Անհետացած արեւները յաւիտեանական քառեր են,
Որում կլոր մախադասութիւնը ունի այդ ճեւը․ վերացում
ծրաժշտական երկրին, կանաչութեամբ, ռոկիին,
Ամէնէն հագուագիտ պատշգամին կախած արեւին,
Արօտավայրին, ուր ցրած են սառուցային ժայռեր:
Ո՛վ հեռաւոր գեղեցկութիւն, գերագոյն ժամուան երազ
Անմահային կատաղի խորոյն մը կը ձուարարուէր
Ձորերում մէջ, բանջարեղէններու տակէն:
Զառիքափը կը սիրաբանէր ջերմութեամբ հետ,
Փայտէ խրճիթները կը չարչարէին լոյսը
Եւ ազնուութիւնը մեռած էր շագանակի ծառերու վրայ:
Մեկնելու ատեն կը զգայինք յոյսին կորուստը՝
Մեր խելագար ըզմանքներում ձգողութեամբ պատճառով:

ՓԻԷՌ ԷՄՄԱՆՅԻԷԼ

Բուն անունով Նոէլ Մաթիէօ՝ Փիէռ Էմմանիւէլ, ծնած է հարաւային Ֆրանսայի Պէտան նահանգը, Փիլեմեան լեռներու ստորոտը: 23 տարեկան էր, երբ պայթեցաւ Համաշխարհային Երկրորդ պատերազմը, որուն Էմմանիւէլ մասնակցեցաւ նախ իբր զինուոր եւ յետոյ իբր ընդդիմադիր եւ բանաստեղծ: Իր անունը առաջին անգամ երեւցաւ «Պատգամներ» պարբերութիւն մէջ, 1940ին, որ կը խմբագրուէր մառաններու մթութեան մէջ:

Փիէռ Էմմանիւէլ գրածան տարիները ապրեցաւ մահուան սպառնալիքին տակ, բայց չլռեց երբեք: Ան հանդիսացաւ իր սերունդին Ռեմպոն: Պատերազմէն ետք շարունակեց մնալ Նոյն գիրքին վրայ եւ դէպքերէն ներշնչուելով գրեց յաւիտեանականութեան համար:

1960ին մուտք գործեց Ֆրանսական Ակադեմիայէն ներս:

Փիէռ Էմմանիւէլ հեղինակն է հետեւեալ հատորներուն՝ «Եղբրեքներ» (1940), «Ջայռայրի օր» (1941), «Բանաստեղծը եւ իր Քրիստոսը» (1945), «Որփեակաճ» (1947), «Սողոմ» (1948), «Բարեւ» (1952), «Անտարանգիրք» (1961), «Նոր ծնունդը» (1964):

Հատորներուն վերնագրերէն կարելի է գուշակել Էմմանիւէլի ներշնչութիւնն աղբիւր: Ինչպէս իր միւս գրչեղբայրները՝ Ժուլ կամ Քէյրուլ, ան դէպքերը կը տեսնէ վերէն, Անտարանի բարձունքներէն:

Սակայն իր նախնորած թեմաները կը կուտին հաղորդակցութիւն եւ առանձնութիւն: Իր պատանութեան եւ երիտասարդութեան տարիներուն իսկ Էմմանիւէլ եղած է մեծակեաց մը: Այդ օրերուն ան կը գրէր հետեւեալը․ «Առանձնութիւնը մեծ քաջութիւն է, որ մարդ արարածին կու տայ քաւական ուժ իմֆիլիւսով գոհացալու համար»:

Սակայն պատերազմի փորձառութիւնը իրեն ցոյց տուաւ, որ անկարելի է միշտ ապրիլ մարդ եղբայրներուն միջեւ: Ժուլի «Արիւն քրտինք» հատորին ընթերցումը իրեն ցոյց տուաւ իրաւ բանաստեղծութեան ճամբան:

Իր առաջին տողերուն մէջ զգալի է Հիւկոյի եւ Ռեմպոյի ազդեցութիւնը, բառերու եւ պատկերներու չափանք մը, որ երբեմն կը հասնի հռետորութեան:

Սակայն չուտով անդրադարձաւ, որ իւրաքանչիւր բառ աշխարհ մըն է, զոր պէտք է դորձածել մեծ խնայողութեամբ, եւ փոխանակ երեւակայած պատկերները լեցնելու բառերու լիցքով մը, բանաստեղծը հասկցաւ, որ պէտք էր իւրաքանչիւր բառէն ստեղծել պատկեր մը եւ տխրեց մը:

Փիէռ իմամսիւէլ մօտէն հետեւած է ժամանակակից գրական եւ դաշտափարական շարժումներուն եւ անոնցմէ առած է միայն այն, ինչ որ կրնայ հարստացնել իր արուեստոր: Ոճը ջինջ է, ա՛յնքան ջինջ, որ իւրաքանչիւր բառ, իւրաքանչիւր պատկեր, խորհուրդի եւ կախարդութեան անհաստեղծ շտեմարան մըն է:



ՏԷ՛Ր ՈՂՈՐՄԵԱՅ

ՏԷ՛ր, ռզորմէ՛ մեզի՝ Քու վերջին վերապրողներուդ,
Որովհետեւ մեզի տուիր իբր ժառանգութիւն այս մեռելները
Եւ մե՞նք դարձանք մեր մեռելներուն հայրը:
ՏԷ՛ր, ռզորմէ՛ մեզի, ռզորմելի մօրաներ,
Որ ծնանցեցանք այս մարդերը Մահուան մէջ,
Եւ տես բաժնուած ենք անոնցմէ՝ իրենց դիակներով,
Անոնց, որոնք մեռած են արդէն եւ լուծուած Գիշերիդ մէջ:
Մեր մօռայլ դերեկը կը շլանայ անոնց գիշերէն,
Մեր մարմինը կը պրկուի հպելով անոնց ստուերին,
Բաւական իսաւար չունինք՝ մէջը քա՛մնուելու համար,
Մերկ ենք անոնց փառքին մէջ մինչեւ մեր ռսկօրներուն ծաւծը:
Եւ մեր բառերը կը փռնուին անոնց միտքներուն մէջ:
Ոտարականներ դարձած ենք մե՞նք մեզի համար,
Սաստիկ հովեր կը փչեն՝ մեզ վոնտելու համար մեր մարմնէն:

Կը դողանք կեանքէն եւ կը դողանք մահէն
Եւ կը զսնուիմք յաւիտեանս անոր ասդիի կողմը:



ՈՐՓԷՆՍ Կ'ԻՋՆԷ 'ՎԺՈՒՔ

Սիրոյ անհուն մակընթացութիւնները, մահի՞նը
Տակնուկրայ ըրած էին մինչեւ աստղերուն թարձումքը,
Մէկ կողմ նետելով խաւարով եւ թարմ արիւնով քրքուած սաւանները,
Օրհնուած եւ գազջ լեռներուն վրայ
Վերթին երկիրը ընդնշարուած հրաժեշտի պահուն,
Հեռաւոր՝ ինչպէս թափառող սրինգ մը: Ան էր՝
Բնկլուզուած մահուան մէջ, քաղցր ու արտասուող:

Գտնուեցաւ յանկարծ նաւաբեկութեան սեւ ցռուկին վրայ,
Ձայնը փոխուած էր ռվիկիանսի, եւ զոհին յանցաւոր
Մեծ ճիչը մէջս էր,
Կը լսէինք անոր կանչը անդունդին մէջէն,
Դատապարտուած էի ժամանակին անհունութեան ստորստը:
Անոր մարմինը՝ պառկած քողերու անկարգութեան մէջ՝
Իր արիւնին հետ դուրս կու տար ահաւոր զազտմի՛ք...:

Մ'արդ մը կ'իջնէր մահուան գառիքափն ի վար
Գիշերով, եւ հոգիին անպատմելի սարսուռը
Կը հազորդէր ամբողջ խաւարին հետ
Վերջալուստին իր քաղցր գիտութիւնը:
Հին աշխարհին շրջագիծը կը մեռնէր անտեսանելի ալիքներով
Սւ անցեալը կ'ընդարմանար գալիքին մէջ:

Բայց ան միշտ ռոտի էր սալաքարին վրայ՝
Մութ գառիվարով անխոստովանելի փողոցի մը մէջ:
Հողը միշտ մայն կարծրութիւնը ունէր ռոտքերուն տակ,
Սւ ռոտքերը նայնքան անգութ էին հողին հանդէպ:

Այս դուռը, որ անվերջ կ'երթեւեկէ տարիներէ ի վեր,
Կին մը կը կանգնի անոր ետեւը յախտեանս,
Պնդարժ, ձեռքերը յօշոտուած սոսկեմեծութեամբ վրայ,
Բզկտուած ամպերու սեւ մացանքներէն:
Անոր մարմինը քափանցիկ է երազին եւ միտքը
Կը բնակի մեղմ բարձունքներու վրայ: Ան մութ է
Կամ կապոյտ, նայած տնտառութեան հեռաւորութեան:

Ո՛չ ոք գիտէ մերկ օդին գաղտնի վերքը,
Ո՛չ ալ սիրտը անձկութեան երկար միջանցքներու ծայրը,
Ուրիշ Ուրփեռս մը, անա՛ կու գայ:

Այդ կինը կ'անէաճայ

Անմիջապէս, որ ռոտքը կոխէ անոր անտեսանելի ստուերին վրայ:
Ան կը վերածուի մեռելի մը բերնին, մահուան կանչին...:



ԲԱՔԷԼ

Երբ խորշակը կը փչէ Արեւելէն, երբ ժողովուրդները կը փչեն անապատէն,
Երբ արիւնը կը շաչէ ձողերուն վրայ, վատ է այն մարդը,
Որ իր նիգակին ծայրը չունի պատառ մը իր արիւնէն:
Արուարձանը կը գրոհէ մակընթացութեան հետ, քաղաքը կը պարէ մաւակի
մը պէս.
Սւ եւ քաղաքը գայրաշէն կ'շտացած ամպի նմանոք բազմութեան առջեւէն:
— Գիտեմ, որ այս ժողովուրդին արիւնը գրչակներուն իբր մեղմ պիտի
ծառայէ...

Միշտ նայն սուտը, միշտ նայն գոհը պատարագուած,
Այն ապագային, որ պիտի չհանչնայ ուրիշ գոհեր...
Նայն հռետորները տարբեր տարազներու տակ
Ոսէ Պատիլ մը քահանաները, կամ գալիք մարդուն վարդապետները,
Իրենք իրենց նախնայական ժողովուրդներուն գոհաբերութիւնը,
Իրենց ամբարտաւանութեան ճիթին միացնելով անոր միտքը,
Արիւնէ խանձող մը, կոռոզի վրայ, իրենց գանին առջեւ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԱԳՈՒԼԵԱՆ

ՌՈՒՏՈՒՅԻ ԽԱԶԱՏՐԵԱՆ

Յարութիւն Նագուլեան, որ ստեղծագործական էջերով ծանօթ է ճիւղիմարի բնութեանը, տէր է նաեւ շարժանկարային եւ նկարչական մշակոյթի մը: Շարժանկարային ստեղծագործութիւնները Նագուլեանի Սերգէյ Փարմենովի (Քիւ 4) մօտին գրած, ինչպէս նաեւ նկարչութեան մարզին մէջ Ռուտովի Պաշտարեանի յայտնութիւնը աւանդ Հետազոյ կարճ գրութիւնը բաւարար չափով մը կ'երաշխաւորեն այդ արուեստներուն տալիսութեամբ իր տմարած ծանօթութիւններուն տոկունութիւնը:

Յ. Նագուլեան խոստացած է ճիւղիմարի մէջ պարբերաբար տարադրել նկարչական քրտիկներ՝ Հայաստանի թէ Սփիւռքի աշուհատեղիներուն մօտին:

Ռուտովի Պաշտարեանի Հետազոյ նկարները մեզի տրամադրւած են իր կողմէ եւ լոյս կը տեսնեն առաջին տպագրութեամբ:

Յօսքը 25 տարուան նկարչական վաստակի մը արժատներով սնած, բնորոշ առանձնայատկութիւններ գտած ու վարպետացած՝ Հայաստանի ամէնէն տաղանդաւոր նկարիչներէն մէկուն մօտին է, — Ռուտովի Պաշտարեան:

Ռուտովի Պաշտարեանի մօտ հայ նկարչութեան աւանդականին զարդացումը հասած է ժամանակակից մտածելակերպին ու զգացողութեան եւ իր նկարչութիւնը հասցուցած միջազգայինի մակարդակին: Միջազգային՝ ա՛յն իմաստով, որ

իր ոճը, խորքը եւ վարպետութիւնը ըլլալով բացարձակապէս հայկական, ըլլալով հարազատ շարունակութիւն մը Հովնաթանեանի ու անոր դպրոցին էնկերեան վարպետութեան, պիտի կարենան հետաքրքրութիւն ստեղծել ոեւէ ազգութեան տէր մարդու մօտ, իբրեւ արուեստի նոր խօսք եւ զգացողութիւն:

Հայ դասականները, որոնք կազմեցին թիֆլիսեան մեր նկարչութեան առանցքը, յանձին Հովնաթանեանի, կարծես կամուրջ մը պէտք է նկատել մանրանկարչ-





ՀԱՄԱՌՈՐ

ներէն ետք մինչեւ մեր օրերու ժամանակաշրջանը:

Եւրոպան ունեցաւ Ճիւթթոն, յետոյ՝ վերածնունդը, յետոյ՝ էնիւրը, յետոյ՝ ուժանթիւները եւ, վերջապէս, նորերը — առանձին փայլով ինքնայատուկ նկարիչներ:

Հայ նկարչութիւնը ունեցաւ մանրանկարչութիւնն ու Թիֆլիսը միայն: Մընացեալը, մեր կարծիքով, չի համապատասխաներ քաղաքակիրթ ազգի մը արւեստին իւրայատուկ զարգացման:

Այսօր Թերեւս մեր վերածնունդն է.

վերածնունդ, որ կը լրացնէ բաց մնացած շրջանները, կը լիցնէ զանոնք եւ ենթագիտակցական շրջանցումով մը կը հասցընէ մեր նկարչութիւնը արուեստի այսօրուան արժեւափերուն (norme):

Այս ընթացքին մէջ եւ այս արամադրութեամբ, մեր նկարչութիւնը վերջին հարիւր տարուան ընթացքին կը հաշուէ քանի մը հայ դէմքեր միայն՝ Հայաստանի մէջ կամ անկէ դուրս (Սուրէնեան, Բաշինջաղեան, Կոշոեան, Սարեան, Կորեի, Օրբեան եւ Քոչար), որոնք Հոգեկան հարազատ կապ ունին մեր նկարչական

պատմութեան հետ: Ունինք այնքան տա-
ղանդաւոր ուրիշ նկարիչներ, վաստա-
շար, բայց անոնք տարբեր են ու կապ
չենք տեսներ անոնց ու մանրանկարիչնե-
րուն, անոնց ու Հովնաթանեանին, անոնց
ու Կոմիտասին միջեւ, որքան ալ անոնց
հետաքրքրութեան ու վրձիններուն տառ-

կայ եղած ըլլան հայ հողը, լեռն ու եկե-
ղեցին:

Մեր նկարչութիւնը, իբր ռճական
բազմազանութեամբ՝ այսօր կ'ապրի վե-
րածնունդ մը: Ունի կշռոյթի ընդհանրու-
թիւն մը, որ կը ներգաշնակուի մեր ար-
ւեստի պատմութեան մէջ բոլոր շինած



գազաթներուն հետ՝ մանրանկարիչ ըլլան անոնք, օտար հողի վրայ քրտնած խաչքարի վարպետ, գորգագործ թէ եկեղեցիի դմբէթ կառուցող:

Ռուսոյ՜ք Խաչատրեան այս վերածընունդին կարևորագոյն զէմքերէն է:

Իր Յաթիւր-մարթը չի սահմանափակ-

ւիր եւ չի շրջանակուիր ընկերվարական կամ դրամատորական հասկացողութեամբ: Յստաջդիմական կամ անկումային պիտակներով:

Իր զէմքերը, մարդերը, մայրերն ու որդիները, աչքերն ու աղջիկները, այս կամ այն աչքերն ու մայրերը չեն, ընկեր-





ԿԻՆԸ

վարական ժպտացող մայրեր կամ դրամատիրական տխուր աչքեր, այլ պարզապէս մայրեր, աչքեր ու որդիներ:

Ոճի այնպիսի՝ նուրբ վարպետութիւն մը կայ Ռուտովֆ Խաչատրեանի դործերուն մէջ, ուր կրնաս ձիու եւ կնոջ ձեւե-



ՔԻՆՁԳ

րուն ու գիծերուն մէջ՝ կերպարի մը առանձնայատկութիւնները տեսնել, որ կապ չունի կնոջ կամ ձիուն հետ: Իսկ կերպարը ինքնին մարմին չունի, տեսութիւն մըն է, յուզող մթնոլորտ մը, վերադասական կապ մը չունի: Գիծերուն մէջն է, որ վերնագիր չունի: Քրիստոսի գլուխին մէջ կրնան տեսնել կտոր մը ձի, կտոր մը Քրիստոս, կտոր մը հայկական բարեպաշտութիւն, կտոր մը Նարեկացի եւ արեւեստի վարպետութիւն, որ տունեւէ գործը Քրիստոսի գլուխ ըլլալէ կը զազրեցնէ եւ չի թելադրեր նոր վերնագիր: Այն է, ինչ որ կը զգես ու կը մտածես:

Արդէն մեր նկարչութեան ամէնէն կարեւոր կէտը այն է, որ շունի բովանդակութեան կէտագրութիւն: Գեղեցկութիւն մըն է, որ գիտողին հետ կը ստեղծէ բովանդակութիւն մը: Օրինակ, մանրանկարիչներուն մօտ Աւետարանի Դիպալարը (սիւմէ) կը զազրի աւետարանական ըլլալէ եւ իւրաքանչիւր Քրիստոս կ'ունենայ տարրեր ձեւ, տարրեր աչք ու տարրեր իմաստ:

Պաշտօնական մօտ կարեւորը մարդկայինն է: Իր գիծերը իրենց մէջ ներդրած են այդ զգացողութիւնը իւրայատուկ ուժով՝ ինչ ալ ներկայացնեն անոնք իբրեւ զժաղրութիւն: Վերջին հաշուով՝ արեւեստին կը հասնին, երբ դոյններուն ու գիծին շունչ տալ գիտես եւ կենդանութիւն:

ՌուսոյՖ Պաշտօնականի գիծերուն մէջ ներառփոփ պոռթկում մը կայ, որ ըստ երեւոյթին հանգիստ է եւ գիծերու նրբութեան մէջ վարպետօրէն զգույն: Բայց որ դարձեալ կը յորդի շրջանակէն դուրս, կը վարակէ քեզ եւ գործերը կը դարձնէ յուզումով յազեցած:

Կասկած չկայ, որ անոր նկարչական մտածելակերպը, այսպէս ըստած՝ ճշակոյթով յազեցած է: Այս հանգամանքը շատ յաճախ բռնագործիկ ու շինծու կը դարձնէ տունեւէ գործը: Բայց հոս այդպէս չէ, հետեւեալ իմաստով. —

Եթէ դիտենք գործերը շարքերով, խումբ-խումբ, ապա կը տեսնենք մաս-ծելակերպի ազնուացումը՝ զգացումի ու մտաւորական գիծ մը, որ կ'ընդգրկէ շորս հինգ, երեքմէ տասը գործ՝ բովանդակութիւն մը, որ կ'ամբողջանայ քանի մը նրկարներու դիրար ամբողջացնող, գիրար գերազանցել փորձող ուժով: Հոս է Պաշտօնականի մտաւորականութիւնը (intellectualité): Մէկ միայնը ստեղծած է քանի մը գործ՝ ենթագիտակցօրէն գիրար յրաշնող: Ուրեմն, չրջանի մը մտածումները՝ նոյն չրջանի նկարներուն մէջ ընդհանուր են կարծես: Ասիկա տպաւորութիւնն է:

Այս իմաստով Պաշտօնականի մօտ չենք փնտռեր մարդու ազատութեան, գեղեցկութեան զգացում եւ այլեւայլ ազնիւ ապրումներու դրսեւորումներ, այլ պարզապէս կը փնտռենք մարդը, գեղեցիկը, աղեղը եւ կենանքի քաղաքանքիւնը եւ անոնց տունեւէ շրջանին ըրած վերացական ազդեցութիւնը նկարիչին վրայ:

Ահաւասիկ փունչ մը իր կրափփօններէն: Շարքը (քարի վրայ, 10 տպաքանակով) 10 հատ է, որոնցմէ միայն եօթն ունինք մեր տրամադրութեան տակ: Տասըն միասին դիտած՝ դիպալարի այդքան այլազանութեան հանգրծած, կը միանուլին իրենց խորքով ու իմաստով ու ատիկա այն պատճառով, որ բոլորը միասին կը ներկայացնեն ձիերու շարք մը, ձիերու վազք մը թերեւս, իսկ առանձին-առանձին՝ մէկը Քրիստոսն է, միւսը Ռ. Պաշտօնականը, միւսը Թոլիքն է, միւսը սր օրն է, գիշերն ու ցերեկը, միւսը իր կիսն է եւ, վերջին հաշուով, ենթագիտակցական եւ զուտ մտաւորական կապ մը կայ կնոջ, իր, Քրիստոսին, օրուան, հոգեկան Թոլիքներուն եւ ձիերու պէս վազվզող ամէնօրեայ մարդոց մէջնէ...

Յ. ՆԱԳՈՒԼԵԱՆ



ԱՆԿԱՏԱՐ ՀԱՄԱՀԱՒԱՔ՝

ԲԱՐՈՑԱԽՕՍՆԵՐՈՒ

ԵՒ ՄՈԼՈՐԵԱԼ ՄՏՔԵՐՈՒ...

«Սովետական գրականություն» ամսագրի ընթացիկ տարուան Փետրվարի համարին մէջ, «Էջեր Դանիէլ Վարուժանի կենսագրութիւնից» խորագրին տակ՝ Գէորգ Մաղոյեան կը պատմէ 1912էն ետք Պոլսոյ մէջ ապրած հեթանոս քուրմին կեանքը, ծանրանայով յատկապէս ուսուցչական ասպարէզին մէջ անոր ապրած ծանր տաճնապնեւումն վրայ, մենատիրական բաւականին լայն ախորժակներու տէր եւ իր հանգամանքը եռանդուն կիրքով մը տեսաբար շահագործած կաթողիկէ համայնքի կաթողիկոս-պատրիարք Թերզեանի մոլեգին հրահրումներով:

Մաղոյեանի այդ յօդուածը կը բովանդակէ այնպիսի՝ շահեկան մանրամասնութիւններ, որոնք ծանօթ չեն լայն զանգուածներուն եւ անպայման նըկատի պէտք է առնուին, երբ հարկ ըլլայ վերակազմել «մրրկավարս ու հրաշուի» քերթողին լրիւ կենսագրութիւնը:

Այս էջին մէջ մեզ առանձնապէս շահագրգռողը Վարուժանի անձին եւ ուսուցչական գործունէութեան դէմ սարքուած քսութեան գրոհը չէ այնքան որքան «Հեթանոս երգեր»ուն առիթով պաշտօնապուրկ նոյն կաթողիկոս-պատրիարքին եւ անոր համախոհներով կազմուած տգիտութեան ջոկիւրին վերաբերումը, որ քայքայիչ կիրքերու հետեւանք մշտնջենական ցայտուն նմոյշ մը չէ միայն, այլեւ յայտնութիւններէ ահաբեկող խաւարամիտները բնութագրող վճռական օրինակ մը:

Ահաւասիկ «կաթողիկէ արձագանգ»ի էջերէն դուրս բերուած այդ «հիւստերիկ յօդուած»էն քանի մը հատուած յիմարութիւն.

«Լոյս տեսաւ Վարուժանի «Հեթանոս երգեր»ը: Բիւզանդիան»ը այն ներկայացրեց Հիացական խօսքերով. «Մայրէ ի ծայր մերդաշնակութիւն, շնորհ, գիւտ ու ճկարագեղ վրձինի մը ամբողջ հրաշալիք, որոմէ կը բովեն, կը յափշտակեն, կը խանդավառեն թաւր ընթերցողները: «Հեթանոս երգեր»ը մեր քերթողական գրականութեան ամենէն հզօր արտայայտութիւններէն մին է, եւ տաղանդաւոր հեղինակը ջերմապէս շնորհաւարելի է հայ գրականութեան նուիրած իր այս թանկագին գանձին համար»:

«Կաթողիկէ արձագանգ»ին դուր չեկաւ, որ Հայ գրական Հրապարակը ծափ գծափի Հարկանեց, փառաբանեց, երեկոյթներ, ասուլիսներ սարքեց ի պատիւ Հեղինակի: Նրան յատկապէս դրուեց «Մեմուալիի ախպար» կաթողիկական Թերթի յօդուածը, ուր նոյնպէս բարձր գնահատական էր տրուած Վարուժանի գործին: Եւ ահա շարաթաթերթի «Իշեպէր ու սկզբունքներ» բաժնում «Աղէտալի գիրք մը» վերնագրի տակ խմբագիր Թերզեանի արեւակեց իր Հայհայալից յօդուածը, ուր ի միջի ալոյց դրում էր. «Աղէտալի գիրք

մըն է, այո, որ վերջերս լոյս տեսաւ հայ հրապարակի վրայ: Ո՛հ, հայ հրապարակը, ռոգողաժ գլխի՛ք միշտ յոռի տպագրութիւններով, աննկարագիր, աննկարմնէ, շահամուլ, անխիղճ մարդոց ձեռքը մատնաւած հայ գրական հրապարակը, այսօրմէն հայ մանկտին՝ յայտ ազգի, հայ ընտանիքը, հայ սիրտը, հայ միտքը, հայ ազգը, մատնաւած անբարոյակեանքեան, կրքերու, վատասերման, անկրօնութեան, աննիստամի, հայ ձեռքերը կը մատառակեն յայդ քառնայից բաժակը, ու ազգասէր կը յարշարուին... վա՛յ մեզ:

«Ուրեմն այս տեսակ գիրք մը հրատարակուեցաւ վերջերս: Գրքին անունն է *Հէթանոսական երգեր»* (վերնագիրը միտումնաւոր կերպով է աղաւաղուած. Գ. Մ.), հեղինակն է Դանիէլ Վարուժան, որ տրամագին կ'որոշայ իր Աստծուն կորուստը, վերագրելով գայն անպիտան ու անկրօն գիրքերու ընթերցումին:

Խոժոռ գիրքեր, մեծ գիրքեր...

Կ'անիծենք ընթերցողներն իրենց...

«Օ՛ր, ի՞նչ հարկ նոր մը աւելցնել անիծուած գիրքերուն վրայ, որոնց պատճառով կուլայ... Ինչո՞ւ այդ համայնաշինչ գիրքերու թիւն աւելցնել եւ իր մահը սպիւն համաճարակ անփոյթ անգթութեամբ...»:

Այդ գիրքը ընդհանուր բարոյականի երեսը նկատուած հեցնութեան ափ մը ցնի է. իւր հիմը կազմող անհատաւորութեան ու յուսահատութեան զաշտիմ վրայ բուսած քառնայից եւ հրապարակի ծաղիկները կը պարունակէ. ծաղիկներ՝ ճաշակամար տպագրութեամբ, հաւժկու բանաստեղծութեան, կանխատաժուած պէպիտութեանց, զանազանեալ ոգի, հմայիչ երանգներու, չափաւորութեան, արուեստական այն ամէն բանի, որ կարող է յանկուցանել անգագոյշ երիտասարդութիւնը, գրեցնել, մեղցնել. ոսկեգոծ եւ գոհարազարդ զաշտիմ մըն է: Քանի մը արժէքաւոր կտորներու իմ լիարժեք ցանուած եմ այնպիսի եւ այնքան յայտնի անբարոյական, ետին աստիճանի անբարոյական կտորներ, որ մենք չպիտի կարենանք ընել մէջբերումներ:

«...Անշուշտ մարգասպան է այդպիսի հեղինակ մը, եւ իր ընթերցողն, ու մանաւանդ իր գաւախը այնպիսի հեղինակի մը յամձմառ հայր մը՝ անխիղճ եւ ամենալայր մարգասպաններ:

«Ազէտ մըն է, ճիշդ մըն է այս գիրքը»:

Մեծ գործերը անբարոյականութեամբ պիտակող, պանոնը «թունալից բաժակ», «աղէտ» համարող ու մեծ գործեր արարչագործող մեծերը խաչակրութեան ենթարկող աղէտահար արարածները պարմանալիօրէն միշտ անպաւան եղած են կեանքին մէջ եւ, աւելի՛ պարմանալի երեսոյթ, յիմարութեան պատճառներէ բոլորովին պտուկ մարդերն ալ յաճախ մաս կապած են նոր քննադատներ նուաճած հսկաներուն դէմ սարքած գաճաճներու գողիին:

Յարգանք պարտադրող հայրենի մտաւորականներէն Հելտոր Ռոշտունի, Սիւսմանթոյի նուիրած իր ծաւալուն մենագրութեան մէջ, անդրադառնալով այդ հիւանդութեան՝ կը գրէ.

«Հայ բանաստեղծների նորագույն սերունդը, մասնաւորապէս մեծերը՝ Սիւսմանթուն, Վարուժանը, Մեծարենցը, Տէրեանը, Թէքէեանը, Ժողովրդի առաւել առաջադիմական մասի, քաղաքական երիտասարդութեան, նոր մշտաւորականութեան, ուսանողութեան տրամադրութիւնների արտայայտիչներ էին: Նրանց նորարական շարժումը, իբրեւ զրական զարգացման բարձր արտայայտութիւն, ըմբռնում էին ոչ բոլորը: Նրանց հետեւից դժուարութեամբ էր հասնում յատկապէս հին արժէքների չափանիշով կաղապարուած սերնդի

ճաշակը: Այդ է պատահուր, որ նրանց մուտքը գրականութիւն շատերի կողմից ընդունուել է սուրիններով: Ժխտական վերաբերմունքի հանդիպել են բոլորն էլ: Անհասկանալի, անբնական եւ ծիծաղելի են թուացել Մեծաբնեցի եւ Տէրեանի բանաստեղծական մտածողութեան արտասովոր ներութիւնն ու ձևւոր: Ոչ մի արժէք չեն գտել Մեծաբնեցի «Միաժամանակ» եւ «Նոր տաղեր»ի մէջ: «Քեզ իրաւոր երգեր» են կոչել Տէրեանի սթանշելի գործերը: Վարուժանի «Հեքիաթներ» երգերն էլ մէջ տեսել են միայն «կիրք եւ տոհմանք», նրա ռեալիզմը բնութագրել են իբրեւ «թանձրապաշտութիւն», քերթողին եւ նրա հետեւորդներին՝ «հեթանոսական դաճած երգիչներ»:

«Հեքիաթներ»ուն մէջ միայն «կիրք ու տոհմանք» եւ նման թանկութիւններ տեսած նրբամիտ բարոյախօսներէն ոմանք ուղղակիօրէն ճանշնալու համար՝ արտագրեց նաեւ Վարուժանի մէկ կենսագրին՝ Դերենիկ Ճիլմէճեանի հետեւեալ էջը. —

«Իր քանի մը իրապաշտ էջերը չհասկցուեցան: Մարդիկ բառերը սկզբունք մեկնել՝ փոխանակ անոնց ետին պահուած գեղեցկութիւնը փնտռելու:

«Գեղարուեստի»ի մէջ հրատարակուած էր «Ո՛ր լալագէ ն, որ յետոյ չլնքանա» երգեր ուն մաս կազմեց, — հրաւիրեց վայնաստուր:

«Շիրվանզադէ Թիֆլիսի «Հնրիգոն»ին մէջ տպուած յօդուածով մը պոռնկապիտ անուանեց այդ գեղեցիկ քերթուածը ստորագրողը:

«Վարուժան շատ ազդուած էր այդ տողերէն: Ոչ այնքան անոր համար, որ տաղանդաւոր վիպասան մը չէր կրցեր ճանշնալ այդ իրապաշտ քերթուածին մէջ պահուած գեղեցկութիւնը, այլ որովհետեւ արհամարհանք մը կը գտնէր հայ գրողի մը կողմէ ուրիշ գրողի մը հանդէպ: Ու արդարեւ, Շիրվանզադէ իր յօդուածին մէջ «Մի օրն Դանիէլ Վարուժան» բառերով ուրակեր էր «Ո՛ր լալագէ»ի հեղինակը, իբրեւ թէ Վարուժան երէկուան սկսնակը ըլլար, բոլորովին անծանօթ մը, կամ ամէն արժէքէ զուրկ:

«Բացառութեան իրեն Կովկասը ճանչցողները, թէ սահմանէն անդին առհասարակ ծանօթ չեն արեւմտահայ գրականութեան ու դէմքերուն, թէ՛ առհասարակ համար Պարոնեանը միայն կայ իբրեւ արեւմտահայ գրագէտ, թէ՛ Շիրվանզադէն ընդհանրապէս չի կարողար ուրիշ հայ հեղինակներ:

« — Մե՛ղք, — կ'ըսէր Վարուժան, — մենք իրենց ամէնէն աննշան գրո՛ղն իսկ գիտենք:

«Ուրիշ անգամ մը, «Խօսք խառնողներ» լուր բերին իրեն, թէ Աւետիք Իսահակեանն ալ պոռնկապատութիւն կը նկատէ իր իրապաշտ քերթուածներէն մէկ քանին: Աւետի ծանր եկաւ իրեն այդ վէրջը, որովհետեւ բանաստեղծէ մը կու գար: Յաճախ կ'ակնարկէր այդ վէրջին»:

«Հեքիաթներ»ուն դէմ խոժողած վերի խոժողները սովորական անկեր չեն, հանրային կարծիքին մէջ կը գտնուին մտաւորական մակարդակի մը վրայ, կաթողիկոս-պատրիարք եղած են, գրագէտ, բանաստեղծ, բայց որ չկրցան ընկալել իրենց տիրացուական բարոյականը վիրաւորող բառերով մարդկայնական խորունկ թրթիւներ յայտնագործած սրբակենցաղ բանաստեղծին ոգին, ու ատիկա արմատական այն պատճառով անշուշտ, որ անոնց համար «Սրբուհի Մարիամ մայր Աստուծոյ» հովովելու սովորոյթին մէջ սահմանափակուած էր կեանքին իմացումը, արուեստը՝ «Պատուի համար»ի մակարդակով նախնական բարոյախօսութեան մը հետ շփոթուած խեղճուկրակ հասկացողութիւն էր, բանաստեղծութիւնը՝ «Սիրեցի, եարս տալան»ի պէս ողբալի յղացում-հեռացում մը:

Աստուծո՛ւ այսպէս:

Ինչպէ՛ս գնահատել հապա յորովայնէ բանաստեղծ եւ նրբին արուեստագէտ Վահան Տէրեանի ելոյթը, որ առաւելաբար Վարուժանը նկատի ունենալով, կը յատարարէր.

«Թումանեանի մի «Փարվանան» ես չեմ փոխի պոլսահայ յանկարծօրէն հեքանոսացած պոետների արտադրութեանց հետ»:

Այս աղընչութեամբ անելի ապշեցուցիչը Չարենցի հետեւեալ պառանջանքն է.

«...Ռուսահայ այս վարժապետ ինտելիգենտի արեւելից եղբայրը Գորում ալ ժամանակ հրաաւարակում էր «Նաւասարդ»ը, որի ղեկավարները, նախընտանի վարժապետազգեստ թուրքեր ու ասպետներ, զրոյի մի մոզական շարժումով վերադարձնել էին մզտում «Հեթանոսական ժամանակները», աշխինքն՝ ճորտատիրական կարգերում փթթած ցոփութիւնը, շուտաւարժութիւնը եւ այլասերուած հաճոյքը: Նրանք այս բոլորը, ի հարկէ, քողարկում էին եւրոպական տիմբոլիզմից ու ղեկադանսից փոխ վերցրած զանազան սնամէջ ճիւղերով ու ճիւղերով: Եւ ճիւղերով ու ճիւղերով: Նրանք քնարերգում էին «հաճոյքը, ուժը եւ տառապանքը»: — Կանացի հոլանթի մարմիններ եւ ազգական կորով: «Հայ ցեղի ռազմական կորովը», որ իբր շաշէկ է դարբերում՝ հզօր ու անյաղթ: Նրանք երազում էին վերադարձած տեսնել Հայկական Փետրուարական միջնադար՝ իր լեզուական արժանիքով եւ աստուածներով: Եւ կարծում էին, թէ նախակարապետներն են Հայկական նոր Ոսկեդարի, նորադոյն Ռենեսանսի, երբ դարերի մոխրից, աւերից ու աւարից հիւնելով նոր թռիչք է ստանում նախընտանի հանճարը:

Համեմարդ հայկեան, նաւասարդեան

սա տօներում արեւալառ,

— Ա՛յ վերածննդ՝ փլատակներէդ

եւ փառազոյ քնարդ տ'ա: —

«Նաւասարդեան սա տօներուն արեւալառ»... Գիտէ՞ք այս երբ էր գրւում, ընթերցող... 1914 թուականին: Երբ օդում բուրում էր վառօդը, եւ օրը ցերեկով պայթուցիկ նիթեր էին կուտակւում ամբողջ տաճկահայ ժողովրդի գլխին... Լա՛ւ Նաւասարդեան տօները էին եւ ի՛նչ ճարեւալառ ու փառազոյ... Իրօք որ «Հեթանոսական» վախճանալիւ էր, որ ապրում էր հայ ազգայնական մտաւորականութիւնն այդ օրերին: Այդ մտաւորականութեան ճշգրտական կազմակերպութիւնը — «Հայ մարտական կուսակցութիւնը», ճիշդ որ «Հեթանոսական անփութութեամբ ասպետական ծրագրի հրթիռներ էր վառում յիշեալ պայթուցիկ նիթերի շուրջը, մինչեւ որ նրանք բռնկուէին եւ արնախեղդ արին ամբողջ տաճկահայ ժողովուրդը՝ «Հեթանոս» մտաւորականութեան ստուար մասի հետ միասին...»

Չարենց մեծ էր ու չէր կրնար պարագայական փոքրոգութիւններու ծիրին մէջ մնալ, ու Վարուժանի մասին գրեց.

Նրա ձայնը ելնում էր կարծես ժայռերում փորած չրիորից

ե՛ւ մաքուր, ե՛ւ քիչ էր այնքան, ինչպէս ցօղը՝ դաշտերում:

Չարենց այսպէս քաւեց իր մեղքը: Միսնե՛րը սակայն...

ՇԱՀՆՈՒՐԻ ՊԱՐԱՆՈՎ...

Եթէ չենք սխալիր, հայրենի մեր գրողներուն վաթսուական թուականներուն միայն թոյլատրուեցաւ անդրադառնալ, որ Սփիւռքի մէջ կայ Շահան Շահնուր անունով գրագէտ մը եւ կարելի է պարբերաբար խօսիլ աւելորդ գրականութեան ու գաղափարներուն մասին:

Եւ եղաւ այդպէս: Առանձին յօդուածներու թէ Սփիւռքի գրականութեան վերաբերող այս կամ այն գրութեան մէջ սկսան խօսիլ Շահնուրի մասին, որ անո՛ւնաւ, «իրեն համարում էր կամուսնիստներին մօտ կանգնած, կամուսնիստօրէն մտածող մարդ»:

Շահնուրը իրեւ յայդ, իրեւ «կուսմունիտօրէն մտածող մարդ» Հայաստանի ընթերցողներուն ներկայացնող նոյն յօդուածագիրը, հանգուցեալ Հրաչեայ Գրիգորեան, շարունակելով «Սովետական Հայաստանի մասին նրա գիրքորոշումը» յայտայտել, կը գրէր.

«Ինչ «Նահանջը առանց երգի» վէպում ճառարեանցի կերպով խօսում էր Սովետական հայրենիքի մասին»՝ «Մենք ալ հայրենիք մը ունինք. պէտք է պատրաստ կենանք չոն երթալու: Զրադեցէք անով. պէտք է որ ճահիճները չորցնենք, պէտք է որ ջրանցքները բանանք...»:

Նահանջին ծանօթ ընթերցողները գիտեն հարկաւ, որ այս խօսքերը արատանաւած են նահանջողներուն ու նահանջականութեան դէմ մարող հասակով ցցուած վէպին ամէնէն կենդանի հերոսներէն Լօխումի բերնով, զոր հայրենի մեր յօդուածագիրները, մարող տասներհինգ տարիներէ ի վեր, վատառող գատախարակութեամբ սնած Հր. Գրիգորեաններէն մի՛նչեւ յարաբերաբար առողջ գատողութեան տէր տղաքը՝ ներկայացուցին ու կը ներկայացնեն թուրքովին ազնաւորած նկարագրով մը:

«Սովետական գրականութիւն» ամսագրի 1960 Յունիսի թիւին մէջ, Հր. Գրիգորեան կը գրէր Լօխումի մասին.

«Ենչճամ յուզիչ է հեղինակի ստեղծած Լօխումի կերպարը, որը ամբողջովին ազնուութեամբ մարմնացում է, երիտասարդ, որ ճգում է իր ուժերը ծառայեցնել իր հայրենիքի բարգաւաճմանը, որի համար այդ օտար միջավայրը հեղձուցիչ է աւ անտանելի, սակայն ճաշ, գուրկ ուրեւ պայծառ հեռանկարից, ի վերջոյ ընկնում է այդ մոյմ սկեպսիսի գիրկը, վարակում ծայրայեղ յուսահատութեամբ անտուգ՝ ճաշ տարում է հարբեցողութեամբ, ապա օպիումով եւ ի վերջոյ խենթանում, որովհետեւ այլեւս չի կարող «յոյսով ապրել»:

Լօխումը ի վերջոյ այդ կացութեան մատնողը ներքին ախտ մըն էր արդեօք, թէ արտաքին պատճառները որոշիչ դեր ունեցան անոր քայքայման մէջ:

Զմոռնանք քիչ առաջուան խօսքը, Լօխումի պոռթկուն հոստը վատաւերողներուն երեսն ի վեր.

«Մենք ալ հայրենիք մը ունինք. պէտք է պատրաստ կենանք հոն երթալու: Զրադեցէք անով. պէտք է որ ճահիճները չորցնենք, պէտք է քրանցքները բանանք»:

Կը Նշանակէ, թէ պայծառ Հեռանկար ունէ՛ր Լօխում, ունէ՛ր Նոյնիսկ իր «Նայրը», Շահնուրը սովետականացնելու առիթ ընծայող կողմնորոշում մը, որուն ղեկ գտաւ վճատեցնող ուժեր, չկամենք միայն, Նոյնիսիքն սովետները, անոնց երկվիշտ արտերը, երկաթէ վարագործները: Անոնց յուսահատական վերաբերմէն ետքն էր, որ Լօխում յանձնեց ինքզինք յուսահատներու մխիթարութեան, Հաշիշին, գինովութեան, կամաւոր քայքայումին: Այս մասին՝ աւելի ուշ: Նախ՝ ամբողջացնենք Լօխումը սովետականացնող կամ ըստ ինքեան ողորմելի գործօնի մը վերածող Հայրենի գրողներուն կամայականութեանց ցուցակը:

Հր. Գրիգորեանէն երեք տարի ետք, Սո. Թոփչեան կը գրէր «Սովետական գրականութիւն» ամսագրի 1963ի Օգոստոսի թիւին մէջ.

«Նաեանցը սկսած էր պատմութեամբ, եւ ճորտքիւմ չէր, որ մի Լօխում իր հայրենիքում ցրտցցնէր կառուցելու երազանքը պիտի կնքէր հաշիշով ու հոգեբուժարանով»:

Ի՞նչ կը Նշանակէ «նորութիւն չէր»: Լօխումի ճակատին՝ կնքուած էր նման վախճան մը, թէ այդ վիճակին մատնեցին զինք իր երազանքին բախող արտաքին ազդակները, ընդ որս եւ Հայաստան երթալու անոր բաղձանքը արգելող սովետական ստանադարտութիւնը:

Անշուտիկ երրորդ կարծիք մը, այս անգամ «Գարուն» ամսագրի այս տարուան Մարտի թիւին մէջ, ստորագրուած Գառնիկ Գալստեանի կողմէ.

«Զի կարելի նաեւ պահանջել, որ Շահնուրը յստակ կողմնորոշում տար սփիւտֆաշայութեան: Ինքնին քիչ բան չէր արուեստի ուժով ճառացի մատնանշել սփիւտֆաշայ կեանքի տաքիմ տարիներին: Այնուամենայնիւ, հերոսներից մէկը՝ Լօխումը հասկանում է, որ Սփիւտքիմ յանձնարարելի դեպքումը նոր հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի ուղին է»:

Ժիշէ, է, որ Լօխում կը ձգտէր իր ուժերը նուիրել «Հայրենիքի բարահաճմանը», ճիշդ է, որ Շահնուր անոր անձին մէջէն կը շեշտէր ներգաղթի հրամայականը, բայց ճիշդ չէ՝ այդ տրամադրութիւններուն մէջ հեղինակին թէ իր հերոսին մէջ «կոմունիստներն ժողովող մարդներ տեսնել, «Պորճըրդային Հայաստանի ուղին» բռնած ըլլալու իրողութիւններ վերաբերել անոնց, ատիկա ուղղակի՝ չարափոխութիւն է, ընթերցողին անտեղեկութիւնը չա՜հազործել կամ Հասկացողութիւնը արհամարհել է, որովհետեւ Լօխում սովետական կամ խորհրդային բաներէն անկախ տազնապնէր ապրող անձ էր պարզապէս, ներկայացուցիչը Նահանջականութեան Հակառակ շարժումին, բռնկումին, ամէն զնով Հայրենիք վերադառնալու ցանկութեամբ տոչորող ա՛յն խաւին, որուն ապրումներուն, պարտաւորութիւններուն, առնելիք քայլերուն մասին ամէնէն առաջ ու հանգամանաւոր շեշտով մը անդրադարձաւ Դաշնակցութեան վերին մարմնի պաշտօնաթիւրթ «Իրօշակը», իր 1925 Օգոստոսի (թիւ 2) խմբագրականին մէջ, գրելով.

«Այս միջոցին մեծ շունեմէ անլի ստիպողական, եթէ կ'ուզէ՛ք անլի պայմանաւորական խնդիր, քան համախմբումը հայածական ու ցիրցում բազմութիւնների, որոնց 90 առ հարիւր աշխատաւորներ են, գիւղացիներ, աշխատաւորներ ու քանաւորներ: Ամբողջ երիտասարդութիւնը կը ծիւրի հագնուելու ֆիզիքական օտար փախու վրայ: Ինչ որ կը սպառի արտառանգանքի մէջ, կորուստ մըն է ամբողջ աշխատաւորութեան համար, երկրի՛մ համար: Նրեւումի պարտքն է հասկնալ այս ճշմարտութիւնը եւ հասկցնել գայն ո՛ր որ պէտք է, եւ անոր համեմատ լարել իր ուժերը, փնտնոյն տեսն պատասխանատուութեան հրաւիրելով գաղութները»:

Նման ապրումներուն, ժողովումներուն, նման քայլեր առնելու պատ-

րաստ բաղմութիւններուն ներկայացուցիչն էր Շահնուրի ստեղծած Լօխումը, որ ուրիշներու պէս, Հայրենակարօտ տասնեակ հազարաւորներու պէս՝ բախեցաւ սովետական չկառութեան, Խորհրդային Հայաստանի սպիկարութեան (սՄԵՖ ամենայն հայոց կառավարութիւն չեմք), Հայ մարդուն արձիշն ու մակառայիրը արհամարհող քաղաքական ահաւոր հաշիւներու Այսպէս՝

«Թուսական դիսպանտումն է գացեր Լօխում, ցանաքելով, որ Հայաստանի երթալու համար իրեն անցագիր տան: Մերծեր են: Ըսեր է թէ կ'ուզէ իր հայրենիքը ապրիլ. մերծեր են: Ըսեր է թէ կ'ուզէ ֆախիմներու չորացումին եւ ջրանցմներու բացումին համար իր բազմակները տանիլ. մերծեր են: Ըսեր է ֆախիմի թէ կ'ուզէ Արարատը տեսնիլ ու շնչել գայն. ֆախիմ մերծեր են»:

Անտեսել Լօխումի այս արամադրութիւնները եւ ըսել, թէ ան դուրկ էր «լայնաշու երեսնամիլիոն», ըսել, թէ «իւր հայրենիքում քրոնցմներ կառուցեալու երազմներ» հակաադարականօրէն «պիտի կնքէր հաշիւով ու հոգեբու-ժարանով», եւ տակաւին՝ անոր քայքայման պատճառը տեսնել միայն օտար միջավայրին եւ խառնածալին կամակորութեան մէջ, կը նշանակէ պարզապէս անարդար ըլլալ ու նկրտել դիտումաւոր մոռացութեան տալ իր միակ յոյսը, յոյսերուն վերջինը ոչնչացուցած սովետական քարտաւթիւնը (մերծեր են), Հոգեպէս ու Ֆիզիքապէս Հիւծող տարադրի Հայութիւնը իր բախտին ձգելու ոչ-հայրենական խորհրդային կեցութեամբ:

Երբէք զննադատական ուսուիլով ըսուածը նշանակութիւն ունի, ապա ուրեմն պիտի ընդունինք, որ Հայրենակարօտ, Հայրենիքին իր բազմակները խոտաացող Լօխումին Հանդէպ ցուցաբերած սովետական վերաբերման (մերծեր են) ընդմէջէն՝ Շահնուր սուր զննադատութեան կ'ենթարկէր Նոյնի'նքն սովետականը, զայն նկատելով մեր Հիւծումին, քայքայումին, նահանջին գլխաւոր պատասխանատուներէն մէկը, ըսինք տարէն ինչու, իր չկառութեամբ, սպիկարութեամբ, ով գիտէ ուրիշ ի՞նչ պատճառներով, Հայրենիքով...

Վէպի մը հերոսը բնութագրելու տանն պարտաւոր ենք հաշուի առնել անոր պարտմներն ու փորձառութիւնները, այլապէս կարելի չէ գերծ մնալ կողմնակարութեան, կուսակցամոլութեան եւ հաշուախնդրութեան անսրբելի արտաներէն, որոնք Հայաստանի մամուլին մէջ մուծուեցան Հանդուցեալ Հր. Գրիգորեաններու կողմէ եւ լաւ կ'ըլլայ, որ Հանդուցեալ բարբերու մաս կաղմեն նաեւ անոնց կիրարկած երկարամեայ կուրութիւնները, չորդեգրութիւն նորերուն կողմէ, նորերը մեղք են, պատրանքներ կապուած են նորերուն:

Դիտել տանք, որ միայն սոսկական անձերը չեն, որ Շահնուրը Սովետականին» Հետ կապելու անհեթեթութիւնները դուրս տուն, այլ նաեւ պաշտօնական օրգանները, որոնցմէ մէկուն, Սովետական գրականութիւն» ամսագրի 1963 թիւ 8ին մէջ խմբագրութեան կողմէ պաշտօնապէս դուրեցաւ.

«Երկարատեւ հիւանդութիւնը չի ընկնել Շահնուրին. հազիւ ապաքինում» Եւ ջերմօրէն կապուել է իր ժողովրդի եւ հայրենիքին՝ Սովետական Հայաստանի հետ, որի առաջադիմութեան, քարգաւառման ֆիւմարիտ հաւատացեալն է»:

Ըսինք տարէն, որ Շահնուր սովետականին եւ անոր կապուած որեւէ «առաջադիմութեան» Հանդէպ հակաառաջակի որեւէ՝ կեցութեամբ չունէր, թող կրկնէ ի՞նչը, այս անդամ Վահագն Դաւթեանի մէկ զննադատութեան ըրած իր արձագանքին մէջ.

«Ան (Վահագն Դաւթեանը) զիս կը դատապարտէր այն ամբաստանութեամբ, թէ Հայաստանի ներկայ վերելքը, որ ներկայ ժամանակներու նուաճում է, չեմ յիշած եւ ոչ ալ ներբողած եմ 35 տարի առաջ: Արդարեւ, չեմ ներբողած, ինչպէս որ չեմ գովեր, այսօր, Վահագն Դաւթեանի քանաստեղծական տաղանդը: Կարելի չէ գովել այն՝ որ գոյութիւն չունի»:

Վահագն Դաւթեանի տաղանդը ուրանալու պարագան ուրիշ խնդիր է, եւ նիւթ՝ Շահնուրի մէկ գերագնահատումին հետ կազմուելիք բաղդատական պատիկ գրութեան մը:

Բուն հարցը միւսն է հիմա, «հաւատացեալ» Շահնուրի ոչ-հաւատացեալի պնդումը:

«Արգարեւ, չեմ ներբողած», եւ յետոյ՝ պատճառաբանութիւնը:

«Կարելի չէ գովել այն՝ որ գոյութիւն չունի»:

Միշտ այսպէս եղած է Շահնուր: «Նախանց» էն ու ճարտելովներու դաւանանքները՝ հատորէն ետք մանաւանդ, երբ գլխիվայր նետուեցաւ հրապարկագրութեան մէջ, ուրացաւ ո՛չ միայն «Սովետական Հայաստան»ի անուրանալի նուաճումները, այլեւ առհասարակ հայրենիքին համար վաստակած կամ հայրենական տարերքով գրուած բոլոր գործօններն ու գործերը: Այդ մոլուցքը օրգանական էր իր մէջ եւ կը բխէր իր էութիւնը ճշմարտապէս բնութագրող հետեւեալ կեցուածքէն, արտայայտութենէն.

«Այն երկիրը, ուր կը բուսնին մեր իմաստութեան ակռաները, այն երկիրը մեր հայրենիքը կ'ըլլայ: Իմ հայրենիքս Ֆրանսան է»:

Ապրումներու, կեցուածքներու, արտայայտութիւններու այդ ամբողջէն մեկնելով էր, որ խռովեցաւ Շահնուրի գրական ընկերներէն բնորոշագոյնը, Վազգէն Շուշանեան եւ գրեց «Իմ հայրենիքս Ֆրանսան է» գոչող եւ օտարամոլութիւնը դրօշի վերածած օտարամոլին կենսագրովկայր, բնորոշ խորագրի մը տակ՝ «Մարդ մը, որ Արարատ չունի իր հոգւոյն խորը»:

Շուշանեանի այդ գործին ձեռագիրը Հայաստան կը գտնուի այժմ: Դժուար է գուշակել լոյսին գալու անոր բախտը: Առայժմ բաւարարուինք ուրեմն Շահնուրի «Հայաստանասիրութեան» մասին Շուշանեանի տպագրեալ վկայութիւններէն, տպուած՝ «Նայիրի» շաբաթաթերթի 1955ի թիւերուն մէջ:

Շահնուրի «Հայրենասիրութիւնը» չառ ջուր վերցնող խնդիր մըն է եւ կարելի չէ այդ ապրումին կապակցութեամբ անոր պարանով ջրհոր իջնել: Հոգ պարտաւոր են զգոյշ ըլլալ ի՛մ մասնաւորի հայրենի մեր կարմրաւուն գրիչները:

ՎԱՋԳԷՆ ՀՈՒՇԱՆՆԱՆ

Օ Ր Ա Գ Ի Ր

4 ՓԵՏՐՈՒԱՐ 1941

Քանի մը տարի առաջ, Հ. Հահնուրի հետ վերջին հանդիպումներէս մէկուն ընթացքին, Լիւքսէնպուրկի պարտէպին նստարաններուն մէկուն վրայ,— խօսակցութիւն մը նոյն նիւթին շուրջ։

Հապի թորերը բռնուած՝ սկսած էր ցոյց տալ ոսկրային հիւժախտի առաջին նշանները։ Տարրական խոհեմութիւնը կը պահանջէր, որ հետանար Փարիզէն,— այս դաժան քաղաքէն, որ անյազ մոդոքի մը պէս կը խմէ մեզմէ լաւագոյններուն արիւնը։ Մեղմորէն կը ջանայի ըսել իրեն ատիկա։ Ու յետոյ վախճան մը պէտք էր ունենար թէ ոչ՝ մեր պանդխտութիւնը այս երկրին մէջ։

Ապրիլի գաղշ, անուշ յետմիջօրէ մըն էր։ Պարտէպին բոլոր անկիւններէն կը բարձրանար զարնան երգը։

— Ինչո՞ւ մեր ոսկորները ձգել այս երկրին մէջ, ուր որպէս ազգային փոքրամասնութիւն ո՛չ մէկ ապագայ ունինք։ Պէտք է որ ուշ կամ կանուխ վերադառնանք մեր երկիրը...

Իր սուր, բարակ դէմքը դարձուց ինձ։

— Մեր երկիրը,— յարեց անըմբռնելի շեշտով մը։

— Վստահ եմ, որ եթէ դիմում ընես կ'ընդունին քեզ։ Ու կեանքի այս բոլոր սպառնիչ հոգերէն կ'ազատուիս։ Երբեք կուսակցական չես եղած, հետեւաբար «խոտելի անցեալ» չունիս։ Վստահաբար, երբաւէ վերջ, կրնաս երջանիկ ըլլալ, ընտելանալ՝ երկրի մթնոլորտին, դուն քեզ հարապատ զգալ ժողովուրդին հետ...

Չոր, կամակոր վճռակամութեամբ մը ընդմիջեց զիս։

— Երբե՞ք,— ըսաւ ցուրտ հաստառակամութեամբ։

Ապշուրեամբ նայեցայ երեսին։

— Ես եւ խորապէս, անդառնալիորէն արեւմտահայ եմ,— աւելցուցի վայրացած,— բայց ի վերջոյ ապգը վեր է մեր հատուածական նախասիրութիւններէն։ Ու Հայաստանը մեր միակ երկիրն է, մեր ապագան։ Ուշ կամ կանուխ պէտք է, որ վերադառնանք...

— Երբե՞ք,— կրկնեց նոյն յամառութեամբ։

Ու ինձ թուեցաւ, թէ կրնար ոտքը գետին պարնի վայրոյթէն, չփացած մանուկի մը պէս, որ յանդիմանութեան կ'արժանանայ։

20 ՓԵՏՐՈՒԱՐ 1941

... Կարելի՞ է միթէ երեւակայել Հահնուր մը երեսանի մէջ։ Մէկը՝ որ Սկիւտարի նախապատերազմեան հայութենէն դուրս ուրիշ ժողովուրդ չի ճանչնար, ինչպէ՞ս կրնայ սիրել այն առողջ ու շէշտող երիտասարդութիւնը, որ հայկական գիւղերէն կ'իջնէ երեսան, իր ցուրտ թոքերով, որ բացի մեր լեռներուն հովերէն ուրիշ օդ չեն շնչած։ Հահնուր կրնայ միթէ անոնց խօսիլ Փոլ Պուրժէնէ, որ Ֆրանսայի մէջ իսկ լոկ բրածոյ մըն է եւ Հարլ Մորասէն, որուն դիակին վրայ պիտի չուպէին իսկ միպել մեր երկրին տղաքը։ Այս պատճառաւ է, որ Հահնուրներն ու իր նմանները երբեմիցէ չեն ենթադրեր իսկ, թէ մեկնումի քաղցր ժամը կրնայ հնչել։ Ու պանզուածային ներգաղթի հետանկաբը լոկ մտահոգութիւն կը պատճառէ իրենց։

ՎԱՋԳԷՆ ՀՈՒՇԱՆՆԱՆ

Բանաստեղծական իր սեռից տաղանդին հետ, Աբրահամ Ալիբեկյան սեռից ժառանգութիւն ժը ապրիցաւ յառկալէն Ֆրանսական գրականութեան ժեներուն հետ, ժառանգութեամբ ու սիրով պայմանաւոր թարգմանչական ուղարկաւ էջեր փոխադրելով ժեր գրականութեան: Այդ ժառանգութեան գինն էր Կիլիկիոյ Ափսիանէրէն ճիւղներն անունին տակ հասնելու իր փունջ ժը ընթերցողին ընծայելու փառաք:

Վերջերս, Վնուկտական գրականութիւնն (Պոետա) աժապարիս ժէջ, շնորհակալ փրանսական դասական գրականութեանն անունին տակ՝ Ալիբեկյան ներկայացուց թարգմանչական տասներկու նմայնիք, տանուած՝ ժն. գորէն ժինէն ներկայ գորսուն սկիզբը Ֆրանսական գրականութեան ժէջ յայտնուած ժենանուն բանաստեղծներին:

Ալիբեկյան ընտրած այդ կտորներէն շատեր թարգմանուած են տակէ տակ, բայց գտական գործերը, վերջապահակաւ իրենց բախին հետ՝ կը թուի, թէ վերաթարգմանակաւ բախաւ ժըն ալ ունին, եւ լա՛ւ որ ունին, որովհետեւ այդ հանգամանքը, թարգմանչական արուեստին տընթեր՝ կը բացայայտէ նաեւ տուեալ լեզուին հնարաւորութիւնները:

Մկնկելով այդ երկու պատճառներէն, երեք ընդդիմելու հետ՝ հետագայ էջերուն կու տանք ժարբեր բանաստեղծներու կողմէ կատարուած տնոնց թարգմանութիւնները:

Արթիւր Բէճգոյնի ճաշնաւորներուն երբորք թարգմանիչը, ցաւօք, չկրցանք տուալ:



ԱՐԲԱՆԱՎ՝ ԱԼԻԲԵԿՅԱՆ

ԶԿՆԿՈՒԼԸ

Յանախ նաւատորմներ, զուարճութեան համար,
Զկնկալ են բռնում՝ ծովային մեծ թռչուն,
Որ, ճամբի յոյլ ընկեր, հետեւում է խաւար
Վիհի լայն երախով սահող նաւի ուղուն:

Բայց հագիւ են նրան դնում կամբջակին,
Կապոյտի այդ արքան՝ խալուտ ու ձախաւեր,
Կախում է ոգորմուկ թելերն իր անագին
Ու քարշ տալիս կողքին, ինչպէս ներմակ թիւր:

Դեռ քիչ առաջ չքնաղ ուղեւորն այս ճախարն
Ի՛նչ տխրեղծ է հիմա, ծիծաղելի, նղնիմ.
Մէկը ծխամորճով իր կտուցն է գրգռում,
Իսկ միւսը, կաղալով, հեզմում թեւատ խեղճին:

Բանաստեղծն է նման ամպերի իշխանին,
Որ հողմն է քամահարում եւ նետը թռնալի.
Ախարկան՝ երկրում, սոյլ ու հայիւն չորս դիմ,
Թելերն իր տիտանեան չնն թողնում, որ քայլի:

Թարգմ. Աբրահամ Ալիբեկյան

CHARLES BAUDELAIRE

L'ALBATROS

Souvent, pour s'amuser, les hommes d'équipage
 Prennent des albatros, vastes oiseaux des mers,
 Qui suivent, indolents compagnons de voyage,
 Le navire glissant sur les gouffres amers.

A peine les ont-ils déposés sur les planches,
 Que ces rois de l'azur, maladroits et honteux,
 Laissent piteusement leurs grandes ailes blanches
 Comme des avirons trainer à côté d'eux.

Ce voyageur aillé, comme il est gauche et veule!
 Lui, naguère si beau, qu'il est comique et laid!
 L'un agace son bec avec un brûle-gueule,
 L'autre mime, en boitant, l'infirme qui volait!

Le poète est semblable au prince des nuées
 Qui hante la tempête et se rit de l'archer;
 Exilé sur le sol au milieu des huées,
 Ses ailes de géant l'empêchent de marcher.

ԱԼԳԱԹՐՈՍԸ

Նաւաստիները յաճախ իբր գրօսանք կը բռնեն
 Ալպաթրոսներ՝ ծովերու թռչունն աշդ մեծ ու շքեղ,
 Որոնք կուգան, ուղեկից ընկերներու պէս մէկտեղ
 Շոգեմաւին հետ սահող դառն անդնդոց վրայէն:

Սակայն հագիւ թէ դրուած տախտակներուն վրայ գետնի,
 Այդ կապոյտի արճաններն՝ ամօթահար, անճարակ՝
 Խեղճուկ մը վար կը ձգեն թւերնին լայն ու ներմակ,
 Զերթ ֆովերնէն ֆաշֆշուող, չուրք աւուղ զոյգ մը թի:

Այս ուղեւորն օդաչու ի՞նչ ճախլիկ է ու անկամ.
 Ան քիչ մ'առաջ աշնման վեհ, ինչպէ՛ս տրգեղ է հիմա.
 Մին ծխամորճ մը խրոբլ կըտուցին մէջ կը ջանայ,
 Կը կաղայ միւսն հեղին պէս, որ կը թռէ՛ր յարածամ:

Կը նմանի բանաստեղծն այս իշխանին ամպերու՝
 Որ փոթորիկին մէջ կ'երթայ եւ է նետին անտարբեր.
 Ահաւորական հոգին վրայ՝ ուրկէ կ'ելլեն հայհաւչներ,
 Անոր թւերն հսկայի զինք կ'արգիլեն փախելու:

ARTHUR RIMBAUD

VOYELLES

A noir, E blanc, I rouge, U vert, O bleu: voyelles,
Je dirai quelque jour vos naissances latentes:
A, noir corset velu des mouches éclatantes
Qui bombinent autour des puanteurs cruelles,

Golfes d'ombre; E, candeurs des vapeurs et des tentes,
Lances des glaciers fiers, rois blancs, frissons d'ombelles;
L pourpres, sang craché, rire des lèvres belles
Dans la colère ou les ivresses pénitentes;

U, cycles, vibrations divins des mers virides,
Paix des pâtis semés d'animaux, paix des rides
Que l'alchimie imprime aux grands fronts studieux;

O, suprême Clairon plein des strideurs étranges,
Silences traversés des Mondes et des Anges:
— O L'Oméga, rayon violet de Ses Yeux!

ԶԱՅՆԱԻՈՐՆԵՐ

*Յրաններէն ձայնաւոր տառերու տեղ զրուած են
Հայերէն համապատասխաններ: Ը՝ ի-ի փոխարէն:*

*Քերթուածին ներդաշնակութիւնն ու կշռոյթը պա-
հելու համար, Հայերէն ձայնաւորները պէտք է կար-
դալ իրենց ձայներով միայն եւ ոչ թէ անուններով:
Այսպէս — Ա.Ի.Ը. եւ ոչ թէ Այբ, Ինի, Ըթ:*

Ա սեւ, է ձիւն, Ի շէկ, Ը մորն, Օ խած, Տայներ,
Պիտի օր մը պատմեմ ես ձեր ծնունդը քաջուն:
Ա՛ սեւ ձրփակ խրոխ բոցափայլ մաններում
Բզգացող զարշուքեանց շուրջը՝ խորշ մթաստուր.

Է՛ անբիծ գարշի, քոչնոց վարմ, ճիգակուռ
Ամենի սառնակեւ, զինջ արփայ, ու սարսուռ.
Ի՛ ծիրանի, արիւն, ու ծիծաղ շրթներու
Աղուոր, պիրկ՝ ցասումէ կամ զոյումէ՝ գիմով.

Ը՛ շրջան, քրթագում, կանաչափայլ ովկիան,
Առօտավայր անգորր, ուր կ'արածին հօտեր,
Անդորր՝ ուսումնաբեկ մակտաներու խոհում.

Օ՛ գերագոյն Շեփոր, հնչիւն տարօրինակ,
Լուսիւն, գոր կ'ակօսեն Աստղեր ու Հրեշտակք՝
Օմեղա մեղեսիկ, Օ՛ շողմ իր Աշխարհում:

Թարգմ. Ս. Սահակեան

ԶԱՅՆԱԻՈՐՆԵՐԸ

Ան սեւ է, Ե-ն՝ սպիտակ, Ի-ն կարմիր է, Ու-ն՝ կանաչ,
Օ-ն՝ կապույտ է: Ո՛վ տառե՛ր, ձեր ծնունդը կը պեղեմ:
Ա-ն՝ սեւ, փրչոտ սեղմիրան, բիր բանների բոցալանջ,
Որ բզգում են գարշահոտ աղտեղութեան շուրջ դժխեմ:

Ե-ն՝ վրանի ու մէզի մաքրութիւն, հե՛ղ թագաւոր,
Սառցադաշտի սէզ տէգեր, հովանոցի մեղմ ալիք.
Ի-ն՝ գոջացեալ արքեցման կամ գայրոյթի մէջ բուռը
Քրքիջ չճնաղ շրթների, փսխած արեան նազսղիք:

Ու-ն՝ կանաչացած ծովերի վսեմ քրթիռ ու ծփանք,
Հալուական կեանք մարգերի, կնիռների անդորրանք,
Որ ալիմիան է ցանում նակատներին իմաստուն:

Օ-ն՝ վեհ Շեփոր, ուր ճռում գոյութիւններ կան վայրի,
Հրեշտակներ ու Աստղեր այցելած խոր լուսիւն՝
Օ-ն՝ օմեզան, երկնագոյն նառագայթն Ի՛ր աչքերի:

Թարգմ. Արրահամ Ալիքեան

ԶԱՅՆԱԻՈՐՆԵՐ

Ա սեւ, է ներմակ, Ի կարմիր, Իւ կանաչ, Օ կապույտ. ձայնաւորներ
Պիտի յայտնեմ օր մը ձեր կայուն ծնունդը.
Ա, գունեղ ճաններու մագոտ սեւ իրան
Որոնք կը բզգան դաժան գարշահոտութիւններու շուրջ.

Շուքերու ծովածոց. է, վրաններու եւ շոգիներու անարատութիւն,
Հպարտ սառցակոյտներու նիզակներ, ներմակ թագաւորներ, ամպագիներու
սարսուռ.

Ի, ծիրանագոյն, թքնուած արին, գեղեցիկ շրթունքներու ծիծաղ
Բարկութեան կամ խղճահարազ արքեցութիւններու մէջ:

Իւ, շրջանակներ, խաժ ծովերու աստուածային քրթաւորումներ,
Կնիռների շանուած արօտատեղիներու խաղաղութիւն, կնիռներու
խաղաղութիւն

Ջոր քիմիագիտութիւնը կը կնէ՛ ժրաջան մեծ նակատներուն,

Օ, գերագոյն Փռ, յորդապեղ տարօրէն զիլ ձայներով,
Աշխարհներու եւ հրեշտակներու խաչաչեւուած լուսիւններ.
Օ Օմեկան, Իր Աչքերուն մանիշակագոյն նառագայթ:

. . .

PAUL VERLAINE

CHANSON D'AUTOMNE

Ա Շ Ն Ա Ն Ե Ր Գ

Les sanglots longs
Des violons
De l'automne
Blessent mon cœur
D'une langueur
Monotone.

Tout suffocant
Et blême, quand
Sonne l'heure,
Je me souviens
Des jours anciens
Et je pleure;

Et je m'en vais
Au vent mauvais
Qui m'emporte
Deçà, delà
Pareil à la
Feuille morte.

●

Հեծֆերն երկար
Ջութակներում
Աշնաթով
Կը խոցեն սիրտն
Իմ միալար
Թախիծով...

Եւ շնչասպառ
Տժգոյն երբոր
Հնչէ ժամ,
Կը յիշեմ հին
Օրերն անցեալ
Եւ կու լամ:

Այսպէս կ'երթամ
Ես տարուբեր
Չար հովէն,
Տերեւին պէս
Որ քորշումած
Է արդէն...

Թարգմ. Ա. Երկաթ

Հեծֆերն անհուն
Ջութակներում
Աշնային
Կը խոցեն զիս
Տալով սրտիս
Թալուկնին:

Եւ շնչահատ
Համակ գունատ՝
Երբ գայ ժամ,
Կը յիշեմ ես
Իմ հին օրերս
Ու կու լամ:

Ես կ'երթամ յար,
Ուր հովեր չար
Զիս տանին,
Հոս հոն՝ նըման
Գոս, անկենդան
Տերեւին

Թարգմ. Զ. Ասատուր

●

Աշնանային
Ջութակ ու վին
Հեծելով,
Սիրտս եմ խոցում
Նայն կսկծում
Թալուկով:

Երբ ժամն է խուլ
Հնչում, ես քոյլ
Ու տժգոյն,
Հին օրերն եմ
Յիշում ու մեղմ
Հեկեկում:

Եւ գնում եմ
Չար հողմի դէմ,
Որ ինձ յար
Քշում է հեգ
Տերեւի պէս
Դալկահար:

Թարգմ. Աբրահամ Ալիքեան
A.R.A.R.@

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ՝

Յ. ԿԱՐԱՊԵՆՅ

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԻ ՀԻՆ ՍԵՐՄՆԱՑԱՆՆԵՐԸ

(ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ)



Ն. ՉԱՐԽՈՒՏԵԱՆ

ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՓԵՐԸ

(Վ.Է.Պ)



Ա. ԳԱՐԱԼԷՔԵԱՆ

ԱՆՎԵՐՋԱԿԷՏ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

(ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ)

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ	40 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	20 ՏՈԼԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ	4 Լ. ՈՍԿԻ

باكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد اوتين كارنيك قزانيان

PAKINE

REVUE MENSUELLE

LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԽՄԲԱԳԻՐ

Գ. ՄԱԳԵԱՆ

Հեռագրային՝ 296898

Վարչութեան հասցէ

K. ARARADIAN
Rue Selim Boustani
Beyrouth -- Liban